

**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ**  
**YEREVAN STATE UNIVERSITY**

**ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ**  
**ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

**ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА**  
**ФИЛОЛОГИЯ**

**JOURNAL OF YEREVAN UNIVERSITY**  
**PHILOLOGY**

**ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ № 2**

**«Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի  
բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր»  
Հանրապետական գիտաժողովի նյութեր (27 մարտի, 2024թ.)**

**СПЕЦИАЛЬНЫЙ ВЫПУСК № 2**

**Материалы республиканской конференции  
«Грабар как источник для обогащения словарного запаса и  
терминологии современного восточноармянского языка»  
(27 марта 2024 г.)**

**SPECIAL EDITION № 2**

**Articles of the Republican Conference  
“Grabar as a Source for Enriching the Vocabulary and Terminology of  
the Modern Eastern Armenian Language”  
(March 27, 2024)**

Տպագրվում է ՀՀ ԿԳՄՍՆ ԲԿԳԿ-ի կողմից ֆինանսավորման  
երաշխավորված «Գրաբարը՝ որպես արդի արևելահայերենի  
բառապաշարի հարստացման և տերմինաշինության աղբյուր»  
գիտական թեմայի (21T-6B030) շրջանակում:

«Բանբեր Երևանի համալսարանի. Բանասիրություն» հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 2010 թվականից: Երավահաջորդն է 1967-2009 թթ. հրատարակված «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի  
Журнал «Вестник Ереванского университета. Филология» выходит три раза в год. Издается с 2010 года. Правопреемник издававшегося в 1967-2009 гг. журнала "Вестник Ереванского университета"  
Three issues of "Journal of Yerevan University. Philology" are published annually. The journal has been published since 2010. It is the successor of "Journal of Yerevan University" published in 1967-2009

**ԽՍԲԱԳՐԱՎՈՐ ԽՈՂՀՈՒՐ.**  
**РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ:**  
**EDITORIAL BOARD:**

**Գլխավոր խմբագիր՝**

**Главный редактор:**

**Editor-in-chief:**

**Ավետիսյան Լևոն** (բ.գ.թ., րոց,  
*l.avetisyan@ysu.am*)

**Аветисян Левон** (к. фил. н., доц.)

**Avetisyan Levon** (Ph.D. in Philology,  
Associate Professor)

**Ավետիսյան Յուրի** (բ.գ.դ.,

*սլոն.Ֆ., yuriavetisyan@ysu.am*)

**Аветисян Юрий** (д. фил. н., проф.)

**Avetisyan Yuri** (Sc. D. in Philology,  
Professor)

**Չափաչարյան Սեդա** (բ.գ.դ., սլոն.Ֆ., ԳԱԱ  
*թղթակից անդամ, sedagasparyan@ysu.am*)

**Гаспарян Седя** (д. фил. н., проф., член. кор.  
НАН РА)

**Gasparyan Seda** (Sc. D. in Philology,  
Professor, NAS RA Corresponding Member)

**Չաստվաչյան Վիկտոր** (բ.գ.դ., սլոն.Ֆ.,  
*viktorkatvalyan@mail.ru*)

**Катвалян Виктор** (д. фил. н., проф.)

**Katvalyan Victor** (Sc. D. in Philology,  
Professor)

**Չափաչարյան Շուշան** (բ.գ.թ., ԱՄՆ,  
*shushankarapetian@gmail.com*)

**Карапетян Шушан** (к. фил. н., США)

**Karapetyan Shushan** (Ph.D. in Philology, USA)

**Հովակիմյան Արմեն** (սլոն.Ֆ., խմբագրի  
*տեղակալ, բ.գ.թ., a.hovakimyan@ysu.am*)

**Овакимян Армен** (зам. ответ. редактора,  
к. фил. н.)

**Hovakimyan Armen** (Deputy Managing  
Editor, Ph.D. in Philology)

**Սարգսյան Վարդան** (ս.գ.թ., ԱՄՆ,  
*varny1@yahoo.com*)

**Маттеосян Вардан** (к. ист. н., США)

**Matteosyan Vardan** (Ph.D. in History, USA)

**Մարտիրոսյան Հրաչ** (բ.գ.թ., Նիդերլանդներ,  
*hrchmartirosyan@gmail.com*)

**Мартirosян Грач** (к. фил. н., Нидерланды)

**Martirosyan Hrach** (Ph.D. in Philology,  
Netherlands)

**Մուրադյան Գայանե** (բ.գ.դ., սլոն.Ֆ.,  
*g.murad@ysu.am*)

**Мурадян Гаяне** (д. фил. н., проф.)

**Muradyan Gayane** (Sc. D. in Philology,  
Professor)

**Ոսկանյան Վարդան** (բ.գ. թ., սլոն.Ֆ.,  
*vardan.voskanean@ysu.am*)

**Восканян Вардан** (к. фил. н., проф.)

**Voskanyan Vardan** (Ph.D. in Philology,  
Professor)

**Չոլաքյան Հակոբ** (ս.գ.դ., Միջին,  
*hagopcholakian@hotmail.com*)

**Чолакян Агоп** (д. ист. н., Сирия)

**Cholakyan Hakob** (Sc. D. in History, Syria)

**Պետրոսյան Դավիթ** (բ.գ.դ., սլոն.Ֆ.,  
*davidpetrosyan@ysu.am*)

**Петросян Давид** (д. фил. н., проф.)

**Petrosyan David** (Sc. D. in Philology,  
Professor)

**Քալանտարյան Ժենյա** (բ.գ.դ.,  
*սլոն.Ֆ., j.kalantaryan@ysu.am*)

**Калантарян Женя** (д. фил. н., проф.)

**Kalantaryan Zhenia** (Sc. D. in Philology,  
Professor)

ԼԵՉՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ  
ЯЗЫКОЗНАНИЕ  
LINGUISTICS

<i>Աննա Աբաջյան</i> – Գրաբարի եզրույթների առանձնահատկությունները և նրանց դրսևորումները արդի արևելահայերենի եզրույթային համակարգում .....	5
<i>Анна Абаджян</i> – Особенности терминов грабара и их проявления в системе терминов современного восточно-армянского языка	
<i>Anna Abajyan</i> – Characteristic Features of Grabar Terms and Their Manifestations in Modern Eastern Armenian Term System	
<i>Աննա Աբաջյան, Անահիտ Յուզբաշյան</i> – Գրաբարի եզրույթների դրսևորումները Գրիգոր Նարեկացու «Մատենանոցի երկերգութեան» երկում .....	15
<i>Анна Абаджян, Анаит Юзбашян</i> – Проявления терминов грабара в произведении «Книга скорби» Григор Нарекаци	
<i>Anna Abajyan, Anahit Yuzbashyan</i> – Manifestations of Grabar Terms in Grigor Narekatsi’s “Book of Lamentations”	
<i>Աշոտ Գալստյան</i> – Երկխոսության կառուցվածքը և տեսակները .....	22
<i>Ашот Галстян</i> – Структура и типы диалога	
<i>Ashot Galstyan</i> – Dialogue Structures and Types	
<i>Հովհաննես Զարարյան</i> – Հ.-Ե. *(A)U(E)- «Ճիշտ, հավատարիմ» արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն .....	29
<i>Оганес Закарян</i> – Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня *(a)u(e)- «истинный, верный, преданный»	
<i>Hovhannes Zakaryan</i> – The Etymology of Several Armenian Words Derived from PIE Root *(a)u(e)- «True, Faithful»	
<i>Յուրի Ավետիսյան</i> – Կրկնասեռության իմաստային-քերականական հիմունքները .....	37
<i>Юрий Аветисян</i> – Семантико-грамматические основы двузалоговости	
<i>Yuri Avetisyan</i> – Semantic and Grammatical Foundations of Double-Voicing	
<i>Սուսաննա Գրիգորյան, Նաիրա Պարոնյան</i> – Արդի արևելահայերենի բառապաշարի հարստացումը ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում չվկայված բառերի .....	50
<i>Сусанна Григорян, Наира Паронян</i> – Обогащение словарного запаса современного восточноармянского языка за счет слов, не встречающихся в «Новом словаре древнеармянского языка»	

*Susanna Grigoryan, Naira Paronyan* – The Enrichment of the Vocabulary of Modern Eastern Armenian According to the Words not Found in "New Haikazian Language Dictionary"

*Հայկանուշ Մեսրոպյան* – Գրաբարի հնչյունական և բառապաշարային որոշ իրողություններ հայերենի բարբառներում..... **61**

*Айкануш Месропян* – Фонетические и лексические явления армянских диалектов связанные с грабаром

*Haykanush Mesropyan* – Phonetic and Lexical Phenomena of Armenian Dialects Related to Grabar

*Նարինե Դիլբարյան* – «Մարդկություն» հասկացության բնիկ բառային միավորները Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմություն հայոց» գրքում..... **70**

*Нарине Дилбарян* – Исконные единицы концепта «человечество» в книге Епископа Ухтанеса «История Армении»

*Narine Dilbaryan* – The Native Units of the Concept of “Humanity” in the Book of Bishop Ukhtanes “History of Armenia”

*Սիրարփի Շարապետյան* – Ծիսական առարկաների հինհայերենյան անվանումների բառակազմական կաղապարները ..... **83**

*Сирарпи Карапетян* – Словообразовательные модели древнеармянских названий ритуальных предметов

*Sirarpi Karapetyan* – Word-Formation Patterns of Ancient Armenian Names of Ritual Objects

*Քարինե Միքայելյան* – Գրաբարը ժամանակակից արևելահայերենի եզրութային բառաշերտի աղբյուր ..... **94**

*Карине Микаелян* – Грабар как источник терминального пласта слов современного восточноармянского языка

*Karine Mikayelyan* – Old Armenian (Grabar) as a Source of Developing Terms in Modern Eastern Armenian Vocabulary

*Վարդուհի Բարսեղյան* – Իրավունքի իմաստային դաշտի բառերը ըստ «Վանոնք Յովհաննու Մանդակունույ հայոց կաթողիկոսի» ..... **104**

*Вардуи Барсегян* – Слова семантической области права согласно "Правилам армянского католикоса Ованнеса Мандакуни"

*Varduhi Barseghyan* – The Words of the Semantic Field of Law According to the "Rules of Armenian Catholicos Hovhannes Mandakuni"

## ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒՅԹԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ \* 

*Երևանի պետական համալսարան*

Սույն ուսումնասիրությունը նվիրված է գրաբարի եզրույթների և բառ-եզրույթների ձևավորման քննությանը և դրանց դրսևորումներին արդի արևելահայերենի եզրույթային համակարգում: Քննվում է այն հենքը, որի միջոցով բառը դառնում է եզրույթ կամ բառ-եզրույթ: Կատարված հետազոտության արդյունքում հանգում ենք այն եզրակացության, որ եզրույթների և բառ-եզրույթների ձևավորմանը գրաբարում նպաստում են դրանց հետևյալ հատկանիշները.

- 1) **բազմիմաստությունը**՝ բառագիտական մակարդակում. բառերը իրենց իմաստներից յուրաքանչյուրի հենքով դառնում են որևէ բնագավառ ներկայացնող ենթակառուցի՝ մանրահամակարգի միավոր,
- 2) **համանունությունը**, որով տվյալ բառը ձևավորում է այդ հասկացությունը արտահայտող տարբեր բառ-եզրույթներ,
- 3) **հումանշությունը**՝ պայմանավորված նրանով, որ տվյալ իմաստով յուրաքանչյուր ենթաշերտի միավոր բազմիմաստ է նաև իբրև եզրույթ կամ բառ-եզրույթ:

Սա անքակտելիորեն փոխկապակցված մի շղթա է, որի յուրաքանչյուր բաղադրիչ ունի բառիմաստ, եզրույթային իմաստ՝ տվյալ բառիմաստի հենքով, դրսևորում է տարարժեքություն՝ խոսքիմասային հենքով, ունի ոճական արժեք, որով վերոհիշյալ հատկանիշներին գումարվում են նաև մատենագրի գրչի լեզվաոճական յուրահատկությունները: Գրաբարյան բառ-եզրույթներն ու եզրույթներն էլ դարձել են այն առանցքային հենքը, որի վրա ձևավորվել, զարգացել և շարունակում է զարգանալ արդի արևելահայերենի եզրույթային համակարգը:

\* **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

**Анна Абаджян** – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Anna Abajyan** – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ [abajyan.anna@ysu.am](mailto:abajyan.anna@ysu.am) ORCID: <https://orcid.org/0000-0003-3728-0862>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.06.2024

Գրախոսվել է՝ 12.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

**Բանալի բառեր** – բառ-եզրույթ, եզրույթ, բազմիմաստություն, համանունություն, հոմանշություն, տարարժեքություն, բառիմաստ, խոսքիմասային իմաստ, ոճական արժեք, գրաբար, արևելահայերեն

Գրաբարի բառապաշարը ենթարկվել է իմաստային, ստուգաբանական, բառակազմական խորաքննիչ վերլուծության, մինչդեռ դրա կարևորագույն բաղադրիչը կազմող գրաբարյան եզրույթները, որոնք ունեն իմաստային, կառուցվածքային հետաքրքիր առանձնահատկություններ, ամբողջական ընդգրկմամբ գրաբարագիտության մեջ մնացել են ոչ լիարժեք ուսումնասիրված: Նրա բազմակողմանի քննությունը կարևորվում է թե՛ համաժամանակյա, թե՛ տարժամանակյա դիտանկյուններից, քանի որ ակնառու է դարձնում գրաբարի և արդի արևելահայերենի եզրույթների անմիջական կապը: Գրաբարի եզրույթային համակարգը այն հենքն է, որի վրա ձևավորվել է արդի արևելահայերենի եզրույթային համակարգը, և վերջինիս հետազոտության ժամանակ բազում խնդիրներ բացատրելի կարող են լինել միմիայն գրաբարի եզրութահամակարգի ամբողջական քննության տիրույթում:

Ինչպես նշում է Է. Աղայանը, գրաբարի եզրույթային համակարգը մանրահամակարգերի՝ ենթակառուցների կանոնակարգված իրողություն է: Նրա արժևորման համար կարևոր են դառնում այն առանցքային լեզվական իրողությունները, որոնք հիմք են հանդիսացել գրաբարի եզրույթների՝ իբրև հիմնաշերտի, ենթաշերտերի ձևավորման համար<sup>1</sup>: Դրա արդյունքում էլ գրաբարի եզրույթային համակարգը հարուստ կառույց է՝ իր իմաստային ենթաշերտերով՝ հասարակական-քաղաքական, իրավական-վարչական, ռազմական, ընտանեկան, կենցաղային, տարածքային բաժանումներ արտահայտող, մշակութային, հոգևոր՝ կրոնական բովանդակության, որոնց առանձին-առանձին քննությունը վկայում է գրաբարի եզրույթներին բնորոշ բազմաշերտությունը:

Սույն ուսումնասիրության մեջ ներկայացրել ենք գրաբարի եզրույթների ձևավորման հիմնակետերը, այսինքն՝ այն հենքը, որի միջոցով բառը դառնում է եզրույթ կամ բառ-եզրույթ:

Լեզվաբանության մեջ եզրույթը (տերմին, գիտաբառ) ունի հստակ սահմանում. դա այն բառն է (կամ բառակապակցությունը), որն արտահայտում է խիստ որոշակի որևէ գիտական հասկացություն: Այն իր գործածության ոլորտում սովորաբար մենիմաստ է<sup>2</sup>:

Է. Աղայանի բնորոշմամբ՝ բառերը բաժանվում են երեք խմբի. 1) բառեր, որոնք եզրույթ չեն (ոչ տերմինային բառեր), 2) բառեր, որ և՛ բառ են, և՛ եզրույթ (տերմինային բառեր), 3) բառեր, որոնք միայն եզրույթ են (տերմիններ)<sup>3</sup>: Երեք

<sup>1</sup> Տե՛ս Է. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Եր., 1964, էջ 333-334:

<sup>2</sup> Տե՛ս Հ. Պետրոսյան, Ս. Գալստյան, Թ. Ղարազյուլյան, Լեզվաբանական բառարան, Եր., 1975, էջ 292:

<sup>3</sup> Տե՛ս Է. Աղայան, նշվ. աշխ., էջ 320:

դեպքում էլ ունենք բառ, ուստի՝ բառիմաստ (բառագիտության մակարդակում), խոսքիմասային իմաստ (ձևաբանական մակարդակում), շարահյուսական և ոճաբանական մակարդակներում՝ տվյալ միավորը՝ իբրև նախադասության մեջ գործառվող միավոր և ոճաստեղծ բաղադրիչ: Եթե գրաբարի եզրույթային համակարգը վերլուծենք և ուսումնասիրենք այս ամբողջության մեջ, կունենանք գրաբարի եզրույթային համակարգի միավորների ձևավորման պատկերը:

*Բառ, բառ-եզրույթ, եզրույթ* հարաբերակցության տիրույթում պիտի կարելի վորել մի հանգամանք. բառապաշարի մեջ եզրույթները կարևոր բաղադրիչ են ցանկացած լեզվում: Երկրորդ տեղում են բառ-եզրույթները, որոնք, ըստ կիրառական առանձնահատկությունների, շարահյուսական մի կառույցում բառ են, մեկ այլ կառույցում՝ եզրույթ, որով և դրսևորվում են նրանց խոսքակազմիչ առանձնահատկությունները: Երրորդ խումբը այն բառերն են, որոնք եզրույթ չեն կարող դառնալ՝ պայմանավորված իրենց բառիմաստով: Բառ-եզրույթները և եզրույթները իրարից տարբերվում են նրանով, որ վերջիններս, ի տարբերություն բառ-եզրույթների, չեզոք բառապաշարին չեն անցել և կիրառվում են միայն գործառական որոշակի ոլորտում: Նշենք, որ բառապաշարի այս երեք բաղադրիչները՝ բառերը, բառ-եզրույթները և եզրույթները, ունեն բառիմաստով պայմանավորված և նրա հենքով ձևավորված քերականական՝ ձևաբանական մակարդակում դրսևորվող խոսքիմասային իմաստ: Այսպես՝ գրաբարի **դուզնաքեայ** բառը, որը հատկանիշ է ցույց տալիս, որևէ բնագավառի եզրույթ չի կարող դառնալ: Այն բառ է և դրսևորում է ածական-մակբայ տարածեքություն՝ մի դեպքում ցույց տալով առարկայի հատկանիշ, երկրորդ դեպքում՝ գործողության հատկանիշ: Իբրև ածական՝ նշանակում է՝ 1) չնչին, քիչ, նվազ, 2) հասարակ, աննշան, անշուք, իսկ իբրև մակբայ՝ մի քիչ, թեթևակիորեն<sup>4</sup>: Նշենք, որ բառերի՝ բառ-եզրույթ արժևորման հիմքում ընկած է նրանց բառային իմաստը: Գրաբարում բառ-եզրույթների և եզրույթների ձևավորմանը մեծապես նպաստում է բառերի բազմիմաստությունը: Սա կարևոր դրդապատճառներից մեկն է, որը հիմք է դառնում, որ տվյալ բառը իր իմաստներից յուրաքանչյուրով ձևավորի որևէ բնագավառի եզրույթ՝ տվյալ հիմնաշերտի իմաստային շրջանակում:

Բերենք օրինակներ՝ **\*պարեխ** բառն ունի հետևյալ իմաստները՝ 1) ժայռ, ապառաժ, 2) լեռան ցցված մասը, 3) անդունդ, վիհ, 4) (կրոն.) Քրիստոսի գերեզմանի վրա դրված մեծ քարը (ԳԲԲ, 406)<sup>5</sup>: Վերջին իմաստով այն կրոնական բովանդակության բառ-եզրույթ է գրաբարում, իսկ արևելահայերենում կորցրել է այդ իմաստը:

<sup>4</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, Եր., 2003, էջ 110: Այսուհետև՝ ԼԽԳԲԲ:

<sup>5</sup> Բառերի մեկնությունները տրված են ըստ Ռ. Ղազարեանի «Գրաբարի բառարանի» (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000): Այսուհետև՝ ԳԲԱ, ԳԲԲ: Բառարանում մեկնությունները դասական ուղղագրությամբ են տրված:

**\*Նշան** բառը, որը փոխառություն է պահլավերենից, ունի 12 իմաստ՝ 1) նիշ, նշանակ, 2) կնիք, դրոշմ, հետք, 3) կետ, գիծ, 4) հրաշք, սքանչելագործություն, 5) դրոշ, դրոշակ, 6) զինվորի նշան՝ սովորաբար արծվի պատկերով, տարբերիչ նշան, 7) (եկեղ.) Քրիստոսի խաչը իբրև դրոշ, 8) նշանադրություն, նշանույթ, 9) երկրաչափական կետ, 10) կենտրոն (բոլորակի), 11) փոքրիկ տառանշան, նշանախեց, նշանագիր, 12) նետի նպատակ, նպատակակետ, նշանակետ (ԳԲԲ, 289): 4-րդ և 7-րդ իմաստներով այն կրոնական բովանդակության եզրույթ է, 8-րդ իմաստով՝ հասարակական հարաբերություններ արտահայտող, 9-րդ և 11-րդ իմաստներով՝ մաթեմատիկական և պատկերագրության, 5-րդ, 6-րդ և 12-րդ իմաստներով՝ ռազմական եզրույթ: Ըստ որում 12-րդ իմաստով հոմանիշ է դառնում **\*նշաուակ** բառ-եզրույթին, որը նույնպես բազմիմաստ բառ է (ԳԲԲ, 290): Այն ունի հետևյալ իմաստները՝ 1) նետի նպատակ, նպատակակետ, նշան, 2) խայտառակության, անարգանքի՝ ծաղրանքի ևն առարկա, խաղք ու խայտառակությունը բազմության առաջ, խայտառակ, քստմնելի տեսարան, 3) անձ. խայտառակված, խայտառակ, 4) նշանավոր, անվանի նշանաձիգ:

Դիտարկենք նշված բառ-եզրույթների իմաստային առանձնահատկությունները արդի արևելահայերենում:

**\*Նշան** – արևելահայերենում նույնպես բազմիմաստ բառ է. ունի 12 իմաստ<sup>6</sup>. դրանցից առանձնացնենք *թիրախ, նշանադրություն, զինանշան, հավատյալ, նշանաբան* եզրույթները, որոնք գալիս են գրաբարից: *Նշավակ* բառ-եզրույթի համար ևս Աշոտ Սուքիասյանի «Հայերենի հոմանիշների բառարանում» նշված են *նախատինք, թիրախ* նշանակությունները, որով նրանք իբրև եզրույթ և բառ էին գրաբարում:

Գրաբարի եզրույթներին բնորոշ է նաև **բազմիմաստությունը**՝ տվյալ եզրույթների իմաստային շրջանակում: Դիցուք՝ **\*առակ**-ը գրականագիտական եզրույթ է, որի համար ԳԲԱ-ն (էջ 169) նշում է հետևյալ իմաստները՝ 1) արձակ կամ չափածո այլաբանական ստեղծագործություն՝ բարոյախոսական բովանդակությամբ, 2) մթին, անհասկանալի, դժվարիմաստ ասացվածք, ստեղծված, հանելուկ, 3) օրինակ, նմանություն, նախատիպ, 4) ասացվածք-առած, 5) ծանակ, նշանակ, նախատինք, խայտառակություն, 6) անձ. խայտառակ: 4-րդ իմաստով այն հոմանիշ է **առած** եզրույթին:

**\*Առած**-ի համար ԳԲԱ-ն (էջ 168) առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) աստվածային պատգամ՝ սպառնալիք, հայտնություն, երկնային ներշնչում, տեսիլ, 2) կարճ՝ իմաստալից ասացվածք, 3) հարվածք, խոցվածք, վերք: 1-ին իմաստով՝ կրոնական բովանդակության, 2-րդ իմաստով՝ գրականագիտական եզրույթ է: Ըստ որում՝ 1-ին իմաստով հոմանիշ է դառնում **տեսիլ** եզրույթին,

<sup>6</sup> Տե՛ս Ա. Սուքիասյան, Հայերենի հոմանիշների բառարան, Եր., 2003, էջ 831: Այսուհետև՝ ԱՍՀՀԲ:



որը նույնպես բազմաբովանդակ բառ-եզրույթ է: **Առած** եզրույթի համար Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանում» առանձնացված են հետևյալ իմաստները. իբրև գոյական՝ 1) աստվածային վճիռ, պատգամ, գուշակություն. այս իմաստով կրոնական եզրույթ է. օրինակը՝ «Առած բանի Տեառն ի վերայ Իսրայելի» (Զաք., ԺԲ, 1), 2) առակ, ասացվածք. այս իմաստով այն գրականագիտական եզրույթ է. օրինակը՝ «Տէր առ ի վերայ դորա զառած» (Դ Թագ., Թ, 25), 3) հարված, վերք, սպի. այս իմաստով այն բառ է. օրինակը՝ «Բժշկեցան ի մեզ առածք կամակոր թշնամույն» (ՆՀԲ):

**\*Առակ** բառ-եզրույթի համար նշված են հետևյալ իմաստները. 1) այլաբանական խոսք, խրատ (գրականագիտական եզրույթ), 2) հանելուկ (գրականագիտական եզրույթ), 3) օրինակ, ձև, եղանակ (այս իմաստով այն բառ է). օրինակը՝ «Նախ առակքն լինիցին, եւ ապա եկեցե՛ ճշմարտութիւնն» (Ագաթ., 214), 4) ժողովրդական զրույց, առած (գրականագիտական եզրույթ), 5) խայտառակություն, նշավակ, նախաստինք: Վերոբերյալ բոլոր իմաստներով այն գոյական է: Իսկ իբրև ածական՝ ունի *խայտառակ եղած, նշավակ դարձած* իմաստը (ԼԽԳԲԲ, էջ 63): Ինչպես տեսնում ենք, այն բազմիմաստ բառ-եզրույթ է:

Արդի արևելահայերենում **\*առած** և **\*առակ** բառ-եզրույթների եզրույթային և բառային իմաստները ձևավորվել են գրաբարի հիման վրա:

**\*Առած** – ասացվածք, առակ (ժող.) (կարճ, իմաստալից խոսք): Ըստ հոմանիշների բառարանի՝ այն գրականագիտական հասկացություն է (ԱՍՀՀԲ, 85): **\*Առակ**-ը արդի հայերենում նույնպես գրականագիտական եզրույթ է՝ հոմանիշ **առած** -ին, իբրև բառ՝ ունի *խայտառակություն* նշանակությունը, ինչը ժառանգել է գրաբարից: Այս հենքով էլ կազմվել են **\*առակ** կամ **առած դառնալ** – *խոսակցության ծաղրի առարկա դառնալ, խայտառակվել*, **\*առակ** կամ **առած դարձնել** (կամ **շինել**) – *խայտառակել* դարձվածքները:

Գրաբարում առկա է նաև նրանց՝ **հանելուկ** իմաստը: Արդի արևելահայերենում **հանելուկ**-ը մեկնաբանվում է հետևյալ իմաստներով: **Հանելուկ**-(գրկն.) առեղծված (բանահյուսության տեսակ, որն է առարկայի կամ երևույթի այլաբանական նկարագրությամբ՝ նրանց անվանումը որոշելու համար), 2) (փխբ.) հարց, խնդիր (կնճռոտ, անհայտ, անորոշ) (ԱՍՀՀԲ, 590):

Մեկ այլ օրինակ՝ **\*բուն**- փոխառություն է պահլավերենից: Բազմիմաստ է և այս հենքով ձևավորում է տարբեր բառ-եզրույթներ: Այն ունի հետևյալ իմաստները. 1) ծառի վերգետնյա մասը մինչև ճյուղերը (բուսաբանության բնագավառի բառ-եզրույթ), 2) երկայնաձև ձող, որ ծառայում է իբրև բռնատեղ աշտանակի, նիզակի ևն (ռազմական բնագավառի բառ-եզրույթ), 3) փխբ. սկիզբ, սկզբնավորություն, 4) հիմք, արմատ, խորք, 5) բանակ. բանակի գունդ (ռազմական բառ-եզրույթ), 6) սերնդի նախահայրեր, նախորդ սերունդներ (հասարակական հարաբերություններ արտահայտող բառ-եզրույթ), 7) հիմնական, էական, հարազատ, ճշմարիտ (բառ է) (ԳԲԱ, էջ 297):

Արդի հայերենում 5-րդ իմաստը չի պահպանվել, փոխարենը առկա է

րուն/ծառաբուն մասնագիտական բառը (ԺՀԼԲԲ, 1, էջ 208):

**\*Հիմն** բառը հին հայերենում ունի՝ 1) պատի հիմք, 2) փխբ. հենարան, սկիզբ, հիմունք, պատճառ (ԳԲԲ, էջ 70) իմաստները, որոնք ընդարձակվելով ճյուղերի են բաժանվել հետագայում: Արդի հայերենում *հիմք*-ն ունի 17 իմաստ, որոնցից մի քանիսը եզրույթներ են՝ լեզվաբանական, մաթեմատիկական, քիմիական, տեխնիկական, ճարտարապետական (ԺՀԼԲԲ, 1, էջ 70):

Գրաբարի եզրույթային համակարգում առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում եզրույթների **տարարժեքությունը**:

Տարարժեքությունը լեզվական կարևորագույն իրողություն է, որը ձևավորվում է բառիմաստի և խոսքիմասային իմաստի հարաբերության տիրույթում՝ արտացոլելով լեզվի մակարդակների անխզելի կապը: *Բառիմաստ-ձևաբանական իմաստ- շարահյուսական՝ գործառական արժեք* անխզելի լեզվական տիրույթում են դրսևորվում տարաստիճան տարարժեքային միավորները: Բնականաբար, տարարժեքությունը բնորոշ է նաև գրաբարի բառ-եզրույթներին և եզրույթներին: Տարարժեքության ցանկացած դրսևորման հիմքում ընկած են տվյալ բառային միավորի գործառական դրսևորումները, որոնցում կարևորվում է նրա խոսքիմասային իմաստը, որի հիմքում էլ ընկած է տվյալ բառային միավորի բառիմաստը: Այս շղթայում կարևորվում է յուրաքանչյուր օղակի կապը մյուսների հետ, որոնք ամբողջացնում են այդ շղթան՝ բառիմաստ – խոսքիմասային իմաստ – շարահյուսական՝ գործառական կիրառում՝ այդ իմաստների հենքով, այլև ոճաբանական առանձնահատկություն՝ բնորոշ մատենագրի գրչին: Այժմ ներկայացնենք տարարժեքություն դրսևորող մի քանի բառ-եզրույթներ և եզրույթներ<sup>7</sup>:

**\*Աղետ** – դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները՝ 1) վիշտ, տանջանք, թշվառություն. օրինակը՝ «Յետ փոքու ժամանակի աղետք անցին զամենեքումբք» (Խոր., 126), 2) ցավալի դեպք, պատահար, փորձանք, չարիք, դժբախտություն. օրինակը՝ «Մեծ էր ատելութիւնն և անհնարին վերջին աղետ» (Բ Թագ., ԺԳ, 15), 3) գութ, կարեկցանք, սրտացավություն (օրինակը՝ «Ծանիցուք գութ աղետից Քրիստոսի» (ՆՀԲ)): Իբրև *ածական*՝ ունի ցավալի, աղետավոր նշանակությունը. օրինակը՝ «Աղետ տարակոյս ապականութեան» (Եփր. Եղ.) (ԼԽԳԲԲ, 20)<sup>8</sup> և հոմանիշ է *պատահար, վթար, ահափետ* եզրույթներին:

**\*Ահափետ** եզրույթը դրսևորում է ածական-գոյական տարարժեքություն:

<sup>7</sup> Հիմք ենք ընդունել Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանի» մեկնությունները: Անհրաժեշտության դեպքում ներկայացնում ենք նաև մատենագրական բնագրային վկայումները՝ ըստ բառարանի: Նշենք, որ բառարանն ընդգրկում է գրաբարի բառապաշարում տարարժեքության տարաստիճան դրսևորումները հիմնավորող փաստագրական հարուստ նյութ, որ ներկայացնում է գրաբարով ինքնուրույն ու թարգմանական բազմաժանր մատենագրության բառապաշարը:

<sup>8</sup> Բնագրային օրինակների համառոտագրությունների ցանկը տե՛ս ԼԽԳԲԲ-ի 370-381 էջերում:

Իբրև *ածական*՝ ունի *ահ ու սարսափ տարածող, սոսկալի, ահավոր* նշանակությունը. օրինակը՝ «Ահագին ահափետ օրհասք մահու հասուցանէին Բարայելեան գնդին» (Յհ., Կթ, 169): Իբրև *գոյական*՝ նշանակում է *ահաբեկող դիպված, պատահար՝ երևույթ*. օրինակը՝ «Հուզեցան չար իրակությունք եւ սասանությունք այլ եւ գործք անարժանք և ահապետք մահուց» (Յհ., Կթ, 8) (ԼԽԳԲԲ, 19):

**\*Պատահար** – ԳԲԲ-ն նշում է հետևյալ իմաստները՝ 1) պատահմունք, պատահար, դիպված, դեպք, անցք: Ունի նաև *հանգամանք, բախտ* իմաստները (ԳԲԲ, 188), 2) *չարաբախտ դիպված, պատահմունք, դժբախտ դեպք, փորձանք*, պատահար-ը հումանիշ է *աղէտ, ահափետ* բառերին, որոնք հասարակական հարաբերություններ արտահայտող եզրույթներ են: *Պատահար* բառը գրաբարում նշանակում է նաև *արկած*: Ըստ ԳԲԱ-ի՝ **\*արկած** բառ-եզրույթն ունի հետևյալ իմաստները. 1) Որ ընկնում է՝ վրա է գալիս, վրա է թափվում (արկած ջրոյ, հրոյ նն), 2-րդ իմաստն է *անակնկալ դեպք, դիպված, պատահմունք*, 3-րդ իմաստը՝ *դժբախտ դեպք, փորձանք, պատահար* (ԳԲԱ, էջ 214): 2-րդ և 3-րդ իմաստներով այն հումանիշ է *աղէտ, ահափետ, պատահար* եզրույթներին:

Արդի արևելահայերենում հումանիշ են **պատահար, աղէտ, վթար** եզրույթները, *դժբախտ դեպք* իմաստով: ԳԲԲ-ն **վթար** եզրույթի համար նշում է 1. վնաս, վտանգ, 2. վիատություն, հուսահատություն (էջ 524) իմաստները: Արդի հայերենում ի մասնավորի այն հաճախադեպ է ճանապարհատրանսպորտային պատահարի իմաստով: Կիրառվում է նաև *մեխանիզմի աշխատելու ժամանակ առաջացած վնասվածք* իմաստով (ԺՀԼԲԲ, էջ 1389):

**\*Աղերս** – այս բառ-եզրույթը, բազմիմաստությամբ պայմանավորված, դրսևորում է գոյական-ածական երկաստիճան տարարժեքություն (տե՛ս ԼԽԳԲԲ, 19-20): Իբրև *գոյական*՝ նշանակում է՝ 1) թախանձագին խնդրանք, աղաչանք, պաղատանք, ողորձանք, 2) գույթ, ողորմություն, 3) իր արարքի՝ վարքագծի ջատագովություն, ինքնարդարացում, 4) մեկին սիրաշահելու համար արված ընծա, նվեր, 5) պարզև, շնորհ, 6) կապ, շփում, հարաբերություն, 7) հույս, իսկ իբրև *ածական*՝ աղերսական, աղերսալի, մեղմ: ԺՀԼԲԲ-ում (էջ 24) **աղերս**-ի գրաբարյան 6-րդ իմաստը՝ *կապ, առնչություն*, ներկայացված է որպես համանուն-2, մնացյալ իմաստներից փոփոխվել են 2-րդը և 3-րդը՝ վերածվելով հետևյալներին՝ 2. ընդհանրապես խնդիրք, խնդրանք, 3. (մինչև) նվերկաշառք, որ խնդիրքը ներկայացնելուց առաջ տալիս էին դատավորին՝ իշխանավորին նն հոգուտ իրենց տրամադրելու համար: Ածականական իմաստը համարվում է հնացած:

**\*Ամբոխ** – այս բառ-եզրույթը նույնպես դրսևորում է գոյական-ածական տարարժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները. 1) բազմություն, ժողովուրդ, հրոսակախումբ, 2) աղմուկ, աղաղակ, 3) իրարանցում, խռովություն: Իբրև *ածական*՝ նշանակում է խիտ, հոծ, խոնաված. օրինակը՝ «Երազ ժողովեցեն զօրքն՝ ամենայն նաեւ Արգամ ամբոխ հետեւակալ» (Խոր., 169) (ԼԽԳԲԲ, 21):

**\*Այր** – դրսևորում է գոյական-ածական տարաբժեքություն: Իբրև *գոյական*՝ ունի հետևյալ իմաստները. 1) արբունքի երիտասարդ տղամարդ, 2) ամուսին, 3) զինվոր, մարտիկ: Իբրև *ածական*՝ ունի կտրիճ, արի, քաջ նշանակությունը (ԼԽԳԲԲ, 21): Ըստ ԺՀԼԲԲ-ի՝ *զինվոր* իմաստը ժամանակակից հայերենում վերացել է, *տղամարդ*, *ամուսին* իմաստներն էլ, որքան էլ զարմանալի է, համարվում են հնացած: **Այր**-ը ունի համանուն և՛ գրաբարում, և՛ աշխարհաբարում՝ *քարանձավ*, *քարայր*: Մակայն արևելահայերենում ձեռք է բերել նոր իմաստ՝ *խոռոչ*, հիվանդագին պրոցեսից հյուսվածքների քայքայման հետևանքով որևէ օրգանի մեջ առաջացած փոքրիկ դատարկություն, որը բժշկագիտական եզրույթ է (էջ 24):

Ինչպես վերը նշեցինք, գրաբարի բառապաշարի մեջ մտնող բազում բառեր բազմիմաստ են, որը և հիմք է տալիս գրաբարի եզրույթային համակարգին բնորոշ կարևորագույն մի հանգամանքի՝ **եզրույթների և բառ-եզրույթների համանշտությանը**: Ճիշտ է, եզրույթը հիմնականում արտահայտում է մեկ հասկացություն<sup>9</sup>, սակայն գրաբարի եզրույթային համակարգի միավորների բազմաշերտությունը շատ դեպքերում ելակետ է դառնում այս կամ այն բառի գնահատման համար իբրև եզրույթի, որի վկայությունն են վերոնշյալ բառ-եզրույթների մեկնությունները: Մա մի իրողություն է, որ դիտարկելի է ցանկացած եզրույթի իմաստային շրջանակը քննելիս: Այսպես՝ **\*տաշտ** (փոխառություն պահլավերենից) բառ-եզրույթն ունի 5 իմաստ՝ 1) գավաթ, բաժակ, թաս, 2) կոնք, լագան, 3) կողով, քթոց (պտուղների), 4) փոսի մեջ թաղված արմատները (որթատունկի), 5) ձիու գավակը պաշտպանող գրահ՝ իբրև զարդ (ԳԲԲ, էջ 541): Առաջին երեք իմաստներով այն կենցաղային տարբեր իմաստներով բառ-եզրույթ է, 4-րդ իմաստով՝ հողամշակման բնագավառի եզրույթ, 5-րդ իմաստով՝ ռազմական եզրույթ:

Դժվար չէ նկատել, որ գրաբարի եզրույթային համակարգին բնորոշ բազմաշերտությունը պայմանավորված է բառի բազմիմաստությամբ, և, ահա, իմաստներից յուրաքանչյուրով էլ այն դառնում է եզրույթային տարբեր ենթակառուցների միավոր: Դիտարկենք **\*փող** բառ-եզրույթը: ԳԲԲ-ն նշում է երկու համանուն նշանակություններ. **փող**<sup>1</sup>-ը իբրև մարդու կառուցվածքի բաղադրիչի իմաստով բառ, նաև միջանցք (շինության մեջ) իմաստը: **Փող**<sup>2</sup>՝ երկրորդ՝ համանունի համար ԳԲԲ-ն առանձնացնում է հետևյալ իմաստները՝ 1) եղջերափող՝ նվագելու գործիք, շեփոք, 2) փիսբ.՝ առաքյալները իբրև ազդարարող, քարոզող, 3) որոշ առարկաների խողովակաձև մասը, խողովակ, 4) եղեգ: 1-ին իմաստով այն երաժշտական բնագավառի եզրույթ է, 2-րդ իմաստով՝ շինարարական, իսկ նրա համանուն միավորը ձևավորում է մարդու անատոմիական կառուցվածքի ենթաշերտը ներկայացնող եզրույթը, փոխաբերական իմաստով գործառույթում այն կրոնական բովանդակության եզրույթ է:

<sup>9</sup> Տե՛ս Լ. Եզեկյան, Ոճագիտություն, Եր., 2003, էջ 34:

Արդի հայերենում ունենք հետևյալ պատկերը. **փող**<sup>1</sup> - դրամ (ևս 7 իմաստ), **փող**<sup>2</sup> - հրազենի խողովակաձև մաս (ևս 6 իմաստ), **փող**<sup>3</sup>-1) պարանոց, վիզ, 2) կոկորդ, 3) կերակրափող. Վերջին համանունի իմաստները տրված են *հնացած* նշումով (ԺՀԼԲԲ, էջ 1530):

Բերենք մեկ այլ օրինակ:

**Ամեն** բառը գրաբարում դրսևորում է համանունություն հետևյալ իմաստներով. **\*ամեն**<sup>1</sup>- այս դեպքում առկա է նաև ածական-գոյական տարաբժեքություն. իբրև *գոյական* նշանակում է ամենքը, բոլորը, ամեն բան, ամեն ինչ, իբրև *ածական* նշանակում է ամեն, բոլոր, ամբողջ, համայն: **Ամեն**<sup>2</sup>- փոխառություն է երբայերենից և ունի հետևյալ իմաստները՝ 1. խոսքի վերջում՝ եղիցի, թող լինի, կատարվի. կրոնական բովանդակության եզրույթ է և 2. խոսքի սկզբում՝ ստույգ, ստուգապես, ճշմարիտ, արդարև, իսկը (ԳԲԱ, էջ 47). այժմ վերջին իմաստը վերացել է: **Ամեն**<sup>3</sup>- այս դեպքում այն համանուն է *ամեն, ամենա* նախածանցին, որով կազմվում են տարբեր նշանակություններով բառեր գրաբարում: ԳԲԱ-ն նշում է հետևյալները. 1) բայարմատի հետ՝ *ամենաբեր*-ամեն ինչ բերող, ձևավորում է խնդիր՝ *ամեն ինչ* իմաստով, 2) գոյականի հետ գործածվելիս դառնում է հատկացուցիչ, օրինակ՝ *ամենահայր*՝ ամենքի հայրը, *ամենաձև*՝ ամեն տեսակի ձև ունեցող, 3) երկրորդ՝ բառին տալիս է սաստկական իմաստ. *ամենագեղեցիկ*՝ շատ գեղեցիկ, ամենագեղուն՝ խիստ լեցուն (ԳԲԱ, 10): Վերջին կետում նշված օրինակներում է *ամեն*-ը գիտակցվում է ածանց՝ բառակազմական ձևույթ, մյուսներում արմատ է:

Այսպիսով, կատարված քննությամբ մենք եզրահանգում ենք, որ եզրույթների և բառ-եզրույթների ձևավորմանը գրաբարում նպաստում են դրանց հետևյալ հատկանիշները. 1) **բազմիմաստությունը**՝ բառագիտական մակարդակում. բառերը իրենց իմաստներից յուրաքանչյուրի հենքով դառնում են որևէ բնագավառ ներկայացնող ենթակառուցյի՝ մանրահամակարգի միավոր,

2) **համանունությունը**, որով տվյալ բառը ձևավորում է այդ հասկացությունը արտահայտող տարբեր բառ-եզրույթներ,

3) **հոմանշությունը**՝ պայմանավորված նրանով, որ տվյալ իմաստով յուրաքանչյուր ենթաշերտի միավոր բազմիմաստ է նաև իբրև եզրույթ կամ բառ-եզրույթ:

Սա անխախտ փոխկապակցված մի շղթա է, որի յուրաքանչյուր բաղադրիչ ունի բառիմաստ, եզրույթային իմաստ՝ տվյալ բառիմաստի հենքով, դրսևորում է տարաբժեքություն, ունի ոճական արժեք, որով վերոհիշյալ հատկանիշներին գումարվում են նաև հեղինակի լեզվի ոճական առանձնահատկությունները:

Հինհայերենյան բառ-եզրույթներն ու եզրույթներն էլ դարձել են այն առանցքային հենքը, որի վրա ձևավորվել, զարգացել և շարունակում է զարգանալ արդի արևելահայերենի եզրույթային համակարգը:

**АННА АБАДЖЯН – Особенности терминов грабара и их проявления в системе терминов современного восточно-армянского языка.** – Данное исследование посвящено образованию терминов и слов-терминов в древнеармянском языке и их проявлениям в терминологической системе современного восточноармянского языка, исследуется основа, на которой слово становится термином или слово-термином.

Проведенное исследование позволило прийти к выводу, что образованию терминов и слов-терминов способствуют следующие явления:

- 1) полисемия на лексическом уровне - слова, исходя из отдельных своих значений, становятся единицами микросистемы какого-либо направления науки,
- 2) омонимия, с помощью которой данное слово образует разные слова-термины, выражающие необходимые понятия,
- 3) синонимия, на основе того, что каждая лексическая единица является многозначимой и как термин, и как слово-термин.

Все это образует неразрывно связанную цепочку, где каждый компонент имеет и лексические, и терминологические значения, которые выявляют поливалентность словарных форм, их принадлежность к разным частям речи. Таким образом, выявляются лингво-стилистические характеристики, присущие языку авторов. Термины и слова-термины грабара стали той ключевой основой, на которой формировалась, развивалась и продолжает развиваться терминологическая система современного восточноармянского языка.

**Ключевые слова:** *слово-термин, термин, полисемия, омонимия, синонимия, поливалентность, смысл слова, частиречевое значение, стилистическая значимость, грабар, восточноармянский язык*

**ANNA ABAJYAN – Characteristic Features of Grabar Terms and Their Manifestations in Modern Eastern Armenian Term System.** – The given study deals with the examination of the formation of Grabar terms and word-terms and their manifestations in the term system of Modern Armenian. The focus of the study is the basis through which a word becomes a term or a word-term form is examined. In the result of the research carried out we arrived at the conclusion that the following features contribute to the formation of terms and word-terms.


- 1) **Polysemy** at the level of lexicology. Based on each of their meanings, words become a unit of a sub-structure representing any field or a micro-system;
- 2) **Homonymy**, by which the given word forms various word-terms expressing that concept,
- 3) **Synonymy**, conditioned by the fact that in the given sense a unit of each sub-layer is polysemantic also as a term or a word term. This is an inextricably interlinked chain, each component of which has a lexical meaning, a term meaning based on the given lexical meaning, demonstrates polysemancy based on the part of speech basis, has a stylistic value by which the linguistic stylistic features and peculiarities of the chronicler's pen are added to the features mentioned above. Grabar word-forms and terms have become the key basis on which the term system of Modern Eastern Armenian was formed, developed and continues to develop.

**Key words:** *word-term, term, polysemy, homonymy, synonymy, polysemancy, word meaning, part-of-speech meaning, stylistic value, Grabar, Eastern Armenian*

## ԳՐԱԲԱՐԻ ԵԶՐՈՒՅԹՆԵՐԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒ «ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ» ԵՐԿՈՒՄ

ԱՆՆԱ ԱԲԱՋՅԱՆ 

*Երևանի պետական համալսարան*

ԱՆԱՀԻՏ ՅՈՒԶԲԱՇՅԱՆ\* 

Գրաբարով ինքնուրույն և թարգմանական գրականության բառապաշարը ենթարկվել է իմաստաստուգաբանական և ոճական խորաքննին ուսումնասիրության, սակայն բառապաշարի կարևորագույն բաղադրիչը՝ եզրույթային համակարգը, դեռևս ուսումնասիրման կարիք ունի: Գրաբարի եզրույթների իմաստաստուգաբանական և կառուցվածքային հատկանիշների մեր կողմից կատարված քննությունը ցույց է տալիս, որ դրանց ուսումնասիրությունը անհրաժեշտ է կատարել համակարգի ամբողջական ընդգրկմամբ: Գրաբարի եզրույթային համակարգի ամենաակնառու հատկանիշը բազմաշերտությունն է. յուրաքանչյուր ենթաշերտ ունի իր առանձնահատկությունները իմաստառճային և գործառական դիտակետերում, երբ կարևորվում են նաև տվյալ երկի բովանդակությունը և հեղինակի արվեստը գրաբարի բառապաշարի իմաստային ներբերանգների ընդգրկման և դրանց միջոցով որոշակի ոճական արժեքների ստեղծման գործառություն: Ի վկայումս վերոհիշյալի՝ սույն հոդվածը ներկայացնում է գրաբարի եզրույթների իմաստառճային հատկանիշները Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկում: Հեղինակը կիրառել է իմաստային տարբեր շերտեր և ենթաշերտեր ներկայացնող եզրույթներ, ինչպես՝ կենդանիների անուններ, կենցաղային իրերի, մետաղների անվանումներ, մարմնի՝ հոգևոր և ֆիզիկական կառույցի իմաստով եզրույթներ՝ գործառված ուղիղ և փոխաբերական իմաստներով (վերջիններս նաև դառնում են դարձվածային արտահայտությունների և դարձվածքների հիմնաբառեր), կրոնական, իրավական, ռազմական բովանդա-

\* **Աննա Աբաջյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի վարիչ

**Анна Абаджян** – доктор филологических наук, профессор, заведующая кафедрой истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Anna Abajyan** – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of History of the Armenian Language and General Linguistics

Էլ. փոստ՝ [abajyan.anna@ysu.am](mailto:abajyan.anna@ysu.am), ORCID: <https://orcid.org/0000-0003-3728-0862>.

**Անահիտ Յուզբաշյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

**Анаит Юзбашян** – кандидат филологических наук, доцент

**Anahit Yuzbashyan** – Candidate in Philology, Associate Professor

Էլ. փոստ՝ [anahit.yuzbashyan@ysu.am](mailto:anahit.yuzbashyan@ysu.am), ORCID: <https://orcid.org/0009-0000-5256-3735>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.06.2024

Գրախոսվել է՝ 13.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

կության եզրույթներ: Պետք է ընդգծել, որ տիրապետող են Աստծուն մեծարող եզրույթները, որոնք հիմնականում դիպվածային են՝ առկայացված տվյալ խոսքային տիրույթում:

**Բանալի բառեր** – եզրույթ, խոսքային տիրույթ, ոճաստեղծ բաղադրիչ, ռազմական իմաստի եզրույթ, ապաշխարություն, մեղք, հակադրության հիմնաբառ, եզրույթի ուղիղ և փոխաբերական իմաստ, մարդագետ, աստվածաբան

Նարեկացիագիտությունը բազմակողմանի և խորաքնին ուսումնասիրության է ենթարկել մեծն Գրիգոր Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկը՝ տալով նրա գրականագիտական և լեզվաոճական առանձնահատկությունների բարձրագույն գնահատականը<sup>1</sup>: Մասնավորապես բազմակողմանիորեն քննվել է երկի բառապաշարը, սակայն գրաբարի եզրույթների արժևորումը ինչպես գրաբարով մատենագրության մյուս երկերում, այնպես էլ «Մատեան»-ում առայսօր չի տրվել: Երկում գրաբարի եզրույթների դրսևորումների վերլուծությունը առանձին հետաքրքրություն է ներկայացնում՝ պայմանավորված երկի բովանդակությամբ: Գրաբարի եզրույթները բազմաբովանդակ են յուրաքանչյուր գլխում: Դրանք հետազոտելիս կարևորվում են հետևյալ հանգամանքները.

1) Տվյալ գլխի և ենթագլուխների բովանդակությունը: Հեղինակը ասելիքը տպավորիչ և ներագույն է դարձնում տարբեր բովանդակության եզրույթների գործառույթով:

2) Յուրաքանչյուր եզրույթի գործառույթը կարևոր ոճական արժեք է ստանում երկի ցանկացած հատվածում, այսինքն՝ արժևորման համար կարևորվում է այն խոսքային տիրույթը, որտեղ դրանք գործածվում են:

Դիտարկենք բազմաթիվ օրինակներից մի քանիսը: Լ գլխի Գ ենթագլուխը մարդկային էության բնորոշումն է՝ կառուցված հակադրությունների հենքով: Հիմնաբառերը որոշակի եզրույթներ են.

«**Ընպանակք** երկու յերկուսին ձեռին,  
Մինն՝ արեամբ, եւ միւսն՝ կաթամբ...

**Բաժակք** գոյգ առ երկուս բերմունս,  
Մինն՝ արտասւր, եւ միւսն՝ ծծումբ» (էջ 365)<sup>2</sup>:

**Ընպանակ** և **բաժակ** եզրույթները կենցաղային իրերի անվանումներ են: **Բաժակ** եզրույթը Նարեկացին գործածում է տարբեր խոսքային տիրույթներում: Օրինակ՝ «**Բաժակդ** երկնաւոր արեան կենարարիդ Զերկիրս խնամեալ

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Ղազինյան**, Գրիգոր Նարեկացի, Բանաստեղծական արուեստը, Անթիլիաս-Լիբանան, 1995: **Մ. Աբեղյան**, Հայոց հին գրականության պատմություն, գիրք առաջին, Պէրոյթ, 1955: **Մ. Մկրտչյան**, Հայ հին գրականության պատմություն, Եր., 1976 ևն:

<sup>2</sup> Բնագրային օրինակները՝ ըստ **Գ. Նարեկացի**, «Մատեան ողբերգութեան» ակադեմիական հրատարակություն, Եր., 1985:



աուրն լուսոյ» (էջ 640): «Զարտաքնայարդար **բաժակն** անմաքուր» (էջ 350): Դիմելով Աստծուն՝ Նարեկացին խնդրում է գթասրտություն, լույս, քաղցրություն, խորամտություն:

Առ նախդրով է կառուցված **Ե** ենթագլուխը: Այն նույնպես կազմված է հակադրությունների սկզբունքով. «Առ վշտագնելոյս մխիթարութիւն՝ **բաժակ քո**, Առ նեղելոյս ընդարձակութիւն՝ կամք քո» (էջ 367):

**Բաժակ** եզրույթը փոխառություն է պահլավերենից<sup>3</sup>: Ունի ուղիղ և փոխաբերական իմաստներ: «Մատեանում» այն գործածված է **ըմպանակ, գավաթ** իմաստով: Գրաբարում այն կազմում է նաև դարձվածքներ, օրինակ՝ «Զուղին պարտութիւն յանվթարելեացն **բաժակ բարկութեան** ի ձեռն առի» (էջ 346): «Թափեա՛ զմուրս անաւրեւութեան թմբբութեան **մահու բաժակիս...**» (էջ 346):

**Բաժակ** եզրույթը դարձվածքներ է ձևավորել նաև արդի արևելահայերենում, ինչպես համբերության բաժակ, բարկության բաժակ, մահվան բաժակ և այլն: Նույն խոսքային տիրույթում հեղինակը հակադրությունները կառուցում է **ըմպանակ, բաժակ** եզրույթներին հոմանիշ՝ **տաշտ, սկաւառակ** եզրույթները իբրև հիմնաբառեր գործածելով:

\***Տաշտ**-ը փոխառություն է պահլավերենից: ԳԲԲ-ն նշում է հինգ իմաստ. Նարեկացին գործածում է **բաժակ, թաս, գավաթ** իմաստով. «**Տաշտ** կրեցեալք ի ծայրս մատանց, Մինն՝ զինի, ես միւսն՝ լեղի» (էջ 365):

\***Սկաւառակ** – փոխառություն է պահլավերենից: ԳԲԲ-ն նշում է՝ 1) կերակրի աման, ափսե, պնակ, 2) ըմպելիքի գավաթ, թաս, 3) սկուտեղ, մատուցարան (էջ 459) իմաստները: «**Սկաւառակք** կրկին կրաւորականք համոց, Մինն քաղցու և միւսն՝ դառնութեամբ» (էջ 365): Ինչպես տեսնում ենք, հեղինակը հակադրությունները կառուցել է կենցաղային իրերի անվանումներ արտահայտող հոմանիշ եզրույթների գործառույթով:

Նարեկացին գործածել է նաև *տարարժեք մետաղների անվանումներ արտահայտող եզրույթներ*: Օրինակ՝ «Մատուցանելոյս մահու արժանոյս Ընդ **պղնձոյս** գոյի անարգս ձայնի ինձ **ոսկի** շնորհի: Ընդ անզարդութեան **երկաթոյս** սեւութեան գունոյս **պղինձ** պճնելի՛ ցոյցի առաքինութեան հրաշեկ Լիբանանու» (էջ 251): Կամ՝ «Զերժ շղթայի փրկեա՛ ի խեղդմանէս Ազատեա՛ ի տագնապէս, քակտեա՛ ի **յերկաթիցս**» (էջ 583): Կամ՝ «Եւ կամ քարինս անարգս ընդ պայծառութեան **արծաթոյ** Կամ աւագ ինչ ատամնառու ընդ կակղութեան զանգուածոյ հացի» (էջ 518): «Թարախ մթերից պատեալ **զերկաթով** գաղտնեացս ծածուկի Արդեն ինձ տագնապս՝ վերս պահեալս անխնամարկելիս» (էջ 374): Հեղինակը **արծաթ, երկաթ, ոսկի, պղինձ** տարարժեք մետաղներ անվանող եզրույթների գործածությամբ խոսքը դարձնում է տպավորիչ, ասելիքը՝ հասու և ներազդու ընթերցողին:

<sup>3</sup> Բառերի մեկնությունները՝ ըստ Ռ. Ղազարեան, «Գրաբարի բառարան» (հ. Ա, Եր., 2000, հ. Բ, Եր., 2000), այսուհետև՝ ԳԲԱ, ԳԲԲ:

Նարեկացին գործածում է նաև *կենդանիներ անվանող եզրույթներ*: Ակնկալելով Աստծուց ներում և խնդրելով այն՝ ներկայացնում է մարդկային էության չարամիտ կրողին՝ իրեն, որի մեղքերը աննկարագրելիորեն բազում են թվով և սարսափելի՝ բովանդակությամբ: Պատկերը հասանելի է դառնում ընթերցողին կենդանիներ անվանող եզրույթների կիրառմամբ. «Ադու **աղաւնիս** միշտ հիմարութեամբ, այլ ոչ հանդարտութեամբ» (էջ 250): «**Ի կորեանց աղիծուց** անձնական անձս եղեռնային... Կերպս **ձուց քարբից**՝ լցեալ ծանրութեամբ» (էջ 250): Ներումն խնդրելով ամենագորից՝ գրում է. «Քաւ լիցի քեզ բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի», «Եթէ ախտացեալս քո **ոչխարի** գազան դժնդակ տացես ուղեկից» (էջ 253): «Եւ արդ, դու միայն սկիզբն բարեաց, հովիւ՝ մոլորեալ **ոչխարիս...**» (էջ 359):

Աստվածաբանական գրականության մեջ **ոչխար** եզրույթը խորհրդանշում է հավատացյալին, մեր օրինակում՝ մեղքերով լի մարդուն: Կամ՝ «Մտեմ ի բոյնն **աղաւնի** և անդուստ **ագռու** ելանեմ» (էջ 529): Նշենք, որ հեղինակը կենդանիներ անվանող եզրույթների կիրառմամբ ստեղծել է դարձվածային արտահայտությունների հրաշալի օրինակներ<sup>4</sup>, որոնք դիպվածային կարող են լինել՝ առկայացված տվյալ խոսքային տիրույթում: Դրանք ոճաստեղծ որոշակի միջոց են, որ Նարեկացու գրչի շնորհիվ դառնում են բովանդակությամբ տարողունակ պատկերներ: Ակնառու է լեզվաոճական մի հատկանիշ, որը Գ. Նարեկացու «Մատեան»-ում դիտարկելի է ցանկացած խոսքային տիրույթում: Դարձվածային արտահայտությունների ստեղծման հիմքում ընկած է որոշակի բառերի փոխաբերական իմաստով գործառույթը: Իբրև լեզվաոճական կարևորագույն հատկանիշ՝ ակնհայտ է այն հանգամանքը, որ դիպվածային դարձվածային արտահայտությունը կառուցելիս հեղինակը հաճախ գործածում է որոշակի բնագավառ ներկայացնող եզրույթներ, որոնք խոսքային տիրույթի բովանդակությանը համարժեք են, որի վառ ապացույցն են մեր իսկ շարադրանքում ներառված այնպիսի եզրույթները, ինչպիսիք են՝ 1) մետաղների անվանումներ, 2) կենցաղային իրերի անուններ, 3) կենդանիների անուններ անվանող եզրույթները: Եզրույթների փոխաբերական իմաստով գործառույթն էլ տվյալ միավորը դարձնում է դարձվածք:

Նարեկացին գործածում է նաև *մարմնի մասեր անվանող* եզրույթներ: Նա Աստծուն խնդրում է, որ իբրև օգնություն և ապավինություն՝ Աստված պարզի իր ձեռքը, ոտքը, իբրև հոգևոր ամրապնդում՝ իր ոգին. «Առ սրացելոյս պատսպարութիւն՝ **բագուկ քո**, Առ փախուցելոյս ապաւինութիւն՝ **ոտք քո**» (էջ 367): Կամ այլ օրինակներում՝ «Դու ինձէն իսկ զիս՝ ոսկեղէն տախտակս խաւսուն, նուիրեալ քումդ պատգամի. գրեալս **մատամբդ** Աստուծոյ» (էջ 389): «Առ բժշկութիւն անողջանալի՝ խոցուածոյս՝ **մատն քո...**» (էջ 367): «...Ոչ սասանմունք **մատանց**, ոչ համբարձմունք **ձեռաց**, Ոչ աղաչանք **լեզուաց**» (էջ 409): «Եւ ի **ձեռին** է

<sup>4</sup> Մանրամասն տե՛ս Ա. Աբաջյան, Ն. Դիլբարյան, Ա. Յուզբաշյան, Ք. Հարությունյան, Գրաբարի դարձվածաբանություն, Եր., 2020, էջ 275-293:

շունչ կենդանական բոլորեցուն» (էջ 581):

Հեղինակը, ինչպես սպասելի էր, գործածել է *աստվածամեծար* բազմաթիվ եզրույթներ, որոնցից յուրաքանչյուրը առկայացված է խոսքային որոշակի տիրույթում՝ համարժեք նրա բովանդակությանը: Նրանցով ակադեմիան է յուրաքանչյուր գլուխ: Օրինակ՝ «Մանդուղք երանութեանն՝ եղկելոյս, Ճանապարհի շաղաց՝ մոլորելոյս, Թագաւոր ներող՝ պարտելոյս, Քաղցր լուսաւորութիւն՝ լքելոյս, Ձեռնկալ կենաց՝ հերքելոյս» (էջ 361): Սրանք պետք է գնահատել իբրև դիպվածային միավորներ տվյալ խոսքային տիրույթի շրջանակում:

Մեկ այլ օրինակում ունենք. «Ձա՛յն հառաչանաց հեծութեան ողբոց սրտից՝ աղաղակի Քեզ վերընծայեմ, տեսողդ գաղտնեաց» (էջ 246):

Մարդ արարածը նույնպես բնորոշվում է խորհրդանշական եզրույթներով, ինչպես՝ «Դու ստեղծիչ ես, եւ ես կաւ» (էջ 251):

Հանճարեղ բանաստեղծը գործածել է կրոնական բովանդակության բազմաթիվ եզրույթներ, այսպես՝ Ա գլխի Ա և Բ ենթագլուխներում՝ «պատարագն բոլորապտուղ...», «Ձոր առակ եւթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ, Այլ իբր գբուրեալ խունկն հաճոյական՝ ի խորանին Սելովայ» (էջ 246): «Ձոր շնորհեալն առաքելականացն դասուց Պաւղոս» (էջ 247), «Վասն զի թէ Մերձ է ար տեսան, որպէս Գիր ասէ...» (էջ 247), «Արքայութիւնն Սատուծոյ» (էջ 257), «Ըստ մարգարէին եւ առակողին» (էջ 257):

Ի շարս տարբեր բնագավառների ենթաշերտեր ներկայացնող եզրույթների՝ հեղինակը գործածել է նաև *իրավական* և *նազմական* եզրույթներ: Օրինակներ՝ «Բայց քանզի ձայնդ ահաւորի դասաստանիդ հատուցման» (էջ 247): «Եւ ի դնելս իմ ընդ քեզ դաստ խառնեալ աղերսիւ հգար» (էջ 246): «Պատժակիցս կործանեցելոյն Սողոմայ, Ըմբերանեալ դասախագս Նինուէի» (էջ 249): «Ընդ պատիժ արինին զշնորհն» (էջ 455) (ընդգծվածներն իրավական եզրույթներ են):

«Կրկինս ինձ երկնէ մարտից յատուցմունս» (էջ 247): «Հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր» (էջ 247) (ռազմական):

Գ. Նարեկացու «Մատեան ողբերգութեան» երկի լեզվառճական ցանկացած բաղադրիչի մասին խոսելիս պետք է կարևորել երկու հանգամանք: Առաջին՝ Գ. Նարեկացին մեծագույն մարդագետ է և միաժամանակ խորաքնին աստվածաբան: Մա նշանակում է, որ կրելով իր մեջ քրիստոնեական վարդապետությունը՝ նա մարդուն տանում է մաքրման՝ ցույց տալով դրա ուղիղ ճանապարհն առ Աստված, որ է «լոյս յաւիտենական»: Հեղինակը մանրագնին, ոսկերչական նրբանկատությամբ է գծում մեղքերը գիտակցելու և ապաշխարելու միջոցով դրանցից ազատվելու հնարավոր ուղին: Բնականաբար, զգացմունքներն ու հույզերը, հավատն ու մտավախությունը՝ ոչ թե կասկածը, այլ մտավախությունը հանկարծ չներվելու, յուրաքանչյուր գլխում, ենթագլխում, գեղարվեստական ցանկացած պատկերում հեղինակը ներկայացրել է խոր գրաբարագետի, լեզվաբանի և տաղանդավոր մտածողի գրչով:

Երկրորդ հանգամանքը այդ դժվարին ուղին ճիշտ գծելու նպատակաուղղվածությունն է: Հետևաբար ոճաստեղծիչ ցանկացած միավորի քննություն պիտի կատարել խոսքային որոշակի տիրություն: Այս դիտակետում արժևորելով գրաբարի եզրույթների գործառույթը «Մատեան»-ում՝ տեսնում ենք նրանց կարևորությունը ցանկացած խոսքային կառուցում, խոսքը ընթերցողին հասանելի և ներագրու դարձնելը: Ավելին՝ նրանց փոխաբերական իմաստով գործառույթով ձևավորվել են բազմաթիվ դարձվածային արտահայտություններ և դարձվածքներ, որոնց գերակշռող մեծամասնությունը դիպվածային է: Տիրապետող են աստվածամեծար եզրույթները, մարդկային էությունը բացահայտող, ուղիղ և փոխաբերական իմաստներով գործածված եզրույթները, քրիստոնեական վարդապետության խորախորհուրդ փիլիսոփայությունը և այն մարդկանց հասանելի դարձնելու նպատակին ծառայող, տարբեր իմաստային ենթաշերտեր ընդգրկող եզրույթները: Նրանց համակողմանի քննությանը ուղղված ցանկացած ուսումնասիրություն շարունակելի է դառնում՝ պայմանավորված երկի բովանդակության ներքին խորհրդով, ասելիքի նկատմամբ հեղինակի պատասխանատվության կարևորմամբ, նարեկյան գրչի տաղանդով: Ի մասնավորի՝ այն վերաբերում է նաև «Մատեանում» գործածված եզրույթների քննությանը. դրանք ոճական կարևոր միավորներ են՝ իմաստային ամենատարբեր շերտերով և ենթաշերտերով:

**АННА АБАДЖЯН, АНАИТ ЮЗБАШЯН – Проявления терминов габара в произведении «Книга скорби» Григор Нарекаци.** – Лексика самостоятельной и переводной литературы на древнеармянском языке подверглась многостороннему лингвистическому анализу, однако важнейшая составляющая лексики - терминосистема - еще нуждается в изучении. Наш анализ семантических, этимологических и структурных особенностей терминов габара показывает, что их изучение должно проводиться с полным охватом системы. Наиболее заметной особенностью терминосистемы габара является многоуровненность. Каждый уровень имеет свои особенности с точки зрения смысла и функциональности, при этом содержание «Книги скорби» Нарекаци и творчество автора имеют также важное значение для использования разных терминов, создания новых форм словообразования. В данном исследовании представлена семантическая и стилистическая характеристика терминов в поэме Нарекаци «Книга скорби». Автор использовал термины, представляющие разные области жизни, например: названия животных, названия предметов быта, термины, обозначающие металл, термины, обозначающие духовное и физическое строение тела, а также религиозного, юридического, военного содержания. Преобладают термины, прославляющие Бога, которые в основном ситуативные.

**Ключевые слова:** *термин, словесный уровень, стилистический компонент, термин военного значения, покаяние, грех, контрастное ключевое слово, прямое и переносное значение термина, антрополог, богослов*

**ANNA ABAJYAN, ANAHIT YUZBASHYAN – Manifestations of Grabar Terms in Grigor Narekatsi's "Book of Lamentations".** – The independent and translated literature vocabulary of Old Armenian has been subjected to semantic-etymological and stylistic in-depth study, however, the most significant component of the vocabulary, its term system, still needs further investigation. The semantic-etymological and structural features of Grabar terms, as evidenced by our conducted

analysis, demonstrate the necessity for a comprehensive inclusion of their examination within the system. The most prominent feature of Grabar's term system is that it is multi-layered. Each sub-layer has its own characteristic features from stylistic and functional points of view when the content of the given book and the author's art are also important in the aspect of including the semantic nuances of the vocabulary and creating certain stylistic values through them. This study presents the semantic and stylistic characteristics of Grabar terms in Grigor Narekatsi's poem "Book of Lamentations". The author has used terms representing different semantic layers and sub-layers, for example, e.g. names of animals, household items, terms denoting metals, those meaning the spiritual and physical structure of the body, as well as the ones with religious, legal, and military content. However, the predominance is given to the terms honoring God, which are mostly occasional words.

**Key words:** *term, verbal domain, style creator, a term of military significance, repentance, sin, main word of contrast, a term's direct and metaphorical meaning, anthropologist, theologian*

## ԵՐԿԻՏՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՏԵՍԱԿՆԵՐԸ

ԱՇՈՏ ԳԱԼՍՏՅԱՆ \* 

*Հայաստանի պետական մանկավարժական համալսարան*

Երկխոսությունը խոսքային գործունեության մեջ ունի մեծ կշիռ: Լեզվաբանական գրականության մեջ երկխոսության կառուցվածքը ներկայացվում է «ա-ն ասաց, բ-ն ասաց, կամ ա-ն հարցրեց, բ-ն պատասխանեց» սխեմայով: Երկխոսության մեջ իր որոշակի տեղն ունի հարցումը: Հարցական հնչերանգը երկխոսության առավել բնորոշ հատկանիշն է: Երկխոսության կիրառության ոլորտները բազմազան են: Գեղարվեստական խոսքը կառուցվում է նաև այնպիսի յուրահատուկ երկխոսություններով, ինչպիսիք են ներքին, միակողմանի, անպատասխան, պատասխան ժեստով երկխոսությունները և այլն:

Գրական բանավեճերը, գաղափարական տարաձայնությունները կարող են ուրույն արտահայտություն ունենալ գեղարվեստական խոսքում՝ բանաստեղծական երկխոսության տեսքով:

**Բանալի բառեր** - խոսքային գործունեություն, երկխոսություն, հարցում, հնչերանգ, յուրահատուկ երկխոսություններ, գրական բանավեճ, կառուցվածք

Մարդկային հաղորդակցման հիմնական արտահայտությունը խոսքային գործունեությունն է, որի մեջ մեծ դեր ունի **երկխոսությունը**: Այն ծագել է մարդկության վաղ արշավույսին, երբ մարդը դարձել է հասարակական էակ: Մտածողության և մարդու մտային գործունեության զարգացման հետ փոխվում են երկխոսության դրսևորման ձևերը:

Հին աշխարհի մտածողների շրջանում բանավիճելն ընդունված էր որպես ճշմարտության հասնելու ուղի: Երիտիկան (վիճարվեստը) ձևավորվել և

\* **Աշոտ Գալստյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Խ. Աբովյանի անվ. ՀՊՄՀ բանասիրական ֆակուլտետի ղեկավար

**Ашот Галстян** – доктор филологических наук, профессор, декан филологического факультета АГПУ им. Х. Абовяна

**Ashot Galstyan** – Doctor of Philology, Professor, Dean of the Philological Faculty of the ASPU named after Khachatur Abovyan

Էլ. փոստ՝ ash.galstyan@mail.ru. ORCID: <https://orcid.org/0000-0001-9506-8611>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 15.05.2024

Գրախոսվել է՝ 13.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

ծաղկել է Ք. ա. հին հունական սովետների երկերում (Պրոտագորաս, Հիպիաս, Պրոդիկոս): Այնուհետև խոսքի մասին ուսմունքը Հունաստանից տեղափոխվեց Հռոմ (Ցիցերոն), որտեղ երկխոսության կատարելության գործում կարևորվել են գիտելիքը, ճաշակը և աշխատասիրությունը: Վիճարկվեստի նկատմամբ հետաքրքրություն է առաջացել նաև հին Հնդկաստանում:

Հունաստանի, Հռոմի, Հնդկաստանի ճարտասանական ուսմունքները մեծ ազդեցություն են ունեցել հայերի ճարտասանական արվեստի զարգացման վրա (Տիգրան Մեծ, Արտավազդ Բ):

Երկխոսությունը, որի պարզ ձևը զրույցն է, կայանում է, եթե նրան մասնակցում է երկու կամ ավելի մարդ: Երկխոսությունը մեկը մյուսին հաջորդող առնվազն երկու բարդ կառույցներ են՝ յուրաքանչյուրը սովորաբար բաղադրված ուղղակիորեն մեջբերված և հեղինակի խոսքերից<sup>1</sup>: Լեզվաբանական գրականության մեջ երկխոսության կառուցվածքը ներկայացվում է հետևյալ սխեմայով՝ «ա-ն ասաց, բ-ն ասաց, կամ ա-ն հարցրեց, բ-ն պատասխանեց»<sup>2</sup>: Այստեղ ընդգծվում է խոսողի և խոսակցի մտքերի սերտ փոխհարաբերությունը, քերականական կապը: Երկխոսության այս սխեմային կարելի է ավելացնել նաև երրորդ կառույցը. «ա-ն հարցրեց, բ-ն հարցրեց»: «Հարցին հարցով տրված պատասխանը կոչվում է լրացահարցական նախադասություն»<sup>3</sup>: Հարցնողը հարց կարող է տալ ոչ միայն խոսակցին, այլև իրեն: Առաջին դեպքում հարցական նախադասությունը կոչվում է երկխոսական, իսկ մյուս դեպքում՝ մենախոսական: Մենախոսական հարցական նախադասություններն ավելի շատ գործածվում են գեղարվեստական խոսքում. «Էս աշխարհի մեջ դու ում կողմեն կընդունվես, Ձորի Միրո, -ինքն իրեն հարց տվեց և տվեց պատասխան.

- Հարութի» (ՄԳ):

Երկխոսության մեջ իր որոշակի տեղն ունի հարցումը: Հարցական հնչերանգը երկխոսության առավել բնորոշ հատկանիշն է: Ս. Ղուկասյանն ընդգծում է, որ հաճախ խոսողը ճարտասանական հարցման միջոցով դիմացինից ոչ թե պատասխան է պահանջում, այլ նրան մղում է որևէ գործողության. «Գրիչդ մեկ րոպեով չե՛ս տա»<sup>4</sup>:

Երկխոսության մեջ՝ պատասխան խոսքում, հաճախ են գործածվում բառնախադասություններ, որոնք դրական կամ բացասական պատասխան են տալիս կամ էլ որոշակի վերաբերմունք են արտահայտում: Բառնախադասություններն արտահայտվում են *այո*, *ոչ* հաստատական և ժխտական ե-

<sup>1</sup> Տե՛ս **Գ. Խաչատրյան**, Երկխոսությունները «Սասնա ծռեր» էպոսում, «Պատմաբանասիրական հանդես», հ. 3, 2022, էջ 155:

<sup>2</sup> **Ֆ. Խլդաթյան**, Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպի լեզուն և ոճը, Եր., 1988, էջ 165:

<sup>3</sup> **Ս. Աբրահամյան, Վ. Առաքելյան, Վ. Քոսյան**, Հայոց լեզու, 2-րդ մաս, շարահյուսություն, Եր., 1975, էջ 119:

<sup>4</sup> **Ս. Ղուկասյան**, Ժամանակակից հայերենի հարցատեսակները / Լեզվի և ոճի հարցեր, հ. 5, Եր., 1978, էջ 104:

դանակավորիչներով, ինչպես նաև համաձայնություն արտահայտող եղանակիչներով, ինչպես՝ *իհարկե, անշուշտ, անկասկած, հարկավ, ինչպես չէ* և այլն:

«-Դուք մեր կուրստ՝ ւմ եք սովորում:

-Այո »:

«-Թույլ կտա՞ս, բանտապե՛տ:

-Անշուշտ, անշուշտ» (ՊԶ):

Զեղչումը ընդհանուր լեզվական երևույթ է, խոսքի համառոտության միջոց: Երկխոսության կառուցվածքում կարող են գեղջվել նախադասության որոշ հատվածներ: Զեղչումը երկխոսության մեջ հաճախ այնպիսի չափեր է ունենում, որ նախադասությունը կորցնում է իր կառուցվածքային բնույթը.

«-Բայց կատարեց իր պարտքը հանուն հայրենիքի:

-Ինչպես ամեն հայ» (ԴԴ):

Երկխոսության մեջ կարող է գեղջվել ստորադասական նախադասության գլխավոր նախադասությունը.

«-Հապա ինչո՞ւ ես այդպիսի սիրով կառուցում թշնամու քաղաքը:

-Որովհետև ես հիմա անսահման ժամանակ և հնարավորություն ունեմ իմ փայփայած երազանքով զբաղվելու» (ՊԶ):

Ս. Աբրահամյանը քննում է երկխոսություններում թերի նախադասությունների տարբեր դրսևորումները: Լեզվաբանն առաջիններից է նկատել, որ երբեմն թերի նախադասությունը ոչ թե խոսակցի հարցի անմիջական պատասխանն է, այլ նրա արտահայտած մտքի լրացումը, հավելումը. այստեղ խոսողն ամբողջությամբ չի կրկնում խոսակցի արտահայտած նախադասությունը<sup>5</sup>:

Քերականական գեղչում կա նաև հետևյալ երկխոսության մեջ.

«-Արտասահմա՞ն ես գնալու:

-...Ենք գնալու» (ՎՊ):

Համատեքստից դուրս այս երկխոսությունը կարելի է երկու կերպ ընկալել. կա՛մ խոսակիցը նկատի ունի, որ ինքը մենակ չի մեկնելու արտասահման, նրա հետ կան այլ մարդիկ, կա՛մ էլ խոսակիցը նկատի ունի իր գրուցակցին:

Անդրադառնալով «Մենք ենք, մեր սարերը» վիպակի երկխոսություններին՝ Լ. Եզեկյանը հատկապես հիշատակում է հարցական և բացականչական նախադասությունների գերազանցությունը պատմողականի համեմատությամբ: Վիպակի երկխոսություններում «չնայած նախադասության առանձին հատվածներ բաց են թողնվում, բայց հենց այդ խոսքային միջավայից ու հնչերանգից հասկացվում է, թե ինչի մասին է խոսակցությունը»<sup>6</sup>:

Երկխոսության կառուցվածքում առանձնանում է նաև դիմելաձևը, որից պարզվում են խոսողի և խոսակցի փոխհարաբերությունը, նրանց մտերմության, հարգանքի աստիճանը: Մտերմիկ, բարեկամական գրուցի դիմելաձևը,

<sup>5</sup> Տե՛ս Ս. Աբրահամյան, Ժամանակակից հայերենի շարահյուսության մի քանի հարցեր, Եր., 1962, էջ 167:

<sup>6</sup> Լ. Եզեկյան, Հրանտ Մաթևոսյանի արձակի խոսքարվեստի մի քանի հարցեր, Եր., 1986, էջ 127:



անշուշտ, տարբերվում է պաշտոնական դիմելաձևից: «Դուք» դերանունը «դու» դերանվան իմաստով է գործածվում հարգանքի և քաղաքավարության դիմումի դեպքերում, որը ոճական հնար է<sup>7</sup>: Այս առումով հետաքրքիր է գրականագետ Գ. Անանյանի խոսքն ուղղված բանաստեղծուհի Ս. Կապուտիկյանին. «Ինձ թվում էր ինչպես մեր առտնին հանդիպումների ժամանակ, այսօր էլ հեշտ կլինի մեր գրույցը: Բայց խոստովանեմ, կաշկանդված եմ, նույնիսկ չգիտեմ՝ ինչպես դիմել հոբելյարիդ, դու-ով, դուք-ով, Տիկին Միլվա ասեմ, Միլվա ջան... Ախր գրույցը պաշտոնական է, թերթում պիտի տպագրվի: Այս դեպքում հարմար է, որ ամենայն հայոց բանաստեղծուհի կոչեմ... » (ՄԿ):

Զրույցի ընթացքում խոսակիցը իր մասին խոսելիս կարող է օգտագործել նաև «մենք» ձևը, որը մարդու հոգեբանության յուրօրինակ դրսևորում է: Օր.՝ Հ. Մաթևոսյանի «Տերը» վիպակի գլխավոր հերոսը Ռոստոմ Մամիկոնյանը, իր մասին խոսելիս «մենք» է օգտագործում, որն ինքնամեծարանքի արտահայտություն է:

Երկխոսությունը կարող է լինել նաև անպատասխան՝ ա-ն ասաց(հարցրեց), բ-ն լռեց, այսպես՝ «-Հայրի կ,-աղջկա ձայնը զրնգում էր, բայց հայրը չպատասխանեց» (ՎՊ):

«...Մարգարիտը դաձավ ինձ.

-Դուք դեռ երկա ր կմնաք այստեղ:

Պատասխանի փոխարեն ես նրան նայեցի լուռ ու վշտացած» (ԱԱ):

Լռությունը կարող է լինել՝

ա) համաձայնության նշան.

«-Ուզո՞ւմ ես գալ ինձ հետ,-ասաց Թաթուլը:

Մարանը համաձայն էր, բայց ոչինչ չպատասխանեց»:

բ) անհամաձայնության նշան.

«-Փախչենք, փախչենք, Մարգարի՛տ, հավատա ինձ, դա լավագույն էլքն է:

Պատասխանի փոխարեն նա երկու ձեռքս բռնեց և նայում է դեմքիս լռությամբ:

-Ո՞ւր փախչենք, մարդ ինքն իրենից ինչպե՞ս կարող է փախչել» (ԱԱ):

գ) չկողմնորոշվելու նշան.

«-Ախր, ինչո՞ւ ես թողել՝ եզները հարևանի արտը տրորեն:

Երեխան լուռ էր, գլուխը քաշ ձգած» (ԱԱ):

Խոսակիցը կարող է խոսողին միայն ժեստով պատասխանել՝ ձեռքի և գլխի շարժումներով: Այս դեպքում հարցն առաջարկվում է, իսկ պատասխանը տրվում է անձայն՝ դիմախաղի կամ ձեռքի շարժումների միջոցով, որոնք համարվում են երկխոսության արտաքին տեսողական բաղադրիչներ:

Երկխոսության կիրառության ոլորտները բազմազան են: Այն առավելապես

<sup>7</sup> Իր ծագման ժամանակ այն ոճական հնար չի եղել: Հին Հռոմում եռապետության իշխանության ժամանակ երեք տիրակալներին դիմողները դուք-ով էին դիմում: Հետագայում այս հոգնակի դիմելաձևը տարածվեց իբրև կիրթ, հարգալից խոսելաձև:

դրսևորվում է առօրյա-խոսակցական և գեղարվեստական ոճերում: Հրապարակախոսությունը երկխոսության գործածության տեսակետից տարաբնույթ է. այն կարող է հանդես գալ որպես մենախոսություն, իսկ հաճախ էլ հանդես է գալիս երկխոսության ձևով (հարցազրույց, ճեպահարցում<sup>8</sup> և այլն): Առօրյա-խոսակցական ոճին հատուկ են հարցուպատասխանական կաղապարները, զրույցի միջավայրը, բացականչական նախադասությունները, ձայնարկություններն ու եղանականիշ բառերը: Այստեղ կարևոր նշանակություն է ստանում խոսող-խոսակից-իրադրություն փոխհարաբերությունը:

Գիտական խոսքում երկխոսությունը մեծ չափով մոտենում է կատեխիզիսի ժանրային ձևին: Կատեխիզիսը հունարեն բառ է, որ նշանակում է խրատ, քարոզ, հորդոր: Կատեխիզիս նշանակում է նաև գիրք՝ շարադրված հարց ու պատասխանի ձևով: Եվրոպայում հանդես են եկել քերականական զանազան կատեխիզիսներ: Նշանավոր իմաստասեր Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց» աշխատության մեջ օգտագործված է կատեխիզիսի ժանրային ձևը, ինչպես՝

«Հարց. Զի՞նչ է փայլակն:

Պատասխանի. Փայլակն լինի շրջեալ հրոյն, ջրով, ամպոյն և հողմով, որ ի մեջն է, վերստին արծարծի և արտաքս բացափայլէ»:

Երկխոսությունը գեղարվեստական երկի կարևոր բաղադրամասերից է: Դրամատիկական ստեղծագործություններն ըստ էության այլ բան չեն, քան երկխոսության արվեստ:

Գեղարվեստական արձակը կառուցվում է այնպիսի յուրահատուկ երկխոսություններով, ինչպիսիք են ներքին երկխոսությունը, միակողմանի երկխոսությունը, անպատասխան երկխոսությունը, պատասխան ժեստով երկխոսությունը և այլն<sup>9</sup>:

Ուղղակի խոսքը ամենից ավելի հաճախված է երկխոսություններում: Այստեղ այն հանդես է գալիս իբրև հեղինակային պատումի ծավալման, կերպարի մտածողության, հոգևոր կերտվածքի բնութագրության, լեզվական անհատականության միջոց: Ինչպես իրավացիորեն նկատում է Ա. Պապոյանը, էպիկական սեռի ժանրերում երկխոսությունները բնորոշվում են նրանով, որ հեղինակային խոսքի հետ կապվում են ոչ այնքան ասացական իմաստ արտահայտող բայերի միջոցով, որքան ասելու եղանակը, ձևը կամ նման հանգամանքներ նշող բայերի օգնությամբ<sup>10</sup>:

Գեղարվեստական խոսքը միատարր չէ, և նրա տարբեր ժանրերում երկխոսությունը հանդես է գալիս տարբեր յուրահատկություններով: Երկխոսությունը՝ իբրև գեղարվեստական հնար, հանդես է գալիս նաև բանաստեղծական

<sup>8</sup> *Ճեպահարցում* եզրը առաջարկվում է մեր կողմից:

<sup>9</sup> Երկխոսության տեսակների մասին ավելի մանրամասն տե՛ս Ա. Գալստյան, Երկխոսությունը ժամանակակից հայերենում, Եր. 2003, էջ 13-57:

<sup>10</sup> Տե՛ս Ա. Պապոյան, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայոց լեզվի շարահյուսություն, Եր., 2003, էջ 433:

խոսքում (օրինակ՝ Հ. Շիրազի «Ո՞րն է, բաբո, մեր հայրենիք» բանաստեղծությունը):

Գեղարվեստական խոսքում երկխոսություն կարող է տեղի ունենալ.

ա) մարդկանց միջև, որոնք գրուցում են իրար հետ:

Երկխոսություն կարող է իրականանալ մահացած մարդու հետ: Վարդգես Պետրոսյանի «Կեսգիշերային գրույց» պատմվածքի հերոսը բարձրաձայն գրուցում է վաղամեռիկ հոր հետ. «Քո կենացը, հայրի՛կ: ...Դու շատ շուտ գնացիր, ես նույնիսկ չհասկացա, որ դու գնում ես: Վեց տարին կարճ ճանապարհ էր մահը հասկանալու համար» (ՎՊ):

Այս միակողմանի երկխոսության մեջ, թվում է, գրուցակիցը ներկա է: Այդ պահին որդին գործում է նաև հոր փոխարեն. «Մեր բաժակները գնգում են, ես կում-կում խմում եմ նախ իմ գինին, հետո հորս» (ՎՊ.): Ջրույցի միջոցով բացահայտվում է հերոսի ներաշխարհը:

Ինչպես գրում է Մ. Բախտինը, «ամեն մի ռեպլիկ մենախոսություն է, ամեն մի մենախոսություն մեծ երկխոսության ռեպլիկ»:

Հայաստանի նախկին գավառներում՝ մասնավորապես Սյունյաց աշխարհում, տարածված են եղել հարսի և փեսայի, ինչպես նաև երկու խնամիների միջև տեղի ունեցող հարսանեկան երգերը: Տեղի է ունենում երկխոսություն երգի միջոցով: Ս. Խանգադյանի «Հողը» վեպում մեջբերված է «Գալ մի, կգամ» նշանախոսի երգը:

բ) Մարդու և իր միջև (երկփեղկված) (Ս. Կապուտիկյան, «Երկխոսություն իմ և իմ միջև»),

գ) մարդու և կենդանու միջև (Ա. Բակունց, «Սպիտակ ձին», Հ. Մաթևոսյան, «Գոմեշը»),

դ) մարդու և ոչ շնչավոր էակների միջև,

ե) ոչ բանական էակների միջև (այլաբանորեն):

Գրական բանավեճերը, գաղափարական տարաձայնությունները կարող են ուրույն արտահայտություն ունենալ գեղարվեստական խոսքում՝ բանաստեղծական երկխոսության տեսքով: Այսպիսի երկխոսություններ են կայացել աշուղ Ջիվանու և Ա. Իսահակյանի միջև: Բանաստեղծական «թաքուն» երկխոսություն է կայացել նաև Ա. Իսահակյանի և Հ. Շիրազի միջև: «Սրիկա է նա, ով հայր է լինում» նախադասությանը հակադրված է «Սրիկա է նա, ով հայր չի լինում» նախադասությանը: Ուրույն բանաստեղծական երկխոսություններ են Գևորգ Հակոբյանի «Քելե, լառ» և Ս. Կապուտիկյանի համանուն բանաստեղծությունները:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ երկխոսությունը մտքերի մատուցման եղանակ է, ունի ինքնատիպ կառուցվածք և յուրահատուկ դրսևորում:

**АШОТ ГАЛСТЯН – Структура и типы диалога.** – Основным выражением человеческого общения является речевая деятельность, в которой большую роль играет диалог. В лингвистической литературе структура диалога представлена схемой: а - сказал,

б - сказал или а - спросил, б - ответил. В диалоге определенное место имеет вопрос. Вопросительный тон является наиболее характерной чертой диалога. Области применения диалога разнообразны. Художественная речь также строится с помощью таких уникальных диалогов, каковыми являются внутренний диалог, односторонний диалог, диалог без ответа, диалог жест-ответом и т. д.


Литературные дебаты, идеологические разногласия могут иметь своеобразное выражение в художественной речи в форме поэтического диалога.

**Ключевые слова:** *речевая деятельность, диалог, вопрос, тон, уникальные диалоги, литературная полемика, структура*

**ASHOT GALSTYAN – *Dialogue Structures and Types.*** – The main expression of human communication proceeds through verbal interaction, in which dialogues play a crucial role. Linguistic literature review suggests that dialogue structures are represented by the schemes A said – B said, or A asked – B answered. The interrogative patterns occupy a particular place in dialogues. Hence, interrogative intonation is the most characteristic feature of dialogues. There are diverse applications of dialogues. Literary discourse is generated through unique dialogue types such as internal, unilateral, unanswered, gesture-based-response, etc. Literary debates and ideological discrepancies can find their unique expression in fiction through poetic dialogues.

**Key words:** *verbal intercourse, dialogue, interrogative patterns, intonation, unique dialogues, literary debate, structure*

## Հ.-Ե. \*(A)Ս(E)- «ՃԻՇՏ, ՀԱՎԱՏԱՐԻՄ» ԱՐՄԱՏԻՑ ՍԵՐՎԱԾ ՀԱՅԵՐԵՆ ՄԻ ՔԱՆԻ ԲԱՌԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶԱՔԱՐՅԱՆ\*   
«Տաթև» գիտակրթական համալիր

Հոդվածը նվիրված է հ.-ե. \*(a)ս(e)- «ճիշտ, հավատարիմ» պարզական արմատից անմիջականորեն սերված մի շարք այնպիսի բառերի կամ արմատների ստուգաբանությանը, որոնք գրային հայերենում սկսվում են վ- կամ (h)ա- հնչյուն(ներ)ով: Ստուգաբանությունները կատարված են հնչյունական, բառակազմական, իմաստային վերլուծությունների հիման վրա, ներքին ու արտաքին վերականգնումների և պատմահամեմատական հետազոտության եղանակների կիրառմամբ: Օգտագործված են ինչպես հանրահայտ ստուգաբանական բառարաններում ու հետազոտություններում, այնպես էլ հայերենի բարբառային բառարաններում ընդգրկված նյութեր: Հայերենագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, թե հայերենի վ- սկզբնահնչյունով բառերը բնիկ չեն՝ բացառությամբ մեկ տասնյակ բառերի, որոնք համարվում են կանոնից շեղումներ: Սույն հոդվածում, սակայն, բացահայտված է վ- սկզբնահնչյունով բնիկ հայերեն բառերի ծագման օրինաչափությունը, որի հիման վրա կատարված են նոր ստուգաբանություններ: Հոդվածի շրջանակներում առաջարկված են հետևյալ բառերի նոր ստուգաբանությունները. *վավեր, վստահ, հաւատ, հավաստ, հաւասար, սպաւէն*: Այս նոր ստուգաբանություններն էլ հենց հեղինակի ներդրումն են:

**Բանալի բառեր** – *հայոց լեզու, հ.-ե. նախալեզու, արմատային տարբերակներ, սկզբնահնչյուն, ածական, ձայնդարձ, ածանց, սահող s, \*ս ձայնորդ, փոխառություն*

### Ներածություն

Հ.-ե. \*(a)ս(e)- «ճիշտ, հավատարիմ» պարզական արմատի տարալեզու ածանցյալների մի խումբ ստուգաբանված է և տեղ է գտել հանրահայտ բառարաններում [12: 11]: Դրանց թվում հայերեն բառեր նշված չեն: Սակայն

\* **Հովհաննես Զաքարյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ, «Տաթև» գիտակրթական համալիրի լեզվաբանության բաժանմունքի ղեկավար

**Оганес Закарян** – кандидат филологических наук, доцент, руководитель лингвистического отдела Научно-образовательного комплекса «Тате»

**Hovhannes Zakaryan** – Candidate of Philological Sciences, Associate Professor, Head of Linguistic Department of "Tate" Center of Research and Education

Էլ. փոստ՝ [hovzakaryan@yahoo.com](mailto:hovzakaryan@yahoo.com). ORCID: <https://orcid.org/0009-0000-8168-7622>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 15.05.2024

Գրախոսվել է՝ 12.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

հետազոտությունները ցույց են տալիս, որ կան նույնարմատ չստուգաբանված կամ ոչ բավարար ճշգրտությամբ ստուգաբանված հայերեն մի շարք բառեր, որոնց ստուգաբանությունը կամ դրա ճշգրտումը կարևոր ու արդիական է հայերենի բառապաշարի բնիկ՝ հ.-ե. շերտի գիտական ուսումնասիրության ամբողջացման առումով<sup>1</sup>:

Ինչպես հայտնի է, հ.-ե. \*ս (w) ձայնորդը հայերենում բառամիջում և բառավերջում վերածվել է առավելապես **վ/լ, գ** կամ **ու** հնչյունների (\*diw- >տիւ, \*awed- >աւետ, \*g<sup>w</sup>ow- >կով, \*owi-pa- >հովիւ, \*g<sup>w</sup>owio- >կովի, \*rew- >արեգ, \*bhut- >բութ, \*tū >դու ևն) [3, էջ 488-494]:

Ինչ վերաբերում է բառասկզբին, ապա հայերենագիտության մեջ ընդունված է այն կարծիքը, որ այդ դիրքում հ.-ե. \*ս- ձայնորդը վերածվել է միայն **գ**-ի կամ **ու**-ի (չկա բացատրություն, թե ինչու չէր կարող վերածվել **վ**-ի), իսկ **վ**-ով սկսվող հայերեն բառերը, որպես կանոն, իբր փոխառություններ են մեծ մասամբ իրանական աղբյուրներից [8, էջ 557-558: 1, էջ 318]<sup>2</sup>: Կասկածի ենթարկելով կարծրատիպի վերածված այդ կարծիքը՝ առաջադրել ենք այն վարկածը, որ **վ** սկզբնահնչյունով հայերեն բառերի մեծագույն մասի հայերեն հնագույն ձևերում այդ **վ**-ն եղել է ոչ թե սկզբնահնչյուն, այլ հաջորդել է հետագայում ընկած թույլ սկզբնաձայնավորին կամ սահող \*s-ին, այսինքն՝ իրականում եղել է բառամիջյան \*ս ձայնորդ, որի զարգացման օրինակապես արդյունքներից մեկն է **վ/լ**-ն: Այս վարկածը հիմնավորող մի շարք ստուգաբանություններ արդեն ներկայացրել ենք մեր մի քանի հոդվածներում [4: 5 ևն]: Սույն հոդվածում շարունակել ենք այդ աշխատանքը մասնավորապես հ.-ե. \*(a)u(e)- «ճիշտ, հավատարիմ» արմատից սերված հայերեն նյութի առնչությամբ:

Քննարկվող հայերեն բառերի ու դրանց ածանցյալների շարքում կան հոմանիշներ (**վավեր** – **հաւաստի** – **վատահելի** – **արժանահաւատ**, **հաւատալ** – **վատահել** – **ապաւինել**), որոնց արմատների միջև փորձել ենք գտնել նաև ծագումնաբանական կապեր, մինչդեռ դրանք մինչ այժմ բխեցվել են միանգամայն տարբեր աղբյուրներից:

### Հետազոտության ընթացքը և արդյունքները

Հ.-ե. \*(a)u(e)- «ճիշտ, հավատարիմ» արմատը գիտական աղբյուրներում

<sup>1</sup> Համեմատաբանությանը հայտնի են ոչ քիչ դեպքեր, երբ միևնույն հայերեն բառը կարելի է համարել մերթ փոխառություն (հատկապես իրանական աղբյուրից), մերթ հ.-ե. նախաձևից անմիջականորեն ծագած բնիկ բառ: Գիտական մոտեցումը պահանջում է երկու վարկածներն էլ քննարկել վերջնական ճշմարտությունը պարզելու ակնկալությամբ:

<sup>2</sup> Հատկանշական է, որ Հ. Հյուբշմանի, Հ. Աճառյանի, Գ. Ջահուկյանի նշած այդ իրանական (մասնավորապես պահլավական՝ միջին իրանյան) աղբյուրները մեծ մասամբ կամ ենթադրյալ են և հիմնականում հայերեն բառերի հիման վրա կատարված վերականգնումների փորձեր են, կամ էլ ընդհանրապես որևէ կերպ հավաստված ու վկայակոչված չեն (օրինակ՝ Գ. Ջահուկյանի «Հայերեն ստուգաբանական բառարանում» [10]): Իսկ **վ** սկզբնահնչյունով հայերեն բառերի ավելի քան 1/3 մասը անվերապահորեն համարվում է անհայտ ծագման:

ներկայացված է տարբերակներով՝ № 2172, \**uer*-[11], \**uerə*- «ընկերություն, ընկերասիրություն; վստահելի, ճշմարիտ, իսկական, իրական, ճշգրիտ», [12], \**wēr*- «ճշմարիտ, ճիշտ, բարյացակամ, հավատարիմ» [11], \**weh*-, \**weh*<sub>1</sub>-*ros*-, \**weh*<sub>1</sub>-*reh*<sub>2</sub>- «**ճիշտ**» [13, Proto-Indo-European/*weh*<sub>1</sub>-*ros*], \**wēr*- «ճշմարտություն» [14, *vera*]:

Նշված աղբյուրներում և հայերեն ստուգաբանական բառարաններում այդ արմատից առաջացած հայերեն բառ չի նշված: Այլ լեզուների նույնարմատ զուգահեռները տրված են ստորև՝ առանձին բառերի ստուգաբանության առիթներով:

Եթե հաշվի առնենք, որ \*(**a**)*u*(**e**)-ն կարող է լինել ոչ միայն թույլ սկզբնաձայնավորով, այլև **-h**- նախահավելվածով, ապա կարելի է հնչյունապես այդ արմատից բխեցնել նաև հայ. **վավեր**, **վստահ**, **հաւատ**, **հավաստ**, **հաւասար**, **ապաւէն** բառերը, որոնք իմաստով ևս համապատասխանում են այդ արմատին:

**Վաւեր** «հավաստի, ստույգ, վստահելի, արժանահավատ, հավատալի» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է փոխառություն պահլենթադրյալ \**vāwar* (*vāpar*) «հավատալի, ստույգ» <*upa*+*var* (< *h*.-*e*. \**uel*- «ցանկալ, փափագել, ընտրել») ձևից [2, *h*. 4, էջ 327]: Գ. Ջահուկյանը համաձայն է այդ վարկածին [10, էջ 708]: Wiktionary-ն այս բառը դուրս է բերել մ.պարսկ. *w'pāl* /*wābar*/ «ճշմարտություն; հավատ» սկզբնաղբյուրից [13, *վաւեր*]: Այս տարաձայնությունները նկատի ունենալով, ինչպես նաև այս բառի ձևից և իմաստից ելնելով՝ առաջարկում ենք դրա բնիկ *h*.-*e*. ծագման վարկած՝ առանց իրանական միջնորդության: Սա թերևս մասնակի կրկնավոր է՝ **վաւեր** <\*վեր+վեր <\*(**a**)*u***e**-*r*- <\*(**a**)*u*(**e**)- «**ճիշտ**; հավատարիմ», որտեղ \**r*-ն աճական է<sup>3</sup>: **Հնարավոր է նաև ենթադրել ածանցավոր կազմություն՝ վաւ-եր** <\*(**a**)*u***ə**-*w*-եր <\*(**a**)*u*(**e**)- «**ճիշտ**; հավատարիմ», որտեղ \**w*-ն աճական է (**-եր ածանցի համար հմմտ. աղանդ-եր, ան-եր, ճենճ-եր** են): Եվ վերջապես, հնարավոր է նաև ենթադրել **վաւեր** <\*վաւեր <\*(**a**)*u***ə**-*ro*- <\*(**a**)*u*(**e**)- «**ճիշտ**; հավատարիմ» տարբերակը (**հմմտ. մ.հոլ. waer**, լուսիսալ. *wouer* [տե՛ս ստորև՝ ծան. 2]), **որտեղ** *u*-ն ոչ թե աճական է, այլ ձայնակապ (**հմմտ. Լեւոն <Լեոն, Գեւորգ <Գեորգ, Թադեւոս <Թադեոս, Տաւուշ <Տաուշ** են):

**Վստահ** «1. հաւատով, 2.ապահով, համարձակ, աներկյուղ» բառը Հ. Աճառյանը, հետևելով Հյուբշմանին, համարել է իրանական փոխառություն՝ համեմատելով *h*.պարսկ. ենթադրյալ \**vistāhuva*-, պահլ. *vistāxv* ձևերի հետ,

<sup>3</sup> Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ գերմ. *wahr*, լուսիսալ. *wouer*, **հ.անգլ. wēr** «**ճիշտ, ճշմարիտ, ուղիղ**», **մ.հոլ. waer, հոլ. waar, արլ.ֆրիզ. weer, արևմ.ֆրիզ. wier**, կիմբր. *baar*, **հ.բրեւ. հ.կոռն. guir**, *h.իռլ. fir*, լատ. *vērus* (**bērus**), ումբր. *berus* «**ճիշտ, ճշմարտացի**», արբ. *ur-tē* «**իմաստուն**» (նախաալբ. \**wara*) «**ճիշտ**» [13, Proto-Indo-European/*weh*<sub>1</sub>-*ros*], *h.բ.գերմ. wāra* (<նախազերմ. \**wērō*) «**ճշմարտություն, հավատարմություն, վստահություն**» [13, *wāra*], ռուս. *проверить* «ստուգել» [14] են:

որոնք, սակայն, ավելի շատ նշանակում են «համարձակ, անպատկառ, հանձնապաստան, լիբբ, անհամեստ» [2, հ. 4, էջ 349]: Գ. Ջահուկյանը [10, էջ 714] և Wiktionary-ն [13, վստահ] համաձայն են այդ վարկածին: Չնից և իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այս բառի բնիկ հ.-ե. ծագման վարկած՝ **վստահ** <\*վի-ստ-ահ<sup>4</sup> <\*(a)uē-st(i)- <\*(a)u(e)- «ճիշտ; հավատարիմ» ստուգաբանությունը, որտեղ **-ստ-ն հ.-ե. \*-sti ածանցն է**<sup>5</sup> [տե՛ս 10, էջ 799, 805, 807, 813]<sup>6</sup>:

**Հաւատ (աւատ)** «1. կրոն, դավանանք, նվիրվածություն, 2. համոզմունք, վստահություն, ստուգություն, 3. ապացույց, փաստ, հավաստիք» (որից՝ **աւատ** «ֆեոդ», **հավատարիմ** «նվիրված, վստահելի, հուսալի», **հաւատչէք** «կանխավճար» [7, հ. 3, էջ 84]) բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [2, հ. 3, էջ 70-71]: Գ. Ջահուկյանը նախապես համարել է բնիկ հայերեն բառ՝ հ.-ե. \*Hau- \*au-8 «զգալ, հասկանալ» արմատից [8, էջ 113], բայց հետո, հետևելով Բեյլիին, համարել է իրանական փոխառություն ենթադրյալ \*fra-vat- կազմությունից [9, էջ 184-185: 10, էջ 454]: Wiktionary-ն, ըստ Փերիխանյանի, համարել է փոխառություն մ.իրան. ենթադրյալ \*havvat (<\*hamvat <նախաիրան. \*hamwát-iš «հույս, հավատ» <\*ham + \*watáti- <հ.-ե. \*wet-éti- <\*wet- «մտերիմ լինել») սկզբնաղբյուրից [13, հաւատ]: Նկատի ունենալով այս տարածայնությունները, ինչպես նաև ձևից ու իմաստից ելնելով՝ առաջարկում ենք այս բառի նոր ստուգաբանություն՝ **(h)աւատ-** <\*(h)auə-d- <\*(a)u(e)- «ճիշտ; հավատարիմ», **որտեղ \*d-**ն աճական է<sup>7</sup>: «Հավատ – վստահ» իմաստային անցումը շատ ավելի ակնհայտ է ռուսերենում՝ верить «հավատալ» - доверить «վստահել»<sup>8</sup>:

<sup>4</sup> Երկրորդ՝ **-ահ/-եհ/-իհ/-ոհ** ածանցի համար հմնտ. *կո-ահ-ել* (<\*g<sup>h</sup>ō- <\*g<sup>h</sup>ā- «զալ, ծնվել, երևան գալ», հմնտ. *կառլ* [10, էջ 385-386]), *գրուահ* «հանցագործ», *ազահ, պատահ-ել, պատեհ, գրեհ/գրիհ/գրոհ, գրոհ* (<\*gh<sup>h</sup>ēr-՝ \*g<sup>h</sup>ēr- «ծանր, խիստ, ճնշում», հմնտ. *կրիվ* [10, էջ 431]), *տր-ոհ-ել* (<\*dēr-՝ \*der- «կտրել, հատել, ճեղքել, պատռել», հմնտ. *տ(ո)րոսել* [10, էջ 733]) են:

<sup>5</sup> Այդ \*-sti (<\*es+ti) բաղադրյալ ածանցակերպը, հայերենում կորցնելով վերջնաձայնավորը և ձուլվելով արմատի հիմքային **ա/ե/ի/ու** ձայնավորին, ներկայումս ընկալվում է որպես **-աստ/եստ/-իստ/-ուստ** վերջածանց (*իմաստ, զգաստ, զգեստ, ուտեստ, հանգիստ, այլուստ, անդուստ* են): Նույն \*es+ti-ից է **ստոյգ** «ճիշտ, արդար» բառը, որտեղ ունենք \*es- «լինել» արմատը [10, էջ 695]:

<sup>6</sup> Այլալեզու նույնարմատ զուգահեռներից հիշենք՝ ռուս. верный «ճիշտ, ստույգ, ուղիղ, վստահելի, ապահով, հավատարիմ, նվիրված», գերմ. wahr «իսկական» [14, вера], հուն. ἐπί-ηρες «հավատարմատար, վստահված անձ» [12, № 2172], իսլ. alvöru «լուրջ, անկեղծ» [13, verus], շվեդ., հ.դան. allvar «լրջություն», բրեւ., կոռն., կիմբ. gwir «ճշմարտություն» [13, Proto-Indo-European/weh-ros]:

<sup>7</sup> Հ- սկզբնահնչյունի համար հմնտ. **հաւ** «թռչուն» <\*auei- թռչուն» [2, հ. 3, էջ 66], **հաւ** «պապ, մեծ հայր» \*ayo- մայրական պապ» [2, հ. 3, էջ 66-67], **հաւատի** «գետառ» <\*ayer- «ջուր, անձրև, գետ» [9, էջ 454] կամ **հաւ**-առ-ի <\*h<sub>2</sub>ep-sru- <\*we-(d)- <\*wó-df- «ջուր, գետ» [13, PIE root \*h<sub>2</sub>ep-]), **հավալիել** «հափշտակել, առևանգել» <\*ap(h)- բռնել, վերցնել» [9, էջ 455] են:

<sup>8</sup> Իմաստային այլալեզու զուգահեռներից հիշենք նույնարմատ ռուս. вера «1. հավատ, կրոն, դավանանք, 2. վստահություն, համոզվածություն», լեհ. wiara «հավատ» [13, вера], լատ. verus <\*weh<sub>1</sub>- «ճիշտ», ավեստ. var- «հավատալ», varəna- «հավատ», օս. urnyn «հավատալ», հ.իսլ. vár «ուլտ, երդում, հանդիսավոր խոստում», գոթ. tuzwērgan «կասկածել», գերմ. wahr «իսկական» են [13, verus], հուն. ἐπίροος «հավատալ, վստահել, սիրելի», հ.իսլ. vārar «հավատարմության երդում», անգլ.-սաքս. wær «համաձայնագիր, հավատարմություն», գոթ. alla-werei «հավաստիություն» [12,



**Հաւաստ** «1. ստույգ, ճշմարիտ, վավեր, հաստատ, 2. ապացույց, երաշխիք» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [2, հ. 3, էջ 69-70], սակայն **-աստ**-ը համարել է ածանց՝ արմատը կապելով **հաւաստալ** կամ **հաւանել**<sup>9</sup> բայի հետ [2, հ. 4, էջ 671-673]: Գ. Ջահուկյանը համարել է փոխառություն իրանական աղբյուրից՝ նախ կապելով խոտ.-սակ. hauva-asta «ուժեղ, զորեղ» ձևի հետ [9, էջ 184-185], այնուհետև համեմատելով պահլ. ենթադրյալ \*wstykn (avastēkan) ձևի հետ [8, էջ 531: 10, էջ 454]: Wiktionary-ն համարել է միջինիրանյան փոխառություն՝ հղում տալով **հաւաստ** բառին [13, հաւաստ]: Նկատի ունենալով այս տարածայնությունները և նախորդ **հաւաստ** բառի հետ հարանունությունն ու մասնակի հոմանիշությունը՝ առաջարկում ենք **հաւա-ստ-** <\*h₂au̯ə-sti- <\*(a)u̯(e)- «ճիշտ; հավատարիմ» **ստուգաբանությունը, որտեղ –ստ-ն ածանց է** (տե՛ս վերը՝ *վատահ* բառի առիթով):

**Հաւասար** «1. ուղիղ, միագիծ, 2. նման, միատեսակ, ճիշտ նույն չափի, 3. ընդհանուր» բառը Հ. Աճառյանը, հետևելով Մեյեին, համարել է փոխառություն պահլ. ենթադրյալ \*hāv(a)sār «միանման» ձևից [2, հ. 3, էջ 69]: Գ. Ջահուկյանը [8, էջ 531: 10, էջ 549] և Wiktionary-ն [13, հաւասար] համաձայն են նրա հետ: Սակայն նախորդ բառերի հետ իմաստային և ձևային առնչությունը նկատի ունենալով՝ կարելի է առաջարկել այս բառի բնիկ հ.-ե. ծագման վարկած՝ **հաւաւ-ար-** <\*h₂au̯ə-k- <\*(a)u̯(e)- «ճիշտ; հավատարիմ» **ստուգաբանությունը, որտեղ \*k >u-ն** աճական է: Իսկ **-ար** ածանցի համար հմմտ. *երկ-ար, արդ-ար, դալ-ար, հարմ-ար, մոլ-ար* ևն [տե՛ս նաև 10, էջ 800]:

**Ապաւէն** «1. հուսալի՝ անվտանգ ապաստան, 2. վստահելի մարդ, հովանավոր» (բարբառներում՝ «օրվա ապրուստ» իմաստով [6, հ. Ա, էջ 94]) (որից՝ **ապաւամեռ** «ապավենը մեռած, անհույս մնացած» [7, հ. 1, էջ 208]) բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանել [2, հ. 1, էջ 233]: Գ. Ջահուկյանը ենթադրել է իրանական փոխառություն՝ առանց ստույգ աղբյուր մատնանշելու [10, էջ 68-69]: Ձևով և իմաստով **հաւաստ** բառի հետ կապելով՝ կարելի է ենթադրել **ապաւէն** <ապ-աւ-էն <\*aṷ- <\*(a)u̯(e)- «ճիշտ; հավատարիմ» ստուգաբանությունը, որտեղ **ապ-**ը և **-էն**-ը ածանցներ են: **-էն** վերջածանցի համար հմմտ. *ապար-էն, քրծ-էն, ծու-էն* ևն<sup>10</sup>: Ինչ վերաբերում է **ապ-** (<\*a(m)b(i)- «շուրջը») նախածանցին, ապա դա տարբեր է համանուն ժխտականից: Դրանից է *ամբ-ողջ* բառի առաջին բաղադրիչը **ամբ-** <\*ambh(i)-՝ \*ambi- «շուրջը, երկու կողմից» [8, էջ 245]: **Ապաւէն**-ին ձևով և իմաստով շատ նման է ռուս. գրքային **упование** (<у-по-ва-ние) «1. հույս, ապավեն, հենարան, 2. (կրոն.) հավատ»

№ 2172], մ.հուլանդ. waer, wāre, waer «երաշխավորություն, երաշխիք», կիւր. cywir «օրենք, հավատարիմ, անկեղծորեն» [11, \*wēr-] ևն:

<sup>9</sup> **Հաւանել** բառը ծագում է հ.-ե. \*h₂au̯an- <\*u̯en- «հավանել, սիրել, ցանկանալ, ձգտել» արմատից: Արմատի համար տե՛ս Պոկոռնիի բառարանը [12, № 2137, u̯en-1, u̯enə-]:

<sup>10</sup> Այս **-էն**-ը չպետք է շփոթել համանուն այլ ածանցների հետ [տե՛ս 10, էջ 806]:

հնաբանությունը<sup>11</sup>: Այս աստիճանի նմանությունը պատահական լինել չի կարող, հետևաբար այս զուգահեռը կարևոր փաստարկ է առաջարկվող ստուգաբանության հավաստիությանը համոզվելու առումով: Դա նաև օգնում է ճշգրտելու ռուսերեն բառի արմատի բնույթը:

### Եզրակացություններ

Այսպիսով ներկայացրինք հայերեն մի շարք բառեր (**վաւեր**, **վստահ**, **հաւատ**, **հաւաստ**, **հաւասար**, **ապաւէն**), որոնք մինչ այժմ համարվել են կա՛մ անհայտ ծագման, կա՛մ վիճարկելի ստուգաբանությամբ, կա՛մ փոխառություն այլ լեզվից: Հնչյունային, ձևային և իմաստային վերլուծությունների հիման վրա առաջարկվել են այդ բառերի ստուգաբանության նոր վարկածներ, որոնց համաձայն՝ դրանք սերված են հ.-ե. \*(a)u(e)- «ճիշտ; հավատարիմ» արմատից: Այդ արմատը հայերենում առկա է տարբերակներով՝ **վա-/վե-/վի-/ (h)աւա-/աւ-**:

Ստուգաբանված բառերն ու նրանց ածանցյալները կազմում են հոմանիշային շարքեր (**վավեր – հաւաստի – վստահելի – արժանահաւատ**, **հաւատալ – վստահել – ապաւինել**), որոնք առնչվում են իմաստային հանրայնային կապերով: Դրանց միջև փորձել ենք տեսնել նաև ձևային-ծագումնաբանական ընդհանրություն՝ հիմնավորելով դա ներքին ու արտաքին համեմատություններով և ստուգաբանական բանաձևումներով:

Հատկանշական է, որ հոդվածում որպէս հ.-ե. ծագման բնիկ հայերեն բառեր ներկայացվածներից երկուսը՝ **վ** սկզբնահնչյունով են (**վավեր**, **վստահ**), և դա օրինաչափ երևույթ է, այլ ոչ թե շեղում:

Առաջարկված ստուգաբանությունները թույլ են տալիս նաև եզրակացնել, որ կարիք չկա հայերեն նյութի հիման վրա իրանական, մասնավորապէս պահլավական ենթադրյալ նախաձևեր վերականգնելու հայերեն այն բառերի համար, որոնք կարելի է օրինաչափորեն և անմիջականորեն դուրս բերել հ.-ե. հայտնի արմատներից:

### Գրականության ցանկ

1. Աճառյան Հ., *Հայոց լեզվի պատմություն*, հ. 1: Երևան: Հայպետհրատ: 1940: 357 էջ:
2. Աճառյան Հ., *Հայերեն արմատական բառարան*, հհ. 1-4: Երևան: ԵՊՀ հրատ.: 1971-1979: 2705 էջ:
3. Աճառյան Հ., *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. 6: Երևան: ՀԳԱ հրատ.:

<sup>11</sup> Упование բառը *Викисловарь*-ը համարում է չստուգաբանված [14, упова́ние]: Բայց ակնհայտ է, որ դրա կազմում **у-**, **по-** և **-ние** քերականական մասնիկներ են, և արմատն է **ва-**ն (հմմտ. հ.եկեդ.սլավ. оупъвати, ռուս. уповать, բուլղ. упová, սերբ.-խորվ. љфати, չեխ. doufat\_կաշուբ. duchwac, dupwac, հ.լեհ. upwać, լեհ. ufac, պոլավ. úfat՝ «ապավինել» [13, упова́ние], որոնցից մի քանիսում բացակայում է **по-** մասնիկը): Այդ արմատի համար կարելի է առաջարկել **ва-** <\*ya-\*(o)u(a)- «ճիշտ; հավատարիմ» ստուգաբանությունը:

1971: 846 էջ:

4. Ջաքարյան Հ., *Հայերենի վ- սկզբնահնչյունի հնդեվրոպական ծագման մասին* // «Հայոց լեզվի պատմական ուսումնասիրության արդի խնդիրներ» (գիտական հոդվածների ժողովածու): Երևան: «Գիտություն»: 2019: էջեր 34-45:
5. Ջաքարյան Հ., Հ.-Է. *\*(a)u(e)- արմատից սերված հայերեն մի քանի բառերի ստուգաբանություն* // «Հայերենագիտական առցանց գիտաժողով», ՀԳԱ ԼԻ: Երևան: 2021 / [http://language.sci.am/sites/default/files/zakaryan\\_hovhannes\\_0.pdf](http://language.sci.am/sites/default/files/zakaryan_hovhannes_0.pdf) (ղիտվել է 21.07.2023):
6. *Հայոց լեզվի բարբառային բառարան*, հհ. Ա-Է: Երևան: «Գիտություն»: 2001-2012: 2792 էջ:
7. Մալխասեանց Ս., *Հայերեն բացատրական բառարան*, հհ. 1-4: Երևան: ՀՄՄՌ պետ. հրատ.: 1944-1945: 2409 էջ:
8. Ջահուկյան Գ., *Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան*: Երևան: ՀԳԱ հրատ.: 1987: 748 էջ:
9. Ջահուկյան Գ., *Հայ – իրանական լեզվական զուգադիպումներ* // Պատմա-բանասիրական հանդես: Հ. 2: 1995: էջեր 183-186:
10. Ջահուկյան Գ., *Հայերեն ստուգաբանական բառարան*: Երևան: «Աստղիկ»: 2010: 820 էջ:
11. Nikolaev S., *Database of Indo-European etymology* / <http://starling.rinet.ru/cgi-bin/response.cgi?root=config&morpho=0&basename=data\ie\piet&first> (ղիտվել է 24.09.2023):
12. Pokorny J., *Indogermanisches etymologisches Wörterbuch*. Bern-München, 1959 / <http://dnghu.org/indoeuropean.html> (ղիտվել է 24.09.2023):
13. *Wiktionary* / <https://en.wiktionary.org/wiki> (ղիտվել է 30.01.2024):  
*Викисловарь* / <https://ru.wiktionary.org/wiki> (ղիտվել է 30.01.2024):

**ОГАНЕС ЗАКАРЯН – Этимология некоторых армянских слов, возникших от ПИЕ корня \*(a)u(e)- «истинный, верный, преданный».** – Статья посвящена этимологии ряда армянских слов или корней, которые возникли от ПИЕ корня \*(a)u(e)- «истинный, верный, преданный» и в письменном армянском языке начинаются со звука (звуков) վ- или (h)ւլ-. Этимологии осуществлены на основе фонетического, лексического, семантического анализов, с использованием методов внутренней и внешней реконструкций и историко-сравнительного исследования. Используются материалы, включенные в известные этимологические словари и исследования, а также в словари армянских диалектов. В индоевропеистике общепринято мнение, что в армянском языке слова с начальным звуком վ- не являются исконными, за исключением примерно десятка слов, которые считаются отклонениями от нормы. В настоящей статье, однако, вскрывается закономерность происхождения исконно армянских слов с начальным звуком վ-, благодаря чему предлагаются новые этимологии. В статье предлагаются новые этимологии следующих слов: վալեր, վալահ, հալաւ, հալաւաւ, հալաւաւաւ, հալաւաւաւաւ, ալաւաւաւաւ. Эти новые этимологии являются вкладом автора.

**Ключевые слова:** армянский язык, ПИЕ язык, корневые варианты, начальный звук, детерминатив, чередование, аффикс, s-mobile, сонорный звук \*u, заимствование.

**HOVHANNES ZAKARYAN – *The Etymology of Several Armenian Words Derived from PIE Root \*(a)u(e)- «True, Faithful».*** – The article is devoted to the etymology of a number of Armenian words or roots that derived from the PIE root \*(a)u(e)- “true, faithful” and in written Armenian begin with the sound(s) վ- or (h)աւ-. Etymologies were carried out on the basis of phonetic, lexical, semantic analyses, using methods of internal and external reconstructions and comparative-historical research. Materials included in well-known etymological dictionaries and studies, as well as in dictionaries of Armenian dialects, were used.

In Indo-European studies it is generally accepted that the Armenian words with the initial sound վ- are non-original, with the exception of about a dozen words that are considered deviations from the norm. The present article reveals the regularity of the origin of native (inherited) Armenian words with the initial sound վ-, due to which new etymologies are put forward. Within the framework of the article puts forward the new etymologies of following words: վավեր, վստահ, հաւստ, հավստ, հաւսար, ապաւին. These new etymologies are the contribution of the author.

**Key words:** *Armenian, PIE, root variants, initial sound, determinative, vowel gradation, affix, s-mobile, sonorant \*u, loanword*

## ԿՐԿՆԱՍԵՌՈՒԹՅԱՆ ԻՄԱՍՏԱՅԻՆ-ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ\* 

*Երևանի պետական համալսարան*

Հայ լեզվաբանության մեջ հաճախ է անդրադարձ եղել բայ խոսքի մասի համակարգում սեռային տեղաշարժերի և կրկնասեռության խնդրին: Քննվել ու քննարկվել են երևույթի պատմական զարգացման հիմնահարցերը, փորձեր են արվել դասակարգելու ձևավորման ու զարգացման ուղղությունները՝ հաճախ ընդլայնելով կամ նեղացնելով հասկացության բովանդակությունն ու ձևավորման հնարավորությունները: Հարցի վերաբերյալ իրապես ստեղծվել է հարուստ գրականություն: Սակայն տակավին տարակարծություններ կան ոչ միայն արդեն իսկ հաճախ քննարկված հարցերի, այլև բայասեռի քերականական կարգի ենթակարգերի տարատեսակ դրսևորումների, դրանց փոխհարաբերության, ձևաբանական և շարահյուսական մակարդակներում կրկնասեռության արտահայտության յուրահատկությունների նմի վերաբերյալ: Մեր հոդվածը վերաբերում է սեռային տեղաշարժերի և կրկնասեռության ձևավորման հիմունքներին. հարցը ուսումնասիրվում է համաժամանակյա, մասամբ՝ տարժամանակյա հայեցակետերով: Ըստ առաջացման հիմունքների՝ առանձնացվում են կրկնասեռության երեք տարատեսակ՝ *իմաստային կրկնասեռություն, խնդրառական կրկնասեռություն և գործառական կրկնասեռություն*: Հատուկ անդրադարձ է կատարվում «կրկնասեռություն» հասկացության սահմանների ճշգրտմանը, և առանձնացվում են ենթակարգային հարաբերության այն դրսևորումները (գործողության ներքին խնդրառություն, բառի եզակի փոխաբերական գործածություն, համանունություն են), որոնք առնչակից են, բայց չեն նույնանում կամ չպետք է նույնացվեն կրկնասեռության հետ:

\* **Յուրի Ավետիսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ

**Юрий Аветисян** – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ

**Yuri Avetisyan** – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ [yuriavetisyan@ysu.am](mailto:yuriavetisyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0004-7475-8161>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.06.2024

Գրախոսվել է՝ 11.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

**Բանալի բառեր** — սեռային տեղաշարժեր, կրկնասեռություն, բառիմաստ, իմաստափոխական կրկնասեռություն, խնդրառական կրկնասեռություն, գործառական կրկնասեռություն, գործողության ներքին խնդրառություն, փոխաբերություն, համանունություն, լծորդության փոփոխություն

**Սեռային տեղաշարժեր:** Դրանք կատարվում են լեզվի պատմական զարգացման ընթացքում: Հին շրջանից փոխանցված բազմաթիվ բայեր ունեցել են սեռային տեղաշարժեր: Հիմնական պատճառներից մեկը **բառիմաստի փոփոխությունն է կամ բառիմաստի մեջ նրբիմաստային տեղաշարժերը**, որոնք իրենց հերթին առաջ են բերել խնդրառական փոփոխություններ: Օրինակ՝ **կանգնել** բայը գրաբարում նշանակել է «հաստատել», «կանգուն դարձնել», «կառուցանել», «կանգուն կացուցանել» և ունեցել է ներգործական սեռի նշանակություն («կանգնել զգլորեալս», կանգնել վրաններ, շենքեր), միայն **ի** լծորդությամբ (կանգնի) գործածվում էր «հանդարտի», «հանդարտեալ եկաց» իմաստներով, որ նրան տալիս է չեզոք սեռի նշանակություն («Յստակեալ կանգնեցաւ ջուրն»)<sup>1</sup>: Առաջին՝ ներգործական սեռի իմաստները անհետացել են. բառը այսօր գործածվում է միայն չեզոք սեռի նշանակությամբ՝ «Ժողովուրդը աննահանջ **կանգնեց**՝ պաշտպանելու համար իր հայրենի հողը», «Երեխան աթոռին **կանգնեց**»: **Կատակել** բառի գրաբարյան «հեզնել, ծաղրել» իմաստները («Կատակէին և ծաղր առնէին զմարգարէս նորս») այսօր հնացած են. մնացել է միայն չեզոք սեռին բնորոշ «կատակներ անել, զվարճանալ» իմաստը՝ «Նա շատ է կատակում, երբ տրամադրություն ունի»: **Ծագել** ներգործական սեռի բայի «ցայտել, ձգել ի դուրս», «երևցուցանել» իմաստները այսօր խամրել են («Ծագեա՛ գողորմութիւնս քո»), պահպանվել են բայի (ծագեմ/ծագիմ)՝ «ծայր տալ», «երևիլ», «ելանել, փայլել» չեզոք սեռին հատուկ իմաստները. «Ծագե արեգակն»: Այդպես նաև՝ **աշակերտել-կրթել (նր)/մեկի մոտ սովորել հետևորդ դառնալ(չբ), բարբախել-բախել, խփել (նր)/պարբերաբար կծկվել (չբ), գաղթել-փտարել (նր)/տեղահան լինել (չբ), կանխել-կանուխ վեր կենալ (չբ)/կանխարգելել (նր), բարգավաճել-առաջացնել (նր)/շենանալ (չբ), ծափահարել-ողջունել (նր)/ծափ տալ (չբ), բողբոջել-ձեզնել (նր)/բողբոջ արձակել (չբ), որոտալ-հնչեցնել (նր)/որոտի ձայն հանել (չբ) են:**

Բառիմաստի փոփոխությամբ պայմանավորված սեռային տեղաշարժերը ակտիվ են նաև մեր օրերում: Այսպես. **կայանել** բայը «Կայան գտնել, օթևանել, կանգ առնել, մնալ» բառարանային իմաստներով<sup>2</sup> չեզոք սեռի է («Վրացիները, ոչնչացնելով Տփղիսում **կայանող** զորքը, կարող էին գալ միանալ»), իսկ նոր ձևեր բերած «կանգնեցնել, տեղավորել» իմաստներով ներգործական է («Ոստիկանները երբեմն **մեքենաները կայանում** են խախտումներով», «Մեքենան

<sup>1</sup> Քննարկվող բառերի գրաբարյան իմաստները վերցված են «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանից, հ. 1-4, Եր., 1979-1981:

<sup>2</sup> Տե՛ս «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան», հ. 3, Եր., 1974:

կայանեցի բառով)։ Կամ՝ ըստ բառարանային տվյալների՝ կրակել բայը առաջին իմաստով նշանակում է «...կրակոց կատարել, գնդակ՝ արկ արձակել»<sup>3</sup>, այսինքն՝ չեզոք սեռի է (կրակել դիրքերի վրա, կրակել մարդկանց վրա, կրակել պատուհանին են) (թեև ըստ բառարանային նշումի՝ ներգործական է), իսկ խոսակցականում նշանակում է «Հրագնեով սպանել»։ այս երկրորդ սպանել իմաստով բայը ներգործական է (կրակել անցորդներին, կրակել Պետրոսին, կրակեց գերեվարվածներին) և որպես այդպիսին՝ տարածվում է արդի գրական լեզվում։

Արդի հայերենում սեռային տեղաշարժերը կատարվում են նաև **խնդրառական տեղաշարժերի հիման վրա**։ Խնդրառական փոփոխությունների մի զգալի մասը, ինչպես ասվեց, պայմանավորված է բայի բառական իմաստի փոփոխություններից բխող սեռային տեղաշարժերով։ Բայց ակնհայտ է նաև, որ մի շարք դեպքերում գործ ունենք հակառակ երևույթի հետ, այսինքն՝ խնդրառական փոփոխություններն իրենք են առաջ բերում սեռային տեղաշարժեր։ Այսպես, եթե **կանգնել, բարսխել, բարգավաճել, գաղթել, խոչընդոտել, ձեռնարկել, գերազանցել, կրակել** և նման բազմաթիվ բայերի սեռային տեղաշարժը, հետևավաբար և խնդրառական փոփոխությունը թելադրվում է բայի բառական իմաստի փոփոխությամբ, ապա **կարոտել, բավարարել, դավաճանել, հսկել, խթանել** և նման մի շարք բայերի խնդրառական հատկության փոփոխությունը, կարծում ենք, այլ շարժառիթներ ունի և կարող է բացատրվել այլ գործոններով, ինչպես, օրինակ, քերականական ուղիղ ձևերին նախապատվություն տալը, արտասանական էներգիայի տնտեսումը, սխալ ձևերի տարածվածությունը (խնդրառական ուղիղ ձևերը ավելի դյուրին են արտասանվում և երբեմն խոսակցական լեզվում դառնում են ավելի գործածական, ինչպես, ասենք, բացարձակ անորոշի պարագայում է՝ **ձգտում է հասնել**, փոխ.՝ **հասնելու, հարկ կա փոխել**, փոխ.՝ **փոխելու, նպատակ ունի մասնակցել**, փոխ.՝ **մասնակցելու** ևն։

Խնդրառական տեղաշարժերի հիմք կարող է դառնալ քննարկվող բայերի ցույց տված գործողության բնույթի փոփոխությունը, որի «հետևանքով» այդ բայերը քերականական նմանակությամբ ընդունում են ոչ միայն հանգման խնդիր, այլև դրան գուգահեռ՝ նաև ուղիղ խնդիր, որը ի վերջո հանգեցնում է **չեզոք սեռ>ներգործական սեռ** տեղաշարժի, օրինակ՝ **կարոտել հայրենիքին – հայրենիքը, խթանել առաջընթացին – առաջընթացը, ավստսալ/ափստսել տա-**

<sup>3</sup> Նույն տեղում։

<sup>4</sup> Վերջին շրջանում լայն տարածում է գտնում չեզոք սեռի բայերի՝ անորոշ դերբայի ուղիղ ձևով խնդրառությունը՝ փոխանակ թեքված ձևերի։ Օրինակ՝ *ձգտել հաջողության հասնելու-հասնել, նպատակ ունի աշխատելու – աշխատել, իրավունք ունի չհամաձայնելու – չհամաձայնել, հրաժարվել հանդիպելուց – հանդիպել, խանգարել աշխատելուն – աշխատել, դրդել կատարելու – կատարել, հարկ կա փոխելու – փոխել*։ Ուղիղ ձևով այսօրինակ խնդրառությանը երբեմն տալիս են **բացարձակ անորոշ/աներևույթ** անվանումը (տե՛ս **Լ. Թեյյան**, «Բացարձակ աներևույթի» գնահատման շուրջ/Արդի հայերենի քերականության հարցեր, Եր., 2016, էջ 23-43)։

րինների համար – տարիները, **ունկնդրել** ձայնին – ձայնը, **բավարարել** պահանջներին – պահանջները, **գրոհել** դիրքերի վրա – դիրքերը, **դավաճանել** հայրենիքին – հայրենիքը, **դավանել** սկզբունքի – սկզբունք, **հսկել** աշխատանքին – աշխատանքը, **հսկել** շրջապատի վրա-շրջապատը, **սպասարկել** շահերին – սպասարկել շահերը:

Հակառակ ուղղվածությամբ (**ներգործական սեռ**>**չեզոք սեռ**) տեղաշարժերը անհամեմատ քիչ են. **բարգավաճել**, **բարբախել**, **կանխել**, **գաղթել**, **ծառայել**, **ապավինել**, **փայլել**, **սահել** բայերը, որոնք գրաբարում գուցահեռ նաև ներգործական սեռի էին<sup>5</sup>, արդի հայերենում փոխել են իրենց սեռը՝ վերածվելով չեզոք սեռի բայերի: Գործընթացը շարունակվում է նաև մեր օրերում: Հետաքրքիր զարգացում ունեցավ, օրինակ, **կախել** բայը. նախկին՝ «մի բան մի ծայրից ամրացնել մի կետի» («Նկարը **կախեց** պատից») և մյուս՝ հինգից ավելի իմաստներին, որոնց հատուկ է անցողականությունը, այդ բայը վերջին շրջանում հավելեց նոր բառիմաստ՝ «դադարել աշխատելուց», «ինչ-որ ժամանակաչափով անընդունակ լինել գործելու», որով ձեռք բերեց նաև չեզոք սեռի նշանակություն, ինչպես՝ «Համակարգիչը **կախել** է պիտի սպասենք»;<sup>6</sup> «Հեռախոսս չի աշխատում. **կախեց**»:

Հայ քերականագիտության մեջ նկատվել է, որ ժամանակակից հայերենում կան մի շարք բայեր, որոնք արտահայտում են տեղափոխության, շարժման պարագայական ուղղվածության գաղափար: Այդպիսի բայերից են՝ **քայլել**, **անցնել**, **բարձրանալ**, **մագլցել**, **մտնել** ևն: Մրանք չեզոք սեռի են, բայց խոսքի մեջ երբեմն ներգործականի տպավորություն են թողնում՝ հանդես գալով ուղղական/հայցական հոլովի հետ, ինչպես՝ **անցնել ուղին/փողոցը/կամուրջը/գետը**, **մագլցել սարը/ժայռերը**, **բարձրանալ ծառը/բլուրը/երկինք**, **առուն թռչել**, **ճանապարհ գնալ**, **մտանք փետրվար ամիսը**, **քայլի ը քեզ բաժին ընկած ճանապարհը**: Այս կառույցներում ուղղական/հայցական հոլովով հանդես եկած բառաձևերը իրենց բառական նշանակությամբ հիմնականում արտահայտում են տարածական կամ ժամանակային իմաստ. «...Դրանք որոշ դեպքերում խնդրի, որոշ դեպքերում՝ պարագայի մոտեցող անդամներ են, յուրահատուկ կիրառությամբ մի տեսակ խնդիր-պարագաներ են: Նման բոլոր դեպքերում մի բան պարզ է, որ մատնացույց արված բառերը չեզոք սեռի են, և նրանց մատնանշված կիրառությունները սեռային անցումներ չեն»<sup>6</sup>:

**Կրկնասեռություն:** Կան բայեր, որոնք գործածվում են տարբեր սեռերի նշանակությամբ: Դրանք կոչվում են **կրկնասեռ բայեր**, իսկ երևույթը՝ **կրկնասեռություն**<sup>7</sup>: Կրկնասեռությունը պայմանավորված է մի քանի հիմնական գործոններով, որոնք սերտորեն կապված են սեռային տեղաշարժերի հետ.

<sup>5</sup> Տե՛ս Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Եր., 2010:

<sup>6</sup> Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, գիրք առաջին, Եր., 1962, էջ 696:

<sup>7</sup> Այս տերմինը **կրկնասեռություն**, առաջին անգամ գործածել է Ա. Աբրահամյանը: Այլ հեղինակներ երևույթը անվանում են **երկսեռություն**, իսկ այդպիսի հատկություն ունեցող բայերը՝ **երկսեռ բայեր** (տե՛ս Ա. Մուրվալյան, Հայոց լեզվի դարձվածաբանություն և բայակազմություն, Եր., 1959, էջ 241-



**ա) Իմաստափոխական կրկնաստեռություն.** Բայի իմաստափոխության հիմունքով առաջացած կրկնաստեռություն: Լեզվի զարգացման ընթացքում, ինչպես տեսանք, բառի բառական իմաստի փոփոխությունը երբեմն առաջ է բերում նաև քերականական-սեռային իմաստի փոփոխություն: Այս հիմունքով ներգործական և չեզոք սեռերի համատեղումով հանդես են գալիս մի շարք բազմիմաստ բառեր: Օրինակ՝ **աշխատել** բառի բառարանային հինգ իմաստներից (ֆիզիկական և մտավոր աշխատանք կատարել, շարժվել, պաշտոնավարել ևն) մեկը (վաստակել՝ ձեռք բերել՝ վաստակ ստանալ) ժամանակակից հայերենում գործադրվում է ներգործական սեռի նշանակությամբ, որը պահանջում է անմիջական կրող առարկա՝ ուղիղ խնդիր, ինչպես՝ «Օրվա **ապրուստը** նա **վաստակում է** մեծ դժվարությամբ»: Մյուս իմաստներով՝ **աշխատել**-ը չեզոք սեռի բայ է, ինչպես՝ «Երկար ժամանակ է՝ **աշխատում է** ԵՊՀ-ում»; «Նախարարի պաշտոնում **աշխատեց** ընդամենը մի քանի ամիս»:

**Սովորել**-ը «յուրացնել» իմաստով ներգործական է (Սովորում է դասը), իսկ «ուսանել, կրթվել» և «վարժվել, ընտելանալ» իմաստներով՝ չեզոք (**Սովորում է** արտերկրում; Շունը վերջապես **սովորեց** տիրոջը; Շատ արագ **սովորեցինք** այդ միջավայրին): Նմանապես՝

- **Ապրել**-1. Բնակվել - *Ապրում է Երևանում*: 2. Զգալ, վերապրել, ունենալ - *Ապրեց երջանիկ կյանք ու լավ օրեր*:

- **Անցնել**-1. Գնալ, հեռանալ - *Անցան ձախորդ օրերը*: 2. Սովորել, ուսանել - *Այդ թեման դեռ չենք անցել*:

- **Լսել**-1. Ունկնդրել - *Լսել երաժշտություն*: 2. Հնազանդվել - *Պետք է լսել մեծերին*:

- **Նայել**-1. Հայացքը հառել - *Նայել նկարին*: 2. Խնամել - *Նայել հիվանդին*: 3. Կարդալ-*նայել օրվա թերթերը*:

- **Վայելել**-1. Ըմբռնել - *Վայելել կյանքը*: 2. Հարմարել, պատշաճել - *Այդ խոսքերը քեզ չեն վայելում*:

Կամ՝ «**Թագավորել** երկար տարիներ» (չբ) և «**Թագավորել** զարունները» (նբ); «**Քամին է խաղում** թփերում» (չբ) և «**Խաղալ** ֆուտբոլ» (նբ); «Անհույս **ողբում էր**» (չբ) և «**Ողբում է** իր ցավն ու կորուստները» (նբ); «**Ծաղկեցին** ծառերը» (չբ) և «Գիրքը **ծաղկել է**» (նբ); «**Սպասեց** մինչև ուշ գիշեր» (չբ) և «Էլ ի՞նչ ես **սպասում** նրանից» (նբ); «Ինձնից **բռնեցեք**, խորտակված մարդիկ» (չբ) «Միրում էր **ձուկ բռնել**» (նբ):

Իմաստափոխական կրկնաստեռության հետ չպետք է շփոթել **համանունների** սեռային տարբերությունները: Հասկանալի է, որ դրանք տարբեր բառեր են՝ տարբեր սեռերով: Այսպես՝ **հարել** բառը (*հարվածել, մերսել, հալեցնել* ևն) իր բոլոր 8 իմաստներով ներգործական սեռի է (կոշիկը **հարեց** ոտքը, **հարել** ձու/խնոցի/հարիսա), իսկ դրա **հարել** (<յարել) համանունը առաջին երկու իմաստներով

244): Կարծում ենք՝ շատ ավելի հաջող են **կրկնաստեռություն** և **կրկնասեռ բայեր** տերմինները:

(կցել, կպցնել, կողքին դնել, ավելացնել) ներգործական է (...Ասաց նա և անմիջապես **հարեց**. Ես հետևանքի համար պատասխանատու չեմ; Մուտը ստին **հարեց**), մյուս երեք իմաստներով (ուղղության՝ տեսության՝ շարժման կողմնակից դառնալ, մոտենալ/նմանվել, միանալ)՝ չեզոք (Շատերն են **հարում** այդ շարժմանը): Մրանց չհամընկնող սեռային նշանակությունները (**հարել**-հարվածել, **հարել**-մոտենալ, միանալ) չեն կարող կրկնասեռություն համարվել: Երկրորդ **հարել** (յարել) բայը, առանձին վերցրած, կրկնասեռ է: **Մեկնել** (ուղևորվել, ճամփա ընկնել) բայը չեզոք սեռի է (Մեկնեց Եվրոպա), իսկ համանուն **մեկնել** բազմիմաստ բառը (1. Պարզել, կարկառել, երկարել: 2. Միտքը՝ գրվածքը մեկնաբանել, բացատրել) ներգործական սեռի է: Այստեղ կրկնասեռություն չկա: (Արդի արևելահայերենի բացատրական բառարանները **մեկնել**-ը տալիս են որպես բազմիմաստ բառ. այդ տվյալներով՝ բայը պետք է համարվեր կրկնասեռ):

Երբեմն ներգործական սեռի բայերը նախադասության մեջ չեն ունենում ուղիղ խնդիր: Այս դեպքում դրանք ցույց են տալիս ընդհանրական գործողություն և, իհարկե, չեն դադարում ներգործական սեռի բայ լինելուց: Օրինակ՝ «Ես լավ եմ սովորում», «Հաճախակի եմ կարդում», «Երեք օր է՝ չի տեսնում»:

Բայասեռին վերաբերող առանձին նորագույն աշխատանքներում անհարկի զարգացում են այն տեսակետը, որ այսպիսի կիրառություններում ներգործական սեռի բայերը հանդես են գալիս որպես չեզոք սեռի բայեր (իբրև թե առկա է կրկնասեռություն), ինչպես՝ *քարոզ կարդալ(նք) և քիչ կարդալ(չք), նվագել կիթառ(նք) և անվերջ նվագել(չք), գուր ես կրկնում(չք) և անունս ես կրկնում(նք), առողջ այքով տեսնել(չք) և ողջ աշխարհը տեսնել(նք)* և այսպես շարունակ<sup>8</sup>: Այս տրամաբանությամբ՝ ի վերջո ստացվում է այնպես, որ գործնականում բոլոր ներգործական սեռի բայերը նաև չեզոք սեռի են, քանի որ դրանք սկզբունքորեն կարող են գործածվել այսպիսի ընդհանրական նշանակությամբ՝ չունենալով անմիջաբար կրող առարկա, ինչպես՝ *լավ – գրել/նկարել/երգել/տեսնել/կառուցել/պատասխանել/խոսեցնել/բարձրացնել* ևն: Պնդումը համոզիչ չէ, քանի որ այս բայերի անցողականության իմաստային հատկանիշը ակնհայտ է (թափահարել/կարդալ/տեսնել—>ի՞նչ(ը)), պարզապես կրող առարկան՝ ուղիղ խնդիրը, այդ կիրառություններում ձևականորեն արտահայտված չէ, որը պատճառ է դառնում բայի ընդհանրական իմաստի ուժեղ դրսևորման: Բոլոր դեպքերում, այս կառույցներում ուղիղ խնդիրը սպասելի է ու ենթադրվում է: Ժամանակակից հայերենում այս գործածությունները «ոչ մի կերպ չի կարելի դիտել իբրև չեզոք սեռի անցման երևույթ»<sup>9</sup>: «Երբ ներգործական բայերը գործածվում են առանց օբյեկտի, իրենց ո՛չ բառային, ո՛չ էլ քերա-

<sup>8</sup> Տե՛ս **Խ. Բաղիկյան**, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանություն, Եր. 2010, էջ 142: **Տ. Սաֆարյան**, Հայերենի կրկնասեռ բայերը, Եր., 2013, էջ 56-64:

<sup>9</sup> **Ս. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, էջ 699:

կանական նշանակությունը չեն փոխում և, հետևաբար, չեն փոխում նաև իրենց սեռը... ցույց են տալիս գործողություն ընդհանրապես»<sup>10</sup>:

**բ) Խնդրառական կրկնասեռություն.** Խնդրառության փոփոխության հիմունքով առաջացած կրկնասեռություն: Մա հաճախ գուգակցվում է իմաստային հիմունքով փոփոխություններին, որի մասին խոսվել է՝ *կրակել մեկի վրա* և *կրակել մեկին*; *գրոհել դիրքերի վրա* և *գրոհել դիրքերը* ևն<sup>11</sup>:

Վերը թվարկված վերացական բայերի մասին պետք է իմանալ նաև հետևյալը: Մի շարք դիմավոր բայեր, որոնք թեև հիմնական կիրառություններում նյութական իմաստ ունեն, բայց ստորոգելի հետ գործածվելիս ունենում են վերացական բայի արժեք՝ չեզոք սեռի նշանակությամբ: Այդ գործածությունը պետք է տարբերել դրանց բուն՝ նյութական իմաստով գործածություններից, որոնցում դրանց մի մասը չի գործածվում չեզոք սեռի նշանակությամբ: Օրինակ՝ «Կարճ ժամանակ անց այդ անձնավորությունը *նախարար նշանակվեց*» (չբ (հանգույց)) և «Հանդիպման օր *նշանակվեց* հաջորդ հինգշաբթի» (կբ (պարզ ստ.)); «Նա *հաշվում* էր իր ունեցած գումարը» (նբ (պարզ ստ.)) և «Այդ բոլորը *հաշվեք կորած*. դուք էլ ոչինչ չունեք» (չբ (հանգույց)); «Հեռվում *երևաց* մառախուղի մեջ թաղված քաղաքը» (չբ (պարզ ստ.)) և «Նա ինձ մի պահ *կարճահասակ երևաց*» (չբ (հանգույց)); «Չեմ կարծում, որ նա այդպես արտահայտված լինի. դա քեզ ընդամենը *թվացել է*»; «*Թվաց*, թե հարսանիք է մի...» (չբ (պարզ ստ.)) և «Այդ ամենը ինձ *երազ թվաց*», «Նա ինձ միշտ ազնիվ *մարդ է թվացել*» (չբ (հանգույց)); «*Կարծեցի*՝ սխալվել եմ» (նբ (պարզ ստ.)) և «Մխալվել եմ, որ քեզ ինձ մտերիմ *ընկեր եմ կարծեք*» (չբ (հանգույց)):

Կան չեզոք սեռի բայեր, որոնք փոխաբերաբար գործածվելիս ձեռք են բերում ներգործական սեռի բայերի նշանակություն և ունենում են ուղիղ խնդիր, օրինակ՝ «-*Ոռնացել է* իր վիշտը անկշտում, - *Ոռնացել է* անձուկ իր *տառապանքը*, Անասնական իր *քաղցը...*», «*Մեր են դալլայում* սոխակ ու տատրակ», «-Չանգերը *տազնապ են դողանջում*», «Երբ գուսան Համազասպն է տեղ ման գալիս *ոտանավորներ որոտալու...*»:

Մրանք եզակի, անհատական փոխաբերական կիրառություններ են և չեն փոխում բայերի հիմնական սեռային նշանակությունը: Եվ դարձյալ համոզիչ չէ հակառակ պնդումը, թե՝ «անկախ անհատական-ոճական ու ժամանակա-

<sup>10</sup> Մ. Ասատրյան, Բայի սեռերը ժամանակակից հայերենում, Եր., 1959, էջ 119:

<sup>11</sup> Լեզվաբանական գրականության մեջ նշվում են խնդրառական տեղաշարժերը պայմանավորող նաև այլ, այսպես կոչված, մասնակի գործոններ՝ լեզվի տարբերակային ձևերի և օտար լեզուների ազդեցություն, լեզվական միջոցների տնտեսում, սխալակազմություններ և դրանց տարածվածությունը ևն: Այս և այլ ընդհանրական գործոնների հիմքով են բացատրվում, օրինակ, շատ գործածական մի շարք բայերի խնդրառական անցումները վերջին տասնամյակներին՝ կենդանի հարցման արդյունքներով և վիճակագրությամբ (տե՛ս Լ. Մարգարյան, Բայերի սեռային անցումները արդի արևելահայերենում//Բանբեր Երևանի համալսարանի, Եր., 2014, թիվ 3, էջ 45-54):

վոր բնույթից՝ այս բայերի սեռային տեղաշարժը ակնհայտ է, ինչը թույլ է տալիս սրանք ևս դասել կրկնասեռ բայերի կողքին»<sup>12</sup>: Այսպիսի կիրառություններ անընդհատ կարող են ստեղծվել չեզոք սեռի ցանկացած բայով, բայց դա բնավ չի նշանակում, որ փոխվում է բայի սեռը: Համոզիչ են նախորդ լեզվաբանների պնդումները, միայն այն վերապահությամբ, որ դրանք «պատահական» կամ «բացառիկ» կիրառություններ չեն. «Բայերի փոխաբերական կիրառությունները եզակի, **պատահական** բնույթ են կրում և բնականաբար չեն ազդում նրանց հիմնական քերականական սեռային ձևավորման վրա»<sup>13</sup>, և որ դրանք «**բացառիկ** գործածություններ են և բոլորովին էլ չեն փոխում թվարկված բայաձևերի սեռի ընդհանուր հասկացությունը» (*ընդգծումները — Յու. Ա.*). այսպիսի դեպքերում, անկախ որևէ փոփոխությունից, բայը մնում է նույն սեռի<sup>14</sup>:

Չեզոք սեռի որոշ բայեր կարող են ունենալ ուղիղ խնդիր, որը ձևավորվում է դրանց արմատական մասով կամ դրա հոմանշային տարբերակով՝ *զարկ զարկել, վազք վազել, պար պարել, նինջը ննջել, կոչ կոչել, կռիվը կռվել, գրույցը գրուցել, ծուխ ծխալ*. «Սոնան մեռավ երեխայի վրա, և **լաց լացեցին** նրա մայրը, բարեկամները», «Դառնաղի **ողը են մորմոքում** գյուղի կանայք»: «Նման դեպքերում բայը իր յուրահատուկ շարունակությունն է գտնում ներքին խնդրի մեջ: Դրանք ևս չեզոք սեռի բայեր են»<sup>15</sup>: Սա կոչվում է **գործողության ներքին խնդրառություն**, իսկ այդ կառույցներում առկա ուղիղ խնդիրը՝ **ներքին ուղիղ խնդիր**: Ի դեպ, սա շատ տարածված իրողություն է գրաբարում:

**գ) Գործառական կրկնասեռություն.** կրավորական սեռի բայերի մի մասը գործածվում է **միայն որպես կրավորական**՝ *առանձնացվել, անհծվել, առաքվել, արհամարհվել, արտադրվել, արտորվել, բերվել, բարձրացվել, բնութագրվել, գծվել, գովաբանվել, գործադրվել, երգվել, ծաղրվել, կալանավորվել, հերքվել, հրավիրվել, սիրվել, ուղարկվել, փայլեցվել* ևն: Մրանց ներգործող խնդիրը սպասվում է կամ ենթադրվում է. «Համակարգիչը **բերվեց** (ո՞ւմ կողմից)», «Կարմիր վարդերը **առանձնացվեցին** (ո՞ւմ կողմից)», «Նախագիծը վաղուց **գծվել է** (ո՞ւմ կողմից): Մյուս մասը կարող է գործածվել և՛ որպես կրավորական, և՛ որպես չեզոք՝ *ազատվել, այրվել, անջատվել, բաժանվել, բացվել, բուժվել, դաստիարակվել, թեքվել, կծկվել, հաստատվել, մարզվել, նեղվել, նկարվել, շարժվել, պատրաստվել, սկսվել, վառվել, քննարկվել, օրորվել* ևն: Մյուս մասը կարող է հանդես գալ և՛ կրավորական, և՛ չեզոք սեռի իմաստներով՝ **նկարահանվել, բացվել, անջատվել, նկարվել, ազատվել, գոհվել, ավարտվել, հպվել, հմայվել, մեկնվել** ևն: Այս դեպքում բառական իմաստը նույնպես կարող է դեր ունենալ. *Լույսը բացվեց (չք) / Դուռը բացվեց քամուց (կք); Կամավոր գրվեց (չք) / Գ-*

<sup>12</sup> **Տ. Մախարյան**, Հայերենի կրկնասեռ բայերը, Եր., 2013, էջ 66:

<sup>13</sup> «Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Եր., 1974, էջ 306:

<sup>14</sup> Տե՛ս **Հ. Բարսեղյան**, Արդի հայերենի բայի և խոնարհման տեսություն, Եր., 1953, էջ 131:

<sup>15</sup> **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, էջ 679:

րավորը **գրվեց** իմ կողմից (կբ); **Մեկնվեց** բազկաթոռին (չբ) / Նարեկացու Մատյանը **մեկնվեց** ուսուցչի կողմից (կբ); Նա շտապ **նկարվեց** (չբ) / Այդ գեղեցիկ բնապատկերը հատորեն **նկարվեց** վարպետի կողմից (կբ):

Անդրադարձ բայերը առանց ձևային փոփոխություն կրելու կարող են արտահայտել թե՛ կրավորական, թե՛ չեզոք սեռի իմաստ՝ **լվացվել, զարդարվել, սափրվել, սանրվել, հանվել, փոխվել, լվացվել** ևն. *Սպասուհին շտապ լվացվեց*; / *Սպասքը շտապ լվացվեց (սպասուհու կողմից)*: Որոշ լեզվաբաններ (Ա. Աբրահամյան և ուրիշներ) կրավորական-չեզոք սեռային անցումները չեն ներառում կրկնասեռության մեջ այն հիմնավորմամբ, որ դրանք ոչ սկզբնաձևային կազմություններ են. ունեն կրավորական վ մասնիկը: Որոշ քերականություններում նշվում են կրկնասեռության այլ՝ ավելի մասնավոր պատճառներ.

**ա)** Կրկնասեռություն՝ լծորդության պատմական փոփոխության և նույնացման հիմունքով. *մարել, խռովել, երկարել, խամրել* և ներգործական սեռի մի շարք այլ բայեր գրաբարում ունենին **ի** լծորդությամբ գուգահեռ չեզոք ձևերը՝ *մարիլ, խռովիլ, երկարիլ, խամրիլ* ևն: Վերջին ձևերի անհետացմամբ՝ բայերը նույնացել են, բայց սեռային տարբերությունը մնացել է, որը խոսքում դրսևորվում է, այսպես. «**Մարել**-1. Հանգցնել – «Իմ աչքերի մեջ այնքա՛ն կրակներ եմ **մարել** ես» (նբ): 2. Հանգչել, անհետանալ-«Կյանքս կանցնի, **կմարի**...» (չբ): **Երկարել**-1. Ձգձգվել – «Զրույցը **երկարեց**» (չբ): 2. Մեկնել, պարզել – «Նա **երկարեց** ձեռքը, որ վերցնի իրեն մեկնված թղթապանակը» (նբ): Ի դեպ, նույն բայի **ի>ե** լծորդական փոփոխությամբ ձևավորված այս բայերը չպետք է շփոթել լծորդական տարբերություն ունեցող այն բայերի հետ, որոնք տարբեր բառեր են, ինչպես՝ **Օխել**-«**Օխեց** վերջին սիգարը» (նբ), **Օխալ**-«**Օխում էր** այրված շենքը» (չբ); **Երերել**-«Գրիգորը գլուխը **երերեց**» (նբ), **երերալ**-«Սեղանը **երերաց**» (չբ): Այս բայերը խիստ սակավաթիվ են, մի քանիսի այս կամ այն իմաստն էլ հնացել է: Տարբեր բայեր են. պատկանում են բայի կառուցվածքային տարբեր տիպերի: Եվ վերջապես, տարբեր բառեր են:

**բ)** Կրկնասեռություն՝ գործողության անցման լիակատար և մասնակի բնույթի կամ դրանցից մեկի կամ մյուսի ակտիվացման հիման վրա՝ «Արևը **բուրում** էր խունկ ու երգ» (նբ) / «Նշենին անուշ **բուրում** էր» (չբ); «**Սուլում** է բարձրաձայն» (չբ) / «**Սուլում** է ծանոթ մի եղանակ» (նբ); «Պայքարելու եմ, քանի դեռ **շնչում** եմ» (չբ) / «Դուրս եկա մաքուր օդ **շնչելու**» (նբ); «**Խանգարում** է մեր գործին» (չբ) / «**Խանգարում** է մեր հանգիստը» (նբ); «**Վնասել** է ծառերը» (նբ) / «**Վնասել** է գործերին» (չբ)<sup>16</sup>:

Դժվար չէ նկատել, սակայն, որ կրկնասեռության վերջին գործոնները կամ պատճառները ի վերջո դարձյալ հանգում են բառի իմաստային փոփոխություններին, որ երևում է ինչպես լծորդական տարբերակներում (բառիմաստները փակագծերում տրված են), այնպես էլ վերջին կետերում նշված բայերի՝ գործողութ

<sup>16</sup> Տե՛ս Ա. Աբրահամյան, Բայը ժամանակակից հայերենում, էջ 706-716:

յունների ընդհանուր կամ մասնավոր բնույթների ակտիվացմամբ: Օրինակ՝ **Բուրեղ-1**. Հոտ արձակել, տարածել՝ «Մենյակը խունկ է բուրում» (նբ): 2. Տարածվել, հոտ գալ՝ «Ինչ-որ բան անուշ բուրում է» (չբ): **Շնչել-1**. Շնչառության գործողություն կատարել՝ «Հիվանդը քիչ առաջ ծանր և անհամաչափ էր շնչում, հիմա այլևս չի շնչում» (չբ): 2. Օդ ներս քաշել՝ «Քաղցր էր շնչել լեռնային օդը» (նբ):

Ժամանակակից հայերենում սովորական են չեզոք>ներգործական, կրավորական>չեզոք, ինչպես նաև ներգործական>չեզոք, չեզոք>կրավորական սեռային անցումները: Արդի հայերենին բնորոշ չէ կրավորականի ձևով ներգործական իմաստ արտահայտելը: Այդպիսի օրինակներ երբեմն հանդիպում են բարբառներում, և դրանցից մի քանիսը հազվադեպ ներթափանցում են նաև գրական լեզու: Այսպես, օրինակ՝ **տարվել** բառի բառարանային իմաստներից է «Ուրև է բան տանուլ տալ՝ կորցնել, տանուլ տալ (հատկապես փող թղթախաղի մեջ)», որի դիմաց բառարանում կա **չբ** նշումը, մինչդեռ հենց բառարանային այդ իմաստով **տարվել**-ը խոսքում գործածվում է ներգործական սեռի նշանակությամբ. «Նա թղթախաղում մեծ գումար է տարվել»: Նույնպիսի գործածություն ունի **վ** ածանցով **կրվել** բայը. «Նա կրվեց իր ողջ կարողությունը»: Այս բայերը փաստորեն կարող են գործադրվել երեք սեռերի նշանակությամբ: Ա. Աբրահամյանը նշում է բարբառներում կամ էլ «թյուրիմացությամբ» գրականության մեջ գործադրված նաև այլ օրինակներ (**ցրվեց** բարկությունը/ջուրը, **խոստովանվեց** իր սերը նն), որոնք արդի գրական հայերենին բնորոշ չեն: Լեզվաբանը սեռային նշանակության փոփոխության որոշ միտում է արձանագրում նաև **բաժանորդագրվել** բայի դեպքում, որը, լինելով չեզոք/կրավորական սեռի բայ, ըստ նրա, «հազվադեպորեն հանդիպում է նաև հայցական խնդրառությամբ». բերում է ժամանակի մամուլից քաղված մի օրինակ՝ «Քաղաքացիներ, ժամանակին **բաժանորդագրվեցեք թերթեր և ամսագրեր**»<sup>17</sup>: Այս կարծիքի ձևակերպումից անցել է կես դարից ավելի, սակայն բայի սեռային այդ նշանակությունը, ինչպես վկայում են գրական լեզվի փաստերը (մոտ 10/1-2-ի հարաբերությամբ), այդպես էլ չի հանրայնացվել և արդի գրական հայերենում ունի գերազանցապես սեռական-տրականով խնդրառություն, ինչպես՝ «բաժանորդագրվե՛ք յուրուրյան մեր **ալիքին**», «բաժանորդագրվել է **«Time» ամսագրին**», «բաժանորդագրվել **նորություններին և առաջարկներին**»: Բայց նաև՝ «Բայց ո՞վ է խանգարում բաժանորդագրվել, ասենք, «Հայկական ժամանակ»»:

Այսպիսով՝ կրկնասեռության դրսևորումների հետ չպետք է շփոթել՝ **ա) Գործողության ներքին խնդրառությունը**. չեզոք սեռի բայերը գործածվում են ներգործական սեռի նշանակությամբ. կոչվում է գործողության **ներքին խնդրառություն**. խնդիրն արտահայտվում է բայի արմատական մասով՝ *Օհ-ծաղ ծիծաղել: Լաց լացել: Պարը պարել: Կռիվը կռվել: ք) Չեզոք սեռի բայերի*

<sup>17</sup> Ա. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 657-660:

**փոխաբերական գործածությունը**, երբ դրանք առնում են ներգործական սեռի իմաստ՝ *Ձանգը զրնգում է (=հաղորդում է) օրվա գույժը: Ոռնաց (=հայտնեց) իր քաղցը: Սայլը ճռնչում էր (=երգում էր) մի երգ: Բառաչում (=երգում է) է իր սերը: Հառաչում է (=պատմում է) մոռացված մի պատմություն:* Սրանցում ներգործական սեռի նշանակությունը ժամանակավոր է՝ պայմանավորված բառի փոխաբերական գործածությամբ: **գ) Համանուն բառերի սեռային տարբեր իմաստները:** Օրինակ՝ **շրջել** «շրջագայել, ման գալ» և **շրջել** «շուռ տալ, փոխել, թերթել» բայերը տարբեր բառեր են՝ համանուններ. առաջինը չեզոք սեռի բայ է (**շրջել** քաղաքի փողոցներում), իսկ երկրորդը՝ ներգործական (**շրջել** պատմության էջը): Այս դեպքում խոսք չի կարող լինել կրկնասեռության մասին: **դ) Լծորդական տարբերություններով պայմանավորված սեռային տարբերությունները.** **թվել**-«**Թվեց** իր համախոհներին» (նբ) և **թվալ**-«**Դա** ինձ երազ **թվաց**» (չբ); **Ծփել**-«**Ձուն** պետք է լավ **ծփել**» (նբ) և **ծփալ**-«**Ծփում** է Սևանը» (չբ): Սրանք բառարանային տարբեր միավորներ են և հետևաբար չեն կարող համարվել միևնույն բայի սեռային տարբերակներ՝ կրկնասեռ բայեր<sup>18</sup>:

**Ամփոփում:** Բայական համակարգի՝ տեղաշարժերով ամենից հարուստ ենթահամակարգերից մեկը բայասեռի քերականական կարգն է: Լեզվի պատմական զարգացման ընթացքում այն հաճախ է ենթարկվում ձևաիմաստային փոփոխությունների՝ պայմանավորված ներլեզվական և արտալեզվական մի շարք գործոններով՝ բայի բառական իմաստի փոփոխություն, բայի կիրառական յուրահատկություններ, հաղորդակցական էներգիայի տնտեսում, լեզվի տարբերակային ձևերի և օտար լեզուների ազդեցություն, խոսակցական լեզվից փոխանցվող սխալակազմություններ ևն: Հենց այդ գործոններն էլ պայմանավորում են սեռային տեղաշարժերի բնույթն ու ուղղվածությունը (չեզոք>ներգործական, կրավորական>չեզոք, հազվադեպ՝ ներգործական>չեզոք) և դրանց հետ անմիջականորեն առնչվող կրկնասեռության դրսևորման տեսակները՝ **իմաստային կրկնասեռություն, գործառական կրկնասեռություն, խնդրառական կրկնասեռություն:** Ե՛վ նշված գործոնները, և՛ կրկնասեռության նշված երեք տեսակները հանգամանորեն քննվում են հոդվածում:

**ЮРИЙ АВETИCЯH – Семантико-грамматические основы двузалоговости.** – В армянском языкознании часто затрагивалась проблема залоговых сдвигов и двузалоговости в системе глагольной части речи. Были рассмотрены и обсуждены проблемы исторического развития этого явления, предприняты попытки классифицировать направления его формирования и развития, часто расширяя или сужая содержание и возможности формирования этого понятия. По этому вопросу действительно была создана

<sup>18</sup> Սեռային տեղաշարժերի և հատկապես կրկնասեռության հետ առնչվող շատ իրողություններ բացատրվում և նկարագրվում են դրանց տարժամանակյա քննությամբ: Այդ մասին մանրամասն տե՛ս **Հ. Զաքյան**, Արդի հայերենի կրկնասեռ բայերը, Եր., 2019:

богатая научная литература. Однако все еще существуют разногласия не только по уже часто обсуждаемым вопросам, но и по различным проявлениям подкатегорий грамматической категории глагольного залога, их взаимосвязи, об особенностях выражения двузалоговости на морфологическом и синтаксическом уровнях и т. д. Данная статья посвящена основам формирования залоговых сдвигов и двузалоговости. Вопрос исследуется с точки зрения синхронического анализа и частично - в диахроническом аспекте.

Одной из наиболее богатых подсистем глагольной системы является грамматическая категория залога глагола. В ходе исторического развития языка он часто претерпевает формосмысловые изменения, вызванные рядом внутриязыковых и внеязыковых факторов: это изменение лексического значения глагола, особенности употребления глагола, влияние вариативных форм языка и иностранных языков, экономией коммуникативной энергии, неправильными конструкциями, передаваемыми из разговорной речи и т. д. Именно эти факторы или основы определяют характер и направленность залоговых сдвигов (нейтральный>действительный, пассивный >нейтральный, редко - действительный>нейтральный) и непосредственно связанные с ними типы проявления двузалоговости: семантическая двузалоговость, функциональная двузалоговость, двузалоговость грамматического управления. Как упомянутые основы, так и упомянутые три типа двузалоговости подробно рассматриваются в этой статье. Особое внимание уделяется уточнению границ понятия двузалоговости, и выделяются те проявления отношения подкатегорий (внутреннее грамматическое управление действия, уникальное метафорическое использование слова, омонимия и т. д.), которые соприкасаются, но не отождествляются или не должны отождествляться с двузалоговостью.

**Ключевые слова:** залоговые сдвиги, двузалоговость, смысл слова, двузалоговость семантического сдвига, двузалоговость грамматического управления, функциональная двузалоговость, внутреннее грамматическое управление действия, метафора, омонимия, смена спряжения

**YURI AVETISYAN – *Semantic and Grammatical Foundations of Double-Voicing.*** – In Armenian linguistics, the problem of voice shifts and double-voicing in the verb system has often been touched upon. The problems of the historical development of this phenomenon were considered and discussed, attempts were made to classify the directions of its formation and development, often expanding or narrowing the content and possibilities of the formation of this concept. A rich scientific literature has indeed been created on this issue. However, there are still disagreements not only on the issues already frequently discussed, but also on various manifestations of the subcategories of the grammatical category of the verbal voice, its interrelation, on the features of the expression of double-voicing at morphological and syntactic levels, etc. This article is devoted to the basics of the formation of voice shifts and double-voicing. The issue is investigated from the point of view of synchronic analysis and partially from the diachronic aspect.

One of the richest subsystems of the verb system is the grammatical category of the verb voice. In the course of the historical development of a language, it often undergoes formative changes caused by a number of intra-linguistic and extra-linguistic factors: a lexical meaning change of



the verb, the peculiarities of the verb using, the influence of variable language versions and foreign languages, the economy of communicative energy, incorrect constructions transmitted from spoken speech, etc. It is these factors or foundations that determine the nature and direction of the voice shifts (neutral > active, passive > neutral, and rarely, active > neutral) and the types of manifestation of double-voicing directly related to them: semantic doubleness, functional doubleness, doubleness of grammatical government. Both the mentioned fundamentals and the mentioned three types of double-voicing are discussed in detail in this article. Special attention is paid to clarifying the boundaries of the concept of double-voicing, and those manifestations of the relationship of subcategories (internal grammatical government of action, unique metaphorical use of a word, homonymy, etc.) that touch, but are not identified or should not be identified with double-voicing are highlighted.

**Key words:** *voice shifts, double-voicing, word meaning, double-voicing of semantic shift, double-voicing of grammatical government, functional double-voicing, internal grammatical government of action, metaphor, homonymy, conjugation change*

## ԱՐԴԻ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՀԱՐՍՏԱՑՈՒՄԸ ԸՍՏ «ՆՈՐ ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅԿԱԶԵԱՆ ԼԵԶՈՒԻ» ԲԱՌԱՐԱՆՈՒՄ ՉՎԿԱՅՎԱԾ ԲԱՌԵՐԻ

ՍՈՒՍԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ , ՆԱԻՐԱ ՊԱՐՈՆՅԱՆ\*   
*Երևանի պետական համալսարան*

Ինչպես հայտնի է, լեզվի բաղադրիչներից ամենազգայունը բառապաշարն է, որն անմիջականորեն արտահայտում է հասարակական կյանքում կատարվող փոփոխությունները: Հայերենի բառապաշարը անընդհատ ենթարկվել է փոփոխության, համարվել բազմաթիվ նորակազմ բառերով ու կապակցություններով, որոնք կարիք ունեն հանգամանալից քննության: Կան բառեր, որոնք սկզբից ցայսօր կենդանի են մնացել և պահպանել են իրենց հիմնական նշանակությունները: Կան այնպիսիք, որոնք մնացել են կենդանի, սակայն ստացել են նոր իմաստներ: Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»-ում և արդի հայերենի բացատրական բառարաններում վկայված բառանյութի համեմատությամբ փորձել ենք ցույց տալ գրաբարի բառապաշարի մեջ կատարված տեղաշարժերն ու փոփոխությունները, բառապաշարային որոշ յուրահատկություններ: Յուրաքանչյուր լեզվի հարստությունը պայմանավորված է նրա բառապաշարի հարստությամբ, որը ներառում է զանազան բառաշերտեր, որոնք էլ իրենց բառամթերքով ու գործառնությամբ առանձնանում են և ինքնուրույն խմբեր կազմում: Մենք առանձնացրել ենք իմաստային տարբեր դաշտերի պատկանող բառեր, կատարել դրանց քննությունը՝ ներկայացնելով այդ խմբերում ընդգրկված արմատական բառերի ստուգաբանությունը: Հիմնվելով բառարանների վիճակագրական տվյալների

\* **Սուսաննա Գրիգորյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

**Сусанна Григорян** – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Susanna Grigoryan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of the Armenian Language History and General Linguistics

Էլ. փոստ՝ [susannagrigoryan@ysu.am](mailto:susannagrigoryan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0008-6098-9259>.

**Նաիրա Պարոնյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

**Наира Паронян** – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Naira Paronyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of the Armenian Language History and General Linguistics

Էլ. փոստ՝ [naira.paronyan@ysu.am](mailto:naira.paronyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0009-0007-3161-2834>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 27.05.2024

Գրախոսվել է՝ 12.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

վրա՝ պարզ է դառնում, որ տարբեր թեմատիկ խմբերում ներառված որոշ բառեր, որոնք որպես բառային միավորներ արձանագրված են բառարաններում, այժի են ընկնում իրենց պասիվ գործածությամբ, գործառնապես կենսունակ չեն, կիրառապես և քանակապես զիջում են մյուսներին, սակայն չի բացառվում, որ դրանք ևս կարող են հետագայում համայրել լեզվի կենսունակ բառապաշարը:

**Բանալի բառեր** - բառապաշար, իմաստային դաշտ, արմատական բառեր, փոխառություն, բառաստեղծում, նորակազմություն, արևելահայերեն, ստուգաբանություն, եզրույթ, քերականություն

Լեզվի զարգացմանը համահունչ բառապաշարը կրում է փոփոխություններ. նոր բառեր են ստեղծվում՝ պայմանավորված հասարակական կյանքում տեղի ունեցող նոր երևույթներով, կամ գործածությունից դուրս են գալիս բառեր, որոնք հնացել են: Ա. Աբրահամյանը նշում է, որ լեզվի բաղադրիչներից ամենագալայունը բառապաշարն է, և ի տարբերություն լեզվական համակարգի մյուս բաղադրիչների՝ ամենաշատ փոփոխություններն այստեղ են կատարվում: Բառապաշարի տեղաշարժերն արտահայտվում են նոր բառերի գործածությամբ, եղած որոշ բառերի իմաստավորմամբ, հնացածների և իրենց դարն ապրածների մոռացությամբ: Կարևորն այն է, որ բառապաշարի ընդլայնման համար օգտագործվում է արդեն գոյություն ունեցող ատաղձը կամ պատրաստի նյութը: Այստեղ գործ ունենք այն հիմնական ուղիների ու միջոցների հետ, որոնք դառնում են լեզվի բառապաշարում նոր բառերի առաջացման հիմք<sup>1</sup>: Ընդհանրապես լեզվի բառապաշարի հարստացումը կատարվում է արտաքին և ներքին միջոցներով: «Հայոց լեզվի բառապաշարի հարստացման կարևորագույն միջոցը նրա ներքին հնարավորություններն են՝ սեփական բառակազմությունն ու բառաստեղծումը, բառերի վերաիմաստավորումը: Հայերենի բազմաթիվ տերմիններ ստեղծվել ու այժմ էլ կազմվում են մեր լեզվի սեփական միջոցներով»<sup>2</sup>: Լեզուների բառային կազմի հարստացման արտաքին միջոցը նաև փոխառությունն է, որն անխուսափելի երևույթ է:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել արդի արևելահայերենի բառապաշարի հարստացումը ըստ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանում չվկայված բառերի: Հոդվածի ծավալի սահմանափակությունից ելնելով՝ մենք անդրադարձել ենք միայն Լ. Հովհաննիսյանի աշխատությանը<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Մի քանի դիտողություններ ժամանակակից հայերենի բառային նորաբանությունների վերաբերյալ, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1970, հ. 12, էջ 36:

<sup>2</sup> **Հ. Օհանյան**, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 98:

<sup>3</sup> Տե՛ս **Լ. Հովհաննիսյան**, Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր (այսուհետև՝ ՉԲ), Եր., 2010:

Ապագային ենք թողել Հ. Աճառյանի<sup>4</sup>, «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի»<sup>5</sup>, Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի<sup>6</sup>, Արիստակես Վարդանյանի<sup>7</sup> աշխատանքները: Լ. Հովհաննիսյանի կազմած վերոնշյալ բառարանը համեմատելով Ս. Մալխասյանցի «Հայերեն բացատրական բառարանի»<sup>8</sup>, Է. Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարանի»<sup>9</sup> և «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարանի»<sup>10</sup> հետ՝ փորձել ենք ցույց տալ, թե արևելահայերենի որ բառաշերտերն են հարստացել, ինչ նոր եզրույթներ են առաջացել լեզվի ներքին և արտաքին հնարավորություններով, և բառերի բազմիմաստությունը որքանով է նպաստել արդի արևելահայերենի բառապաշարի հարստացմանը: Կատարել ենք նաև իմաստային տարբեր դաշտերի քննություն, ինչպես և ներկայացրել այդ խմբերում ներառվող արմատական բառերի մեծ մասի ստուգաբանությունը:

Սույն հետազոտության համար հիմք են ծառայել հայտնի այլ բացատրական և մասնագիտական բառարաններ<sup>11</sup>, մատենագրական զանազան աղբյուրներ, տարբեր ուսումնասիրություններ:

Նախ անդրադառնանք Լ. Հովհաննիսյանի բառարանում արձանագրված բառերի իմաստային խմբերին: Հիմնվելով բառարանների վիճակագրական տվյալների վրա՝ պարզ է դառնում, որ տարբեր թեմատիկ խմբերում ներառված որոշ բառեր որպես բառային միավորներ գոյություն ունեն, արձանագրված են բառարաններում, փոխանցվել են, սակայն աչքի են ընկնում պասիվ գործածությամբ, գործառնապես կենսունակ չեն, կիրառապես և քանակապես զիջում են մյուսներին: Սակայն չի բացառվում, որ դրանք ևս կարող են հետագայում անցնել լեզվի կենսունակ բառապաշարի մեջ:

**Կենդանական աշխարհի հետ կապված անվանումներ:** Կենդանական աշխարհին վերաբերող գոյականների մեջ կան ընդհանուր և հավաքական, տարբեր հասակների վերաբերող արմատական գոյականներ, սակայն դրանք չեն

<sup>4</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն նոր բառեր հին մատենագրության մեջ, Վենետիկ, 1922:

<sup>5</sup> Տե՛ս «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի. սրբագրուած եւ ճոխացուած Նորայր Բիւզանդացու ձեռքով». հրատարակութեան պատրաստեց Մ. Մինասեանը (ՆՀԲ-ի տպագիր օրինակի վրա ձեռագրով արված հավելումներ են), Ժնև, 1990:

<sup>6</sup> Տե՛ս Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսյան, Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007:

<sup>7</sup> Ա. Վարդանյանը 1924-30 թթ. Հ. Ոսկյանի հետ եղել է «Հանդես ամսօրեայ»-ի խմբագիր: 1913-23 թթ. նշված ամսագրի տարբեր համարներում հրատարակվել են Ա. Վարդանյանի «Բառաքննական դիտողություններ» վերտառությամբ հոդվածները, որոնք հետագայում լույս են տեսել «Ազգային Մատենադարան» մատենաշարով:

<sup>8</sup> Ս. Մալխասեանց, Հայերեն բացատրական բառարան (այսուհետև՝ ՆԲԲ), Եր., 1944:

<sup>9</sup> Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան (այսուհետև՝ ԱՀԲԲ), Եր., 1976:

<sup>10</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԲԲ), Եր., 1969:

<sup>11</sup> Տե՛ս Գ. Աւետիսեան, Հ. Միւրմելեան, Ս. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարյան, Գրաբարի բառարան, Եր., 2000: Առձեռն բառարան հայկազեան լեզուի(այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865: Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (այսուհետև՝ ՀԱԲ), Եր., 1926: Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. ձևաբանորեն տարարժեք բառեր, Եր., 2003: Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, Եր., 1998:

ընդգրկում կենդանիների բոլոր խմբերը և գիտական դասակարգման ժամանակ լրացվում են բաղադրյալ գոյականներով<sup>12</sup>: Այս իմաստային դաշտում ընդգրկված են զանազան գոյականներ՝ *զիզն*<sup>13</sup>, շնաձկան մի տեսակ, ուռնաձուկ (112), *թեպեկ*<sup>14</sup>, կապիկ (121), *իբիս*<sup>15</sup>, քաջահավ (125), *խորոս*<sup>16</sup>, կենդանու տեսակ (125), *խեշակ*<sup>17</sup>, նժույգ, քուռակ (136), *կամամ*<sup>18</sup>, ձիու տեսակ կամ անուն (148), *կուռաբ*<sup>19</sup>, ագռավ (156), *կորնակ*<sup>20</sup>, փոքրիկ կորյուն, ձագ (155), *տիպ*<sup>21</sup>, ոստրե, գաղտակուր կամ դրա պատյանը (276), *փահլ*<sup>22</sup>, արու ձի, նժույգ (281), *փաղիժ*<sup>23</sup>, թունավոր սարդ, մորմ (281): Արմատական գոյականներից բացի՝ կան նաև բաղադրյալ բարդ և ածանցավոր բառեր՝ *թմբրաձուկն*, ձկան տեսակ՝ նարկա (122), *տղուկ*<sup>24</sup>, ջրային փոքր որդ (277), *ոզնիկ*, փոքր ոզնի, ոզնու ձագ (224), *սայրջնագործ*, մետաքսաթել գործող որդ (47), *վիշապառիծ քաղ*, վիշապառիծ, առասպելական կենդանի (268), *ջրածի*, ծովային կենդանի (246), *փալանիկ*, լծկան ձի (280), *փորսհաւ*, թռչուն՝ հավալունս (284):

**Բուսական աշխարհի հետ կապված անվանումներ:** Բուսականության հետ կապված արմատական գոյականները առանձին բույսերի կամ սրանց մասերի անվանումներն են, որոնք տարբերվում են իրարից ըստ մարդու ընկալման, նրա արած համեմատության և օգտագործման: Բուսանուններից շատերը փոխառյալ բառեր են, և նրանց անվանումները բացահայտվում են ստուգաբանությամբ և ավելի ակնհայտ են դառնում բարդ և ածանցավոր բուսանունների դեպքում:

<sup>12</sup> Տե՛ս **Գ. Զահուկյան**, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, Եր., 1989, էջ 136:

<sup>13</sup> «*Չիզն*» բառը Հ. Աճառյանը չի ստուգաբանում. ծագումն անհայտ է (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 95):

<sup>14</sup> Անստույգ բառ, ՆՀԲ-ում՝ *թոբեկ* կատու կամ ընտանի նապաստակ՝ որպես իտալ. *toppo* մուկն: ԱԲ-ում՝ *թեբեկ* (տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 816: ԱԲ, էջ 322) :

<sup>15</sup> *Իբիդր* մի տեսակ թռչուն է, որին պաշտում էին եգիպտացիները: Հ. Աճառյանը բառը համարում է հունարենից փոխառյալ՝ *իբիս* (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 236):

<sup>16</sup> Անստույգ բառ: Հավանական փոխառություն է հունարենից, բայց բուն աղբյուրը նշված չէ (տե՛ս **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 284):

<sup>17</sup> Ծագումն անհայտ է:

<sup>18</sup> Անստույգ բառ է, որ մեկ անգամ է գործածված (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 500):

<sup>19</sup> «*Կուռաբ*» բառը փոխառյալ է արաբերենից, Առձեռն բառարանում նշվում է որպես անստույգ բառ, որ նշանակում է «*թռչուն մը*» (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 663: ԱԲ, էջ 450):

<sup>20</sup> Հ. Աճառյանն այս բառի պարզ արմատը համարում է «*կոր*», որ լավ երևում է «*խոճկոր*» բառի մեջ. բոլորի նախալեզվյան ձևն է *g'rebbh*, սաղմ, երեխա (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 643: **Գ. Զահուկյան**, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 422):

<sup>21</sup> Ծագումն անհայտ է: Հ. Աճառյանը նշում է, որ բառի ծագման վերաբերյալ տարբեր սխալ բացատրություններ են եղել. վերջին անգամ բառի նշանակությունը ճշտել է Ա. Վարդանյանը 1911 թ. «Հանդես ամսօրեայ»-ի էջերում՝ կապելով այն հունարենի հետ (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 409):

<sup>22</sup> Փոխառություն է արաբերենից՝ *fabl*, որն է անասունի արուն (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 472):

<sup>23</sup> «*Փաղիժ* // *փաղեժ*» բառի ծագումն անհայտ է. Հ. Աճառյանը նշում է, որ այս բառը կապում են *փաղանգ*-ի հետ (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 474):

<sup>24</sup> Հոգնակին՝ *տղկունք*. «Են գորտք, որ այնպես մանրիկ է, մինչ *տղկունք* կըսեն զնոսա» (տե՛ս ՀԲԲ, հ. 4, էջ 423):

Եթե դրանց մեջ առկա են կոնկրետ իմաստային տարրեր, այսպիսի անվանումների վերլուծությունը պահանջում է կոնկրետ պատմական տվյալներ<sup>25</sup>: Քննության ենթակա բառարաններում արձանագրված են բույսերի հետ կապված հետևյալ անունները. *ասկամունի*<sup>26</sup>, դեղաբույս (52), *զոխ*<sup>27</sup>, բանջարաբույսի դալար ցողուն (113), *թնիճ*<sup>28</sup>, թին, խաղողի կորիզ (122), *թնահատ* խաղողի մեկ հատիկ (122), *լոտաս*<sup>29</sup> խոտաբույսի անվանում (132), *ծիծեռնախոտ* կանթեղխոտ (144), *կալանուն*<sup>30</sup>, եղեգ (147), *կանեփհատ* կանեփի սերմ, հատիկ (149), *կորճ*<sup>31</sup>, ընկույզի կեղևը (155), *հերձաստերև* կվենի, հերձի ծառի տերևը (170), *ճանդար*<sup>32</sup>, սոսի, *մոլեքոյս* վայրի խոտ (198), *նշօշ*<sup>33</sup> սագախոտների կարգին պատկանող բույս (216), *ցաքի*<sup>34</sup> դժնիկազգիներին պատկանող վայրի բույսի տեսակ ժանտափուշ (279) և այլն:

**Կրոնական նշանակության բառ-եզրույթներ:** Կրոնի հետ կապված հասկացություններ են *երկինք* Աստված, նախախնամություն<sup>35</sup> (107), *եպիսկոպոսանիստ* Եպիսկոպոսարան (101), *երկնաբիր* երկնքում բնակվող հրեշտակների մասին (107), *խաչաշտանակ* խաչի աշտանակ (133), *ծաղատիկ* տոմարական հաշվարկներով սխալ գատիկ (146), *կուռայ*<sup>36</sup> Ղուրանի ընթերցանությամբ զբաղվող մահմեդական հոգևորական (156), *հաղորդադրամ* հաղորդության համար տրվող դրամ (159), *կրկնադեմ* շատ դևեր պաշտող (157), *կրկնադիտություն* բազմաստվածություն պաշտելը, սնահավատություն (157), *կրկնածին* երկու անգամ ծնված, Քրիստոսի մասին իբրև ծնունդ Հոր աստծու և Մարիամ

<sup>25</sup> Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայոց լեզվի իմաստաբանություն և բառակազմություն, էջ 134-135:

<sup>26</sup> Փոխառյալ է հունարենից, նույնն է «*ասկամունի*» պատաստուկազգիներ, պատաստուկի տեսակներից մեկը (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 158: Ռ. Ղազարյան, Բուսանունների հայերեն-լատիներեն-ռուսերեն-անգլերեն-ֆրանսերեն-գերմաներեն բառարան, Եր., 1981, էջ 84):

<sup>27</sup> Բառի ծագումն անհայտ է: Մրանից է կազմված «*զոխոյ*» «*զոխո*» մի տեսակ կաթոս բույս, որի տերևները սպանախի և բազուկի տերևներին են նման: Փոխաբերաբար նշանակում է նաև «աշտանակի բունը», որ պատվանդանի վրա է հաստատված (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 103):

<sup>28</sup> «*Թնիճ*» բառի հիմքում ընկած է «*թին*» անստույգ արմատը՝ խաղողի կորիզ, որից է նաև վերը նշված «*թնահատ*» բառը (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 184): Ըստ Գ. Ջահուկյանի՝ «*թին*» արմատը կարող է լինել բնիկ հնդեվրոպական (տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 267):

<sup>29</sup> *Լոտաս/լոտաս*. ըստ Ս. Մալխասեանցի՝ բառը ծագել է հունարենից՝ *lotos*, և ունի բազմաթիվ իմաստներ. 1.մի տեսակ առվույտ, 2.հունապ, 3.նունուֆար, 4.բոնչնի և այլն. միով բանիվ՝ զանազան բույսեր կոչվում են այս անունով (տե՛ս ՀԲԲ, հ. 2, էջ 218):

<sup>30</sup> Հունական փոխառություն է «*եղեգ*» բառի հայցականի ձևից (տե՛ս ՀԱԲ, հ.2, 485):

<sup>31</sup> Գավառական *կորճ* կեղև. ծագումն անհայտ է (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 651-652):

<sup>32</sup> Փոխառյալ է պարսկերենից՝ *cantar*, վրաց. *cantari՝ ճանդարի՝ սոսի, չինարի* (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 184):

<sup>33</sup> Անհայտ ծագման բառ՝ *կատադենի. լատ.՝ thely gonum* (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 463: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 571):

<sup>34</sup> Մրա տերևներից ճգնավորները հաց էին պատրաստում: Հնարավոր է, որ գավառականների մեջ նույնացել է «*ցախ*» բառի հետ: ՆՀԲ-ում (հ.2, էջ 904) բառը նշված է «*ցաքի*» ձևով: Նոր հրատարակությունը ջնջում է այս ձևը և հաստատում «*ցաքի*», որ կենդանի է նաև գավառականներում (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 452):

<sup>35</sup> «*Երկնքից* մեզ լոյս լինի, ապա թե ոչ մարդկանցից յոյս չմնաց» (տե՛ս ՀԲԲ, հ. 1, էջ 593):

<sup>36</sup> Արաբերենից փոխառյալ՝ *qurra*, որ անկանոն հոգնակին է (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 663):

կույսի (157), **հերետիկոսություն**<sup>37</sup> եկեղեցու դավանանքին հակառակ դավանություն, հերձվածոդություն (170), **հիպոդիմնիսկոս**<sup>37</sup> պայմանական նշան՝ Ս. Գրքի թարգմանության մեջ բնագրից տարբերվող բառերն ընդգծելու համար (171), **հոգեփոսություն**՝ Ս. Գրքով խոսված մի բան, կեղծ գիտություն բարի և չար ոգիների՝ հրեշտակների մասին (173), **հրեշտակատես**՝ հրեշտակներ տեսնող (170), **հոգեփողոս**՝ հոգին սպանող (172), **դաշայ**<sup>38</sup>՝ ասորական քահանա (180), **մակուրան**<sup>39</sup>՝ դուրան (186), **մանիքեական**՝ Մանիի աղանդի, մանիքեության հետևորդ (187), **մեսիատես**՝ Քրիստոսին տեսնող (194), **նափորտակ**<sup>40</sup>՝ հոգևորականի վերնաշապիկ, շուրջատ (212), **նեստորական**՝ Նեստորի վարդապետության հետևորդ (212), **նիկիական**՝ Նիկիայում կամ Նիկիայի ժողովում հաստատված (214), **շաբաթակրօնք**՝ հրեաների մոտ շաբաթը պահելը (219), **պարեզոտաոր**՝ փարաջավոր, կրոնավոր (242), **սատանայապաշտ**՝ սատանային պաշտող, ծառայող (250), **սուրբրնկալ**՝ սրբի մարմինն ամփոփող (255), **ստիխարին**<sup>41</sup>՝ կրոնավորի զգեստ (257), **տաքտիկոն**<sup>42</sup>՝ դասավորություն, կարգ եկեղեցական աթոռների (274), **քաղկեդոնիկ/քաղկեդոնիտ**՝ քաղկեդոնական (285), **քրիստոսադաւանություն**՝ Քրիստոսին դավանելը (290), **քրիստոսանիշ**՝ Քրիստոսի նշանը՝ խաչը (290) և այլն:

**Երաժշտություն**, **արվեստ**, **գրականություն**, **ճարտասանություն**՝ **սիք**<sup>43</sup>՝ երաժշտական գործիք, սրինգ (252), **սրնգահար**՝ սրինգ նվագող (259), **չորեքձայնեան**՝ քառաձայն, չորս տեսակ ձայն հանող (235), **առանդ**՝ բանաստեղծական տող (48), **առաւելահրաշ**՝ չափազանցված, հիպերբոլիկ (49), **առասպելարար**՝ առասպելներ պատմող կամ ստեղծող (48), **արվեստություն**՝ արվեստ, ճարտարություն (59), **բանիցրնկեր**՝ խոսքընկեր, խոսակից (68), **բաներգակ**՝ բանաստեղծ, ճարտասան (68), **բաներգություն**՝ գովք (68) և այլն:

<sup>37</sup> Փոխառյալ է հունարենից, նշանակում է *ենթաժապավեն*. կազմված է «տակր» և «ժապավեն» բառերից (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 96):

<sup>38</sup> Ասորական փոխառություն՝ ասորի քահանա. ծագում է *qas*՝ *ծերանալ* արմատից և բուն նշանակում է *ծեր*, *երեց* (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 165):

<sup>39</sup> Հավանաբար *Ղուրան*//*Կուրան*՝ ըստ արաբական սովորության՝ *մ*-ի հավելումով, որ կոչվում է *masdar-i mimi*՝ *միմ* տառով աներևույթ (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 233):

<sup>40</sup> Կազմված է «*նափորտն*» բառից, որ փոխառյալ է հունարեն համապատասխան կորսված մի ձևից, նշանակում է *վեր հանել*, *կրել*, *տանել*, և հունարենում պետք է նշանակած լիներ *վերարկու* (տե՛ս ՀԱԲ, հ. 3, էջ 437):

<sup>41</sup> Փոխառյալ է հունարենից, նշանակում է կրոնականի՝ հատկապես քահանայի կամ սարկավազի վերարկու (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 274):

<sup>42</sup> Ծագում է հունարենից՝ *դասավորություն*, *կարգավորություն* (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 392):

<sup>43</sup> Ըստ Հ. Աճառյանի՝ ասորերենի գավառական անձանոթ ձևից փոխառյալ բառ է (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 223):

Գունանուններ՝ *ժանգառագոյն*<sup>44</sup> ժանգոտած պղնձի գույն, դեղնականաչավուն (124), *գարտակ*<sup>44</sup> դեղնավուն (111), *ծիրանատեսիլ* ծիրանագույն (145), *ծիրաներփնեան* ծիրանագույն (145), *ծիրանութիւն* ծիրանի գույնը (145), *շուշանակերպագոյն* շուշանագույն, սպիտակ (223), *սպիտակակերպ* սպիտակագույն (256), *սպիտակաձեւ* սպիտակափայլ, պայծառ (256), *տենչասպիտակ* հաճելի սպիտակ գույն ունեցող (274) և այլն:

Փիլիսոփայական եզրույթներ՝ *առինչունակ* փոխադարձ առնչակից, հարաբերվող (50), *առաջ* նախասկիզբ (48), *արմատ* սկզբնապատճառ, նախասկիզբ (59), *ենթակայ* սուբստրատ, միջավայր (101), *երկարմատեան* երկու նախասկիզբ ունեցող (107), *որակութիւն* տարր (227), *խուզակ* սկեպտիկ (140), *պիթագորուհի* Պյութագորի փիլիսոփայությամբ զբաղվող կին (243), *մտահասութիւն* իմացություն (199) և այլն:

*Լեզվաբանություն անշաղկապաձեւ* առանց կապակցելու (41), *անշարախառն* պարզ, ոչ բաղադրյալ (41), *անսահմանական* անցյալ կատարյալ ժամանակը (42), *բառիկ* պարզ, արմատական բառ (68), *առաւելակատարական* գերակատար ժամանակը (49), *վերնաբայ* մակբայ (266), *ռամբբան* ռամկորեն խոսակցական լեզվով (247) և այլն:

Աստղագիտություն, ֆիզիկա, մաթեմատիկա: *Առիս* մոլորակի անուն՝ Հրատ մոլորակը (51), *Տաւռոն* աստղի անուն, «Ցուլ» համաստեղությունը (274), *շուն*՝ երեք համաստեղության անուն<sup>45</sup> (222), *բազմոյթ*՝ համաստեղության անուն (65), *աստր*՝ աստղագիտություն (55):

Ռազմական գործ. *պատգոսասպան*<sup>46</sup> պարսկական գավառի տեր, երկրակալ (239), *տաքսիտ* բերդապահ գործ (274), *սպուհիպատ* իշխան, գորավար (47), *ասպարախիտ* բազմաթիվ, խիտ վահաններով (52), *աղեղնաձիգ* նետաձիգ, նետ ու աղեղով զինված (24), *աղեղնաւորել* նետահարել (24), *ասպտամբանոց* ասպտամբների վայրը (47), *դրունգաբ*<sup>47</sup> հրամանատար, վաշտապետ (99), *խաղ* թուր (132), *խիշտ*<sup>48</sup> նիզակ (136), *ձիահեծեայ* ձիավոր զինվոր (179), *դրասպակ*<sup>49</sup> բանակի գորամիավորում՝ ջոկատ (98) և այլն:

Մարդ, ընտանիք, հարաբերություններ. *անդամակոյտ* կմախքները՝ մարմ-

<sup>44</sup> Բառը փոխառյալ է պահլավերենից՝ *zartak*՝ դեղնագույն, իսկ պահլավերեն *zaptak* բառը նշանակում է ձվի դեղնուց, սրա արմատն է *zart*՝ դեղին (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 84):

<sup>45</sup> Այս համաստեղություններից առաջինը կոչվում է Մեծ շուն՝ հարավային կիսագնդում, մյուս երկուսը՝ Փոքր շուն և Որսկան շուն՝ հյուսիսային կիսագնդում (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 91):

<sup>46</sup> Պահլավական փոխառություն է՝ *patgospan*, որ կազմված է *patgos*՝ *գավառ* + *pan*՝ *պահապան* բառերից (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 39):

<sup>47</sup> Փոխառյալ է հունարենից՝ բյուզանդական զինվորական աստիճան, վաշտի պետ՝ 1000-3000 զինվոր ունեցող (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 696):

<sup>48</sup> Փոխառյալ է պարսկերենից՝ *xist*՝ նիզակ, աշտ (տե՛ս ՀԱԲ, հ. 2, էջ 368):

<sup>49</sup> Ենթադրվում է, որ իրանյան փոխառություն է՝ բանակի բաժանմունքներից մեկը (տե՛ս ՀԱԲ, հ. 1, էջ 692):



նի մասերը՝ իրար վրա դրված (32), *անզգամիտ*՝ չզգացող, չմտածող (33), *անսնար*՝ սնար, բարձ չունեցող (43), *բանիցինդիր*՝ վեճի, բանակովի հետամուտ (68), *բանսերթուկ*՝ դյուրահավատ (68), *բասրասեր*՝ բանասարկու (68), *անսերմութիւն*՝ ամլություն (42), *արզանդակից*՝ հասակակից (56), *առամսեայք*՝ կանանց ամսականը (47), *արուազեղծ*՝ արվամուլ (59):

*Կազմախոսական ձիգ*՝ նյարդ, երակ (179), *դաստարակ*՝ ոսկրածուծ (91), *սպորտային հոլարան*՝ ըմբշամարտի հրապարակ (173), *հագուստ զանգապանակ*<sup>50</sup>՝ ծնկակալ (110), *մուկ*<sup>51</sup>՝ վարտիք (199), *կրկնցակ*՝ վերարկու (158), *սնդր*<sup>52</sup>՝ թիկնոց (253), *տոհբուն*<sup>53</sup>՝ հոետորի, փիլիսոփայի հագուստ (277), *քրձակ*՝ այծի մորթուց պատրաստված հագուստ (291), *կերակուր խորակ*՝ ալյուրով պատրաստված ուտելիք (140), *կաղտի*՝ կաթնեղեն ուտելիք՝ կաթ, մածուն և այլն:

Մենք անդրադարձել ենք նաև տարարժեքության երևույթին, որը գրաբարի բառապաշարում դրսևորվող կարևորագույն լեզվական իրողություն է և մեծ հետաքրքրություն է ներկայացնում ինչպես համաժամանակյա, այնպես էլ տարժամանակյա ուսումնասիրության դիտակետերում: Տարարժեքությունը ընդգրկում է լեզվի՝ 1) բառային, 2) ձևաբանական, 3) շարահյուսական մակարդակները: Բառի բազմիմաստությունը հիմք է դառնում ձևավորելու ոչ միայն տարբեր խոսքիմաստային արժեքներ, այլև շարահյուսական տարբեր գործառույթներով հանդես եկող միավորներ: Համաժամանակյա դիտակետում առանձնացվում է բառերի այն շերտը, որն առկա է գրաբարի բառային կազմում՝ երկփեղկված բառիմաստներով և համապատասխան խոսքիմաստային արժեքներով՝ ձևավորված նաև նախագրային շրջանում: Լեզվի զարգացման տարժամանակյա կտրվածքում բառերի բովանդակային պլանում տեղի ունեցած փոփոխություններն ազդել են նրանց խոսքիմաստային իմաստի վրա՝ առաջ բերելով ձևաբանական տարարժեքություն: Այսպիսի մոտեցման դեպքում առանձնացվող տարարժեք բառերը, որոնց իմաստաարժեքային փոփոխությունների վերհանումն ու բացատրությունը պատմական բառարանի խնդիրն են, ձևավորվել են լեզվի զարգացման հինհայերենյան գոյավիճակի ենթափուլերում՝ 5-12-րդ դարերում<sup>54</sup>: Բառաքերականորեն բազմիմաստ՝ երկարժեք համատեղումներով բառերի համար բերել ենք բնագրային օրինակներ վերոնշյալ բառարաններից, որոնց սահմաններում պարզ են դառնում այդ բառերի իմաստաարժեքային բացատրություններն ու փոփոխությունները: Ընդ որում «ի-

<sup>50</sup> Ծնկներն ու սրունքները պատող հատուկ կտոր, որ հնում ծառայել է նաև որպես զրահ, սոնապան (տե՛ս ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 6):

<sup>51</sup> Բառի ծագումն անհայտ է (տե՛ս Գ. Զահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 535):

<sup>52</sup> Անստույգ բառ. ծագումն անհայտ է:

<sup>53</sup> Փոխառյալ է հունարենից, կապվում է *շիել*, *մաշել*, *գործածել* բայերի հետ (տե՛ս ՀԱԲ, հ. 4, էջ 432):

<sup>54</sup> Տե՛ս Լ. Խաչատրյան, Գրաբարի տարարժեք բառերի բացատրական բառարան, էջ 5:

մաստաարժեքային այդ կարգի փոփոխությունները կատարվել են հիմնականում գոյական, ածական կամ մակբայ սերիչ փոփոխություններից և տարամիտվել են նյութական բովանդակություն ունեցող խոսքի մասերի շրջանակներում»<sup>55</sup>: Ձևաբանորեն տարարժեք բառերը կարող են ունենալ մեկից ավելի խոսքիմասային արժեքներ: «Այդ կարգի բառերը, որպես բառային միավորներ, բնագրից դուրս ընդհանուր ձևով համատեղում են տարբեր խոսքիմասային իմաստներ ու արժեքներ, սակայն դրանց երկատված բառիմաստներն ու խոսքիմասային արժեքները հստակ տարբերակվում են առանձին կիրառությամբ: Ձևաբանական արժեքի բաշխումը կատարվում է շարահյուսական մակարդակում, քանի որ իմաստագատիչ մյուս գործոնները տվյալ դեպքում չեզոքանում են»<sup>56</sup>: Քննարկենք մեր ընտրանքի բառերից մի քանիսը, որոնք գրաբարում եղել են միարժեք, իսկ արդի հայերենի բառարաններում նշված են երկարժեք կիրառման վկայությամբ<sup>57</sup>: *Ածական-մակբայ երկարժեքություն* . *Անճաշ*՝ 1. ած.՝ ճաշ չունեցող, անճաշ (ՉԲ, 40): «*Անճաշ օր, անճաշ տուն*» (ՀԲԲ, 1, 149): 2. մկբ.՝ չճաշած. «Երեխային *անճաշ* թողեց» (ՀԲԲ, 1, 149): *Գետնաքարշ*՝ 1. ած.՝ ցած, նվաստ. «...զի մի արհամարհեսցի վասն *գետնաքարշ* բառիցն եւ մտածութեանցն» (ՉԲ, 83): «...բարձրեն հպարտությամբ կը նայի *գետնաքարշ* վարունգին ու դրումին վրա» (ԺՀԼԲԲ, 1, 389): 2. մկբ.՝ *գետնաքարշ ձևով*. «Երեխաներն ավելի զվարճանում էին, երբ փողոցներով ...*գետնաքարշ* գերան էին տանում» (ԺՀԼԲԲ, 1, 389): *Գոյժակոհչ*՝ 1. ած.՝ չարագուշակ, գուժակոհիչ. «Եւ իսկոյն հասեալ արհասականն այն *գոյժակոհչ* աղմուկ» (ՉԲ, 87): 2. մկբ.՝ լացուկոճ անելով, գոռում-գոցունով (ՀԲԲ, 1, 459): *Զինաբարձ*՝ 1. ած.՝ զենքերով ծանրաբեռն. «Յիսուն երկու հազար գրաստս *զինաբարձս*» (ՉԲ, 112): 2. մկբ.՝ զենքերը բարձած (ԺՀԼԲԲ, 2, 32): *Թասուն*՝ 1. ած.՝ անհագ ուտելիս հեացող. «Որպէս զազրատեսակ է որովայնամոլութիւնն ըստ նմանութեան խոզի՝ տղմասէր, գոլորշուտ, ...*թասուն*» (ՉԲ, 87): 2. մկբ.՝ հևիհև. «...կը փախչտին շփոթ, *թասուն*, հուսահատ» (ԺՀԼԲԲ, 2, 143): *Լիահաւատ*՝ 1. ած.՝ ջերմեռանդ, հավատով լի. «Անզարդասէր եւ լիին, *լիահաւատ* եւ մեծայոյս» (ՉԲ, 129): Հավատով լի (ԱՀԲԲ, 1, 528): 2. մկբ.՝ լիովին հավատացած. «Տիկինը *լիահավատ* էր սպասել պատերազմի ելքին» (ԺՀԼԲԲ, 2, 408):

*Ածական-գոյական երկարժեքություն՝ զինեհոտ*՝ 1. ած.՝ զինուն հոտ տվող, զինի հոտող. «...զոռոյիսն ունելով ի քեզ եւ *զինեհոտ* նեխութիւնս» (ՉԲ, 85): «*Զինեհոտ* մառան» (ՀԲԲ, 1, 436): 2. գոյ.՝ զինու հոտ. «Բերանիցը *զինեհոտ* է բուրում» (ՀԲԲ, 1, 436): *Դագ*՝ 1. ած.՝ խաբեբայական. «Կինն էլոյժ զնա պատիր, ա-

<sup>55</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>56</sup> Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան, էջ 6:

<sup>57</sup> Բնագրային օրինակները բերում ենք գրաբարի և արդի հայերենի բառարաններից՝ փակագծում նշելով բառարանը և էջը: Կան բառեր, որոնց համար բառարաններում բնագրային օրինակներ չկան:

դու եւ *դագ* բանիք» (ՉԲ, 90): Հրապուրիչ, կեղծավոր: 2. գոյ. կեղծիք, նենգություն (ՀԲԲ, 1, 481): *Չագրահոտ*՝ 1. ան.՝ զագրելի հոտով. «Իբրեւ զգերեզման *զագրահոտ* եբաց ամպարիշտն» (ՉԲ, 110): «*Չագրահոտ* կենդանի» (ՀԲԲ, 2, 5): 2. գոյ. զագրելի հոտ. «*Չագրահոտը* բռնել է շրջապատը» (ԺՀԼԲԲ, 2, 2): *Թզենասաղարթ*՝ 1. ան.՝ թզենու սաղարթներ, տերևներ ունեցող. «Որ վասն *թզենասաղարթ* զսփածանելիսն Ադամայ բառնալով» (ՉԲ, 121): 2. գոյ. թզենու սաղարթ (ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 195): *Խնորակեր*՝ 1. ան.՝ խնոր ուտող. «Դուք զայս թողեալ այլ ինչ եղիք նոր՝ քացախադաւան, *խնորակեր*, ջրապղտոր...» (ՉԲ, 137): «Սոնան մնաց յոթ *խնորակեր* երեխաների հետ» (ԺՀԼԲԲ, 2, 529): 2. գոյ. երեխա, մանուկ. «*Խնորակերներ*ի տէր է, բաց թողէք» (ՀԲԲ, 2, 270): *Խոյեղջիւր*՝ 1. ան.՝ խոյի նման եղջուրներ ունեցող. «Ով թագաւոր...*խոյեղջիւր...*» (138): 2. գոյ. խոյի եղջիւր (ԺՀԼԲԲ, 2, 547):

*Գոյական -ածական երկարժեքություն լուացարար*՝ 1. գոյ.՝ լվացք անող. «Մայրն երթեալ էր ի գործ, զի էր *լուացարար*» (ՉԲ, 130): «Հյումբաթի ձորում... մնացին հացթուխներ, գորար կանայք, *լվացարարներ*, գորգագործ պատավներ» (ԺՀԼԲԲ, 2, 431): 2. ան.՝ լվացք անող. «Մայրը եղել է մի *լվացարար* կին» (ԺՀԼԲԲ, 2, 431):

Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան: Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»-ի և արդի հայերենի վերոնշյալ բառարանների համեմատությունից երևում է, որ կան բազմաթիվ բառեր, որոնք վաղուց հնացել և գործածությունից դուրս են մղվել, կան նաև բազմաթիվ եզրույթներ, որոնք մասնագիտական նեղ բնագավառից դուրս գրեթե կիրառելի չեն: Ակտիվ գործածություն ունեցող բառերից շատերը ժամանակի ընթացքում կարող են ավելի քիչ գործածական դառնալ, և ընդհակառակը՝ ոչ կենսունակ շատ բառեր կարող են լայնորեն տարածվել: Ինչ խոսք, հետագայում նորահայտ աղբյուրների և նորանոր ջանքերի ու պրպտումների արդյունքում կարող են հայտնաբերվել զգալի թվով բառեր, դարձվածքներ ու ոճեր, որոնք ավելի կհարստացնեն հայերենի հայտնի բառարաններում ամփոփված ընդհանուր բառամթերքը: Լ. Հովհաննիսյանի «Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր»-ից շատերը, պայմանավորված տեսական և գործնական անհրաժեշտությամբ, գլխաբառերի և նրանց նրբերանգների հաշվառումով, ինչպես նաև իրենց խոսքիմասային-քերականական հիմնական բնութագրերով, սակավ գործուն բառակերտման զանազան կադապարների ու ձևերի ակտիվացումով, մի շարք բառերի ու ածանցների բառաստեղծական դերի աշխուժացումով, բազմաթիվ նոր եզրույթների ստեղծումով կարող են նպաստել ժամանակակից հայերենի բառարանների նյութի համալրմանը, հայերենի բառապաշարի հարստացմանը: Սա էլ իր հերթին կնպաստի մատենագրական երկերի ճիշտ և լիարժեք թարգմանությանը՝ հաղորդելով որոշակի քերականական գիտելիքներ և հմտություններ գրաբարից բնագրում այս կամ այն բառի իմաստի ճշգրիտ մատուցման և ըմբռնման համար:

**СУСАННА ГРИГОРЯН, НАИРА ПАРОНЫАН** – *Обогащение словарного запаса современного восточноармянского языка за счет слов, не встречающихся в «Новом словаре древнеармянского языка».* – Целью данной статьи является демонстрация расширения словарного запаса современного восточноармянского языка за счёт слов, которые отсутствуют в «Словаре древнеармянского языка; слова незасвидетельствованные в новом словаре древнеармянского языка». Известно, что одним из ключевых компонентов языка является его лексика, отражающая изменения в общественной жизни. Лексика армянского языка постоянно эволюционирует, пополняясь многочисленными новыми словами и выражениями, требующими тщательного изучения. Некоторые слова сохранили своё первоначальное значение, в то время как другие приобрели новые значения.

В данной работе мы пытались проиллюстрировать сдвиги и изменения, произошедшие в лексике Грабара, а также выявить некоторые лексические особенности, сравнивая слова, зафиксированные в «Словаре древнеармянского языка; слова незасвидетельствованные в новом словаре древнеармянского языка» Л. Оганесяна, с теми, которые отсутствуют в данном словаре и в упомянутых словарях восточноармянского языка.

Богатство каждого языка определяется многообразием его лексического арсенала, включающего разнообразные группы слов, которые отличаются своим словарным запасом и употреблением и образуют независимые группы. Мы выделили слова из различных семантических областей и провели исследование, представив этимологию корневых слов, входящих в эти семантические группы.

На основе статистических данных из словарей выясняется, что некоторые слова, входящие в различные тематические группы и зафиксированные в словарях как лексические единицы, используются редко, становятся функционально устаревшими и уступают другим словам с точки зрения употребления и распространённости. Тем не менее существует вероятность того, что эти слова могут в дальнейшем расширить продуктивный словарный запас языка.

**Ключевые слова:** *лексика, семантическое поле, коренные слова, заимствования, словообразование, неологизм, восточноармянский язык, этимология, термин, грамматика*

**SUSANNA GRIGORYAN, NAIRA PARONYAN** – *The Enrichment of the Vocabulary of Modern Eastern Armenian According to the Words not Found in "New Haikazian Language Dictionary".*

– The present work aims to show the enrichment of the vocabulary of Modern Eastern Armenian according to the words not found in the "New Haikazian Language Dictionary". As it is known, the most sensitive of the components of the language is its vocabulary, directly expressing the changes in social life. The vocabulary of the Armenian language has been constantly changed, supplemented with numerous new words and combinations, which need a thorough examination. Some words have survived to this day and kept their basic meanings. Some have survived but have acquired new meanings. We have tried to demonstrate the shifts and changes made in Grabar vocabulary, and some lexical peculiarities, by comparing the word material attested in L. Hovhannisyan's "Grabar dictionary, words not attested in New Haikazian dictionary" and the above-mentioned dictionaries of Modern Armenian.

The wealth of each language is determined by the wealth of its vocabulary, which includes various word layers, distinguished by their word products and functions, and form independent groups. We have singled out words belonging to different semantic fields, and performed their examination, presenting the etymology of root words included in those semantic fields. Based on the statistical data of the dictionaries, it becomes clear that some words included in different thematic groups, which are recorded as lexical units in the dictionaries, stand out for their passive use, are not functionally viable, are inferior to others in terms of application and quantity, but it is not excluded that they can further add to the vibrant vocabulary of the language.

**Key words:** *vocabulary, semantic field, root words, borrowing, creation of words, neologism, Eastern Armenian, etymology, term, grammar*

## ԳՐԱԲԱՐԻ ՀԼՁՅՈՒՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՌՍՊԱՇԱՐԱՅԻՆ ՈՐՈՇ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՌՆԵՐՈՒՄ

ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԵՍՐՈՊՅԱՆ \* 

ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտ

Հոդվածում ներկայացված են հայերենի բարբառների լեզվական հարստության աղբյուրները, հնչյունական, բառապաշարային և քերականական առնչությունները գրաբարի հետ: Հին գրական հայերենը բառապաշարային ազդեցություններով էական դեր է ունեցել միջին ու նոր գրական լեզուների կազմավորման ու զարգացման, բարբառային բառապաշարի համալրման համար:

Առաջադրված և բացահայտված են մի քանի հիմնական հարցեր՝ 1) գրաբարյան հիմք ունեցող հնչյունափոխական տարբեր դրսևորումներ, 2) բառի անհնչյունափոխ ձևի պահպանման դեպքեր, 3) հնչյունական և բառային զուգաձևությունների առաջացման առանձնահատկություններ, 4) գրական լեզվի բառային կազմում չընդգրկված, սակայն բարբառներում պահպանված բառեր ու արտահայտություններ, 5) բնիկ հայերեն բառարմատների առանձին կիրառություններ և այլն:

Ուսումնասիրությունից պարզվել է, որ հայերենի բարբառները պատմական զարգացման ընթացքում գրաբարի լեզվական հիմքի վրա համալրվել ու հարստացել են հնչյունական, բառապաշարային և քերականական տարբեր միջոցներով: Գրական լեզվի բառային կազմից դուրս մնացած, սակայն բարբառներում պահպանված բառաձևերը՝ հին և նոր իմաստներով, օգնում են լեզվական որոշ հարցեր բացահայտելուն, ինչպես նաև ստուգաբանական ճշգրտումներ կատարելուն:

**Բանալի բառեր** – գրաբար, հայերենի տարածքային տարբերակ, բարբառ, հնչյունական համակարգ, բառապաշար, զուգաձևություններ

\* **Հայկանուշ Մեսրոպյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի առաջատար գիտաշխատող, Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հայագիտության ամբիոնի դոցենտ

**Айкануш Месропян** – доктор филологических наук, ведущий научный сотрудник института языка имени Р. Ачаряна НАН РА, доцент кафедры арменоведения ГУ имени В. Брюсова

**Haykanush Mesropyan** – Doctor of Philology, Leading Researcher at the Institute of Language after H. Acharyan, NAS RA, Associate Professor at the Department of Armenian Studies at the State University named after V. Bryusov

Էլ. փոստ՝ mesropyanhaykanush@gmail.com. ORCID: <https://orcid.org/0009-0008-8038-0168>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.06.2024

Գրախոսվել է՝ 12.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

Հայերենի տարածքային տարբերակները հիմքում ունեն նախագրային, ապա և գրաբարի հիմնական բառաշերտը և լեզվական հատկանիշները՝ ա) **հնչյունական**, բ) **բառապաշարային**, գ) **քերականական** համապատասխան դրսևորումներով: Այդ մասին Հ. Պետրոսյանը գրում է. «Խոսակցականի հիմքի վրա կազմավորվեց ետգրաբարյան հայերենը՝ իր բարբառային հիմնական տարբերակումներով: Հին գրական հայերենը էական դեր ունեցավ (հատկապես բառապաշարային ազդեցություններով) միջին ու նոր գրական լեզուների կազմավորման ու զարգացման մեջ»<sup>1</sup>:

Համահայկական բառախումբ ունենալով հանդերձ՝ բարբառներում հաճախ հանդիպում են միայն տվյալ տարածքին բնորոշ բառեր ու արտահայտություններ, բարբառային հնչյունական տարբերակներ, բառակազմական այլաձևություններ, բառիմաստային տեղաշարժեր՝ դրսևորված քերականական տարբեր միջոցներով:

Գրաբարից ավանդված բառապաշարային բազմաթիվ միավորներ, հնչյունափոխական օրինաչափ կամ զարտուղի եղանակների ենթարկվելով, հաճախ այլափոխվել են. մի շարք բառիմաստներ էլ լեզվի պատմական զարգացման ընթացքում հեռացել են նախկին գրաբարյան իմաստից կամ ընդհանրապես փոխվել:

**Ա) Հնչյունական և հնչյունափոխական մասնավոր դրսևորումներ, որոնք ունեն գրաբարյան հիմք:**

**Ա-1)** Հայտնի է, որ գրաբարում *z* հնչյունագրով սկսվող բառ չի եղել: Այն, միանալով *ա, է, ի, ո* ձայնավորներին, կազմում է *աւ, էւ, իւ, ու* երկբարբառներ, *ւո* եռաբարբառ՝ *վ՞ո*՝ արտասանական սերտ համակցումով, և հանդես էր գալիս միայն բառամիջում կամ բառավերջում: Այս մասին Վ. Առաքելյանը գրում է. «*Ի /ւ/* հնչյունով բառ չի սկսվում, եւ *ւ*-ը յաջորդում է *ա*-ին, *է*-ին, *ի*-ին, *ո*-ին, որոնցից կազմում են *աւ, էւ, իւ, ու* երկբարբառները, այլ դեպքում *ւ* չի հանդիպում: ...*Ի* ձայնորդը, որ Ե դարում ձայնորդական հնչյուն է ունեցել, այժմ ամենուրեք, բացի *ո*-ից յետոյ դիրքից (որի հետ *ու* է կազմում), արտաբերում է իբրեւ *վ*»<sup>2</sup>: Սակայն Վասպուրականի տարածքի խոսվածքներում հանդիպում ենք այլ իրողության: *Ի* հնչյունը, ի հայտ գալով բառասկզբում, *ո*-ի հետ կազմում է *ւո* եռաբարբառ. օրինակ՝ *ւո՞ն*՝ «ո՞վ» (Արծկեի Կոճերեր), *ւոնձնի*՝ «ոզնի» (Արձակի Լիմ), *ւորթիկ*՝ «հորթ» (Արձակի Լիմ), *ւորթկարած*՝ «հովիվ» (Արձեշի Բոլորմակ) և այլն: Չի բացառվում, որ հնդեվրոպական լեզուներից մեզ ծանոթ նախագրաբարյան այս հնչարտաբերությունն ունենա ուրարտական կամ հարակից այլ հնագույն լեզվական արմատներ: Վանի բարբառի բառարանի հեղինակ Հ. Թուրջյանը գրում է. «Գուցե ուրարտերեն և այլ հին լեզուներ իմացողները հնագույն լեզուների վերապրուկներ գտնեն Վանի բարբառի մեջ»<sup>3</sup>:

**Ա-2)** Լեզվական ուշագրավ երևույթ է մի շարք արմատների՝ բարդվելիս կամ

<sup>1</sup> Հ. Պետրոսյան, Հայերենագիտական բառարան, Եր., «Հայաստան» հրատ., 1987, էջ 161:

<sup>2</sup> Վ. Առաքելյան, Գրաբարի քերականություն, Եր., «Վիամիր» հրատ., 2010, էջ 10, 12:

<sup>3</sup> Հ. Թուրջյան, Բառարան Վանի բարբառի, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ XIX:

**ածանցվելիս անհնչունափոխ ձևը պահպանելը:** Նման օրինակներում գրական լեզվի հնչյունափոխական կանոնները չեն գործում, և բառը հարազատ է մնում գրաբարից ավանդված արմատին. այսպես դեպ > *տեպնել* 1. «դիպչել», 2. «վնաս հասցնել»: «Փօլէն տեպավ վերի վոչխրրին»: «Խօսկի մէջ տեպավ տըրկը-ցուն», այսինքն «հարևանին վիրավորեց»: *Տէպուկ* «դիպուկ, անվրեպ» «Շաստ տեպուկ թվանք կըզայրկի»:

Էջ արմատը վանեցիները չեն հնչյունափոխել հետևյալ բառերում. *էժնել* // *էճնել* «իջնել» («Էլ չեմ էճնե ես Վայրսիլսի սարից»), *էջի կիինի* «հնձանում լցված խաղողի կույտից ինքնաբերաբար, առանց ձգմելու գոյացող գինի, որն ավելի ընտիր է լինում» («Էրկու կուտիկ էլ էջի կիինի կոնծեցի»): Հավանաբար էջ արմատով է նաև *էջղել* «հոգնել, տաղտկանալ» բայը:

**Մ-3)** Հայերենի բարբառների բնորոշ փափուկ, քմային ձայնավորները<sup>4</sup>, դրանց ներդաշնակության օրենքը<sup>5</sup>, գրաբարից ժառանգված երկբարբառներն ու եռաբարբառները, ձայնեղների խլացումը կամ շնչեղխլացումը, խուլերի ձայնեղացումը, ինչպես նաև քմային կամ կոկորդային բաղաձայնների առկայությունը<sup>6</sup>, հագագային *հ-ի խ* համարժեքը և օրինաչափ այլ փոփոխություններ պատճառ են դառնում **հնչյունական և բառային գուգաձևությունների առաջացման**՝ հաճախ պատրանք ստեղծելով տվյալ լեզվական միավորի փոխառյալ կամ օտարաբան լինելու: Այսպես՝ *էվէճ* «ելևէջ», *խինութ* (<հնուց) «վաղեմի, անցյալից», *օղիս* «աղյուս», *իկի* «այգի» («Մարթ մարթում *իկիմ կուտա*, *մարթ մարթու ձութըմ խավող չի տա*»), *էկէստար* «այգեստան», *չօրօչպայթ* «չորեքշաբթի», *գաթգուէս* «կաթողիկոս» (Հաջըն), *տըրօխթ* «դրախտ» (Բեյլյան), *ավիջ* «հավատալ» (Հաջըն, Ջեյթուն), *անավօղ* «անհավատ» (Բեյլյան) *Էքպայրեկ* «այգբարև» (Վան), որից էլ՝ *Էքպայրեկ խտալ*: Նորապսակները նվազողների հետ առավոտյան բարձրանում են կտուրը՝ ծագող արևին այգբարև տալու:

Իրանյան *ճաշակ* արմատի *ջաշազ* (Համշենի Ճանիկ, Մամսոն, Օրմոնքոյ) // *ջաշօզ* (Սվեդիա) հնչյունական ձևերն ուենեն «նշխար» իմաստը, որի *ան-*ժխտականով ածանցված *անջաշօզ* կազմությունը հանրաձանոթ «անճաշակ» բառը չէ և նշանակում է «հաղորդություն չստացած»:

Ըստ Ա. Հանեյանի՝ Դիարբեքի թաղամասերից մեկը տիգրանակերտցի հայերն անվանում են *Խանչաիիսից*, որը *խաչաբակ* բառի հնչատարբերակն է և նշանակում է «եկեղեցու բակ»<sup>7</sup>: Նախկին *Խանչաիիսից*, ըստ այժմյան դիարբեքի բնակիչների՝ *Հանչեիեկ*, թաղամասը ներկայումս կոչվում է «Գյավուր

<sup>4</sup> Տե՛ս Ժ. Միքայելյան, Վասպուրականի խոսվածքների քմային ձայնավորները, Եր., 2009:

<sup>5</sup> Տե՛ս Ռ. Բաղրամյան, Ձայնավորների ներդաշնակության օրենքը բարբառներում, «Տեղեկագիր հասարակական գիտությունների», № 12, Եր., 1964, էջ 61-72:

<sup>6</sup> Տե՛ս Ռ. Բաղրամյան, Բաղաձայնների փոփոխությունները բարբառներում (ուրվագիծ), «Լրաբեր», № 1, Եր., 1967, էջ 33-46:

<sup>7</sup> Ա. Հանեյան, Տիգրանակերտի բարբառը, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1978, էջ 211:

մահալլեսի»<sup>8</sup>: *Գյավուր* «անհավատ» անվանումը ևս ակնարկում է *հանչ* «խաչ» բաղադրիչի առկայության մասին:

Հնչյունափոխական այլևայլ դրսևորումները, բառային մաշվածքները, բառակապակցություն կազմող բաղադրիչների սերտաձումները, հատկապես անձնանունների և տեղանունների կրճատումները բարբառային լեզվի սովորական իրույթներից են: Մալաթիայի բարբառն ունի «*Բսրիսը աշկըդ մըդնա*» անեծքը, որն ուղղվում է Հիսուս Քրիստոսին շշուկով աղոթողին (*Բսրիս* < Հիսուս Քրիստոս):

Հաճախ տարբեր բնույթի հնչյունափոխությունների հետևանքով, հատկապես հնչյունների անկում, բառի մաշվածք, ամփոփում և այլն, բառերը երբեմն դարձնում են անճանաչելի: Բարբառային բառարաններում դրանք հնարավոր է դառնում ճանաչել բառաբացատրությունների միջոցով:

Օրինակ, բառի մաշվածքի հետևանքով անձանոթ թվացող *վէլը* բառը հնարավոր է ճանաչել միայն «վայելը» բացատրության միջոցով, որից էլ *վէլէլ* «վայելել» բայը: Այդպիսին է նաև *խուխա* «երեխա» գոյականը: «*Աղըէրը քավորը նըհըէտ // պըէլուն նըհըէտ խուխին կընքըէց*»: «Աշակերտ» բառից է *շաֆ իրդանա*, այսինքն՝ «աշակերտական», որ է՝ «ընծա կամ հյուրասիրություն, որ անում է հաջողություն ունեցողը»: Նաև՝ *դո նէգ* «աղավնի» (ԼՂՀ Խանազահ, Խրմանջուղ), *պայուստ* (Մարտունու Լիճք) // *բայուսկ* // *բահուստ* (Տրապիզոն) «պահք», *կիպ* արմատով՝ *քրքրսուկ* «լիքը, լեցուն», *բէբայր* (Ագուլիս, Կարճևան, Նախիջևանի Տանակերտ) // *պէփիր* (Բուրդուր) «հորեղբայր», երդում *ույդ օւ // ուրդ ու // իյդ օւ* (Հաջն) // *ույթօւ* (Զեյթուն) // *ուֆտօ մ // ուֆտօմ* (Սվեդիա) և այլն: Քեսաբի բարբառի *ուֆտօմ* և *ուֆտօւ* հնչատարբերակներին զուգահեռ գործածվում է *ուֆտօմ այն պէնէմը իրվան // յըրվան // ըրվան* («երդում ինչ-որ բանի վրա») բառակապակցությունը, նաև *ուֆտ օննիլ* («երդում անել») հարադիր բայաձևը:

Այս շարքին են դասվում նաև՝ *աղորթ* < ուղղորդ (Լիւ) «ճիշտ, իրավացի», *անգու-անգու*, 1) բառացի՝ «անկյունից անկյուն», 2) փխբ. «խաղացնելով, ձեռ առնելով», *անթօլկէլ*, «անութ» բառից՝ «արմունկով հրել», *ընթէլ* «անութով՝ ընթով վերցնել», *անըղնակ* (Կոճերեր, Հուրթուկ) «աղեղ» բառից՝ «ծխածան» [*«Անձրեվ տայթրավ, անըղնակ տոնս իկավ»* (Հուրթուկ)], *անկվան* < անագան «ուշ» [*«Մարէն մեռնի իր լաճուն, անկվան ի, տոնս արե»*], *անկըննալ* «ուշանալ» [*«Մեր լեղին կըկտրի, եփ քո թուղթն (=նամակ) անկըննալ»* (Վան)]:

Ասուրական փոխառություն համարվող *կնիք* և բնիկ հայերեն *հայր* բաղադրիչներով կազմված, ժամանակակից գրական հայերենի ակտիվ բառապաշարի մաս կազմող «կնքահայր» բարդությունը մի շարք տարածքներում ի հայտ է գալիս անճանաչելի հնչատարբերակներով. օրինակ՝ *կունքօօր* (Շամախի), *քըօր* (Մասուն), *քավիր* (Մարաղա), *չավոր* (Հին Բայազետ, Ապարանի

<sup>8</sup> M. Margosyan, Gavur Mahallesi, Istanbul, «Aras», 2013:



Քուչակ), *գրնկ'այրճ* (Համշեն) և այլն: Այդպես և *կնիք + ա + բար // պայ* բառն ունի նախնական տեսքից հեռացած մի շարք հնչատարբերակներ. *գրնքայրար* (Մասուն), *գրնքարբ* (Զեյթուն, Մարաշ), *հինքարբար* (Ակն), *հրնքարբար* (Մալաթիա), *իք'արբար* (Անկարայի, Չանղըրըի, Այաշի թրքախոս հայերի խոսվածք), *ընքայրայր*<sup>9</sup> (Կեսարիա, Բալուի Նաջարան), *քա'բար* (Մասունի Տնգետ և Մեմալ, Աշտարակի Լեոնարոտ), *ընքարայ* (Երզնկա), *ինքարբար* (Չմշկաձագ, Սեբաստիայի Խուռնավուլ), *ընքարայր* (Հաջըն), *գրնքարբար* (Մալաթիա), *քարայր* (Մասունի Հոսներ), *քայրբար* (Խուրթի Շեն), *կընքարայայ* (Այնթապ, Ադանա), *քայայայ* (Պուլիս, Մուշ, Չարսանջակ), *քայայայ* (Բուլանուխ) և այլն:

*Կնիք+ա+մայր // կին* «կնքամայր» բուն կազմությունից արտաքուստ բավականին հեռացել են նաև *քամամ // քրմամ // քր'մամ* (Մասուն), *ընքամայր* (Զեյթուն) հնչյունական զուգաձևությունները: «*Ընքամայրը հաքցուց չօջուխին լաթերը*» (Խարբերդ):

**Բ) Բառապաշարային դրսևորումներ, որոնք պահպանվել են միայն բարբառներում:**

Գ. Ջահուկյանը, անդրադառնալով բարբառային հնաբանություններին, նշում է, որ բարբառներում կան ածանցական այնպիսի տարբերություններ, որոնք գրաբարյան կազմություններից ավելի հին են: Հաճախ բարբառը պահպանում է բառի ավելի հին ձևը, քան գրաբարում էր. օրինակ՝ *զգեստ* (զ+գեստ), բարբառներում կա *զեստ*, գրաբարում՝ *անշուշտ*, բարբառներում՝ *շուշտել* «կասկածել», գրաբարում՝ *հոլով* «պտույտ», բարբառներում՝ *հոլ* և այլն<sup>10</sup>:

Այս տեսանկյունից դիտարկելով բարբառային բառապաշարի զարգացման դարավոր ընթացքը՝ հանդիպում ենք տարբեր ժամանակներից եկող և տարբեր հնություն ունեցող լեզվական դրսևորումների:

**Բ-1) Ուշագրավ են բնիկ հայերեն մի շարք բառարմատների առանձին կիրառությունները**, որոնք բնորոշ չեն գրական լեզվի զարգացման մյուս փուլերին, այդպես նաև ժամանակակից հայերենին: *Ուռուցք* բառի արմատն առանձին է գործածված Խոշաբի Հուռթուկ, Արճակի Լիմ<sup>11</sup> բնակավայրերի խոսվածքներում. *ուռ* «մատակի, կովի, ոչխարի, այծի կուրծք»: «*Կօլու ուռ լիք կայթ ի*» (Հուռթուկ): *Տախտ* արմատը Խոշաբի Հուռթուկում բազմապատ է. ունի «գետին» («*Տախտ ավիլեց*») և «հատակ» իմատները: *Ըստեփ* < ստեպ բնիկ հայերեն արմատն ունի «հետո» իմաստը: Այն գործածում է ունկնդիրը, երբ որևէ պատմություն է լսում՝ շարունակ կրկնելով՝ *ըստեփ, ըստեփ*:

<sup>9</sup> Այս բառը թրքախոս հայերից անցել է թուրքերին և թրքախոս հույներին:

<sup>10</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայ բարբառագիտության ներածություն, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1972, էջ 108:

<sup>11</sup> Օրինակներն ըստ ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրի» համաձայն գրանցված նյութերի (տե՛ս «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր» (կազմողներ՝ **Հ. Մուրադյան, Ա. Գրիգորյան, Դ. Կոստանդյան, Ա. Հանեյան**), Եր., 1977):

Արմատները երբեմն ի հայտ են գալիս հարադիր բայերում կամ այլ բարդություններում: Օրինակ, *օգնել* բայի *օգ* արմատով Վանի բարբառում կազմվել է նույն իմաստն արտահայտող *օջ՝ կ'այլ* հարադիր բայը<sup>12</sup>: *Հուն* արմատով է *խուն խանել* «հարմարագույն լուծման հասցնել» հարադրությունը: Վասպուրականի տարածքում թևավոր ասույթի գործառույթ ուներ հետևյալ նախադասությունը. «Որ չիր կանե քո սեր խանե խուն, ինչի՞ մրտար իմ մանկան էրուն»:

*Ափս էրթալ // ափս տալ* հարադիր բայերն ունեն «մանուկների քայլել սկսել, թաթիկներով փորի վրա սողալ» իմաստը, որից էլ՝ *ափսաթաթիկ էրթալ* «թաթիկներով ափս տալով»: *Ափ* արմատով է կազմված նաև *սայրոկել բազմ-խմաստ* բայը՝ 1) «ծառը ճղակոտոր անելով միրգ պոկել» 2) «խոսքով հարձակվել մեկի վրա, նախատել»: «Պերան իպսց սայրոկալ իմ յախէն»: Այս իմաստներով և *ափ* արմատի հետ կապով կարելի է պայմանավորել ժամանակակից ժողովրդախոսակցականին բնորոշ *հարրոզել* բայի կազմությունը: Ղարաբաղի բարբառի խոսվածքներին (Վրաստանի Շահումյան) հատուկ է *հափիռո* «բուռ» բառը, որից էլ *շան հափռովը մի* չափի մակբայը՝ «շատ քիչ, շան բռան չափով»: Բառակապակցության իմաստը պայմանավորված է շան՝ ափ, բուռ չունենալու հանգամանքով:

Գրաբարի *բամ* բայաձևով է կազմված *բամ անել* «պատմել, խոսակցել» հարադիրը: «Պատվրներ նըստեր ին ավսլ տարվա բամ կանին» (Վան): Կարծում ենք՝ *բամ-բաս-բայ* հաջորդականության երրորդ դեմքի *բայ > բէլ* խոնարհված ձևից է կերտված Վանի բարբառի *բէլիբէլ* «բամբասել» անորոշ ձևը: «Խարս ուր տալոչ կը բէլիբէլ»:

*Սար* անեզական գործածություն ունեցող բնիկ հայերեն արմատի եզակիով է կերտված Վանի բարբառի *սարել* «հարդարել» բայը, ինչպես նաև *սարվածք* գոյականը՝ «գութանի ամբողջ կազմը» իմաստով<sup>13</sup>: Ժամանակակից հայերենում այդ արմատը գործածվում է միայն *ք* հոգնակերտով՝ *սարք*:

Վրաստանի Շահումյանի շրջանի հայերը գործածում են *նիրուկել* բայը՝ «ամրապնդել, կապել, ապահովել, սեպել, պնդել, գործ բռնել» և նման այլ իմաստներով: Բացատրական բառարանները տալիս են միայն *նիրուկ* արմատի «բորոտ» բացատրությունը, որը չի համապատասխանում բարբառային իմաստագործառականությանը: Մինչդեռ պատմությանը հայտնի են ուրարտական *Ուրուկ // Ուրեկ* բերդաքաղաք<sup>14</sup>, նաև Շումերի հնագույն քաղաքներից մեկը՝ *Ուրուկ // Ուրուգ*, Աստվածաշնչում՝ *Սրեք* հատկանուններով<sup>15</sup>:

**Բ-2) Գրական լեզվին բնորոշ բառեր**, որոնք ժողովրդախոսակցական լեզվի

<sup>12</sup> Վանի բարբառի օրինակներն ըստ Ն. Թուրշյանի՝ վերը նշված բառարանի:

<sup>13</sup> Տե՛ս **Ն. Աճառյան**, Հայերեն արմատական բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 1926, հ. Ա, էջ 183: [nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=HY\\_HY&query=](http://nayiri.com/imagedDictionaryBrowser.jsp?dictionaryId=7&dt=HY_HY&query=)

<sup>14</sup> Տե՛ս **Թ. Հակոբյան, Ստ. Մելիք-Բախշյան, Հ. Բարսեղյան**, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, Եր., 2001, էջ 211:

<sup>15</sup> Տե՛ս <https://hy.wikipedia.org/wiki/%D5%88%D6%82%D6%80%D5%B8%D6%82%D5%AF>

բառապաշարում գործածական չեն, սակայն բարբառներում կիրառական են: Օրինակ՝ Վանի բարբառում ունենք *պայթար* «պայտագործ», *տաճել* (<*դաջել*) «տասանորդը վերցնելուց առաջ արմտիքի դեզը կնքել, որպեսզի տերն իր արմտիքից չգողանա», *զինել* <զենուլ «մորթել», *վերջնեկ* և այլն: Երբեմն բարբառային հայերենում հանդիպում են բառակազմական այնպիսի հնարքներ, որոնք ունեն գրական լեզվին բնորոշ ոճավորում: Օրինակ, *վերջնեկ* բառի «վերջին զավակ» իմաստն արտահայտելու համար վասպուրականցիները գործածում են *ապեկին* (ապ+եկ+ին) ժխտական *ապ-* նախածանցով հումանիշը: Այս կերպ են կազմված նաև *լրծառ* «պարանոցի լուծ վերցնող հատվածը», *չարեթ* «քառորդ», *վատկեն* «անհասկացող», *տեսմուխ* «բոցավառվելուց առաջ ծխի առատ բարձրանալը», *էլքան* «առագաստ», *եկա* «առագաստանավի դեկ», *եղա* «նյութեղեն» («*Ի՞նչ էղա ի, պղղընձեղե՞ն ի, արծաթեղե՞ն ի*») և այլն: Վախերակ <վախ+երակ գոյականից («մահվան սարսափից առաջացած հիվանդություն») կազմվել է *վախերակը պրոնել* հարադիր բայը՝ «բուժել» իմաստով:

Գրական հայերենի բառակազմական օրինաչափությամբ կերտված *խորանդր* // *խորունթր* բարդությունը Կոճերեր գյուղի խոսվածքում բազմիմաստ է և նշանակում է՝ 1) «շատ խորը», 2) «շատ խորը մտածող, խոհուն մարդ»: «*Խորանդր իսան ի*»: «*Քո խոկին խորանդր ի, խոկապահուստ պան պախած կէլնիս*»:

*Յստակ* ածականի *իստակ* ձևից են կազմված *իստրկել* (Լիմ) «մաքրել, ջոկել, ընտրել», «կեղևել», *իստրկճրել* (Հուրթուկ) «պարզաջրել», *հ՛իստրկուկ* (Մուշ) «մաքրված, հստակված» բայաձևերը, որոնք արևմտյան տարածքի բարբառային բառապաշարում հաճախադեպ են: «*Աղունի ցորենն իստրկուկ ի*»: «*Փաթաթեղ իստրկի*»: Գրաբարի *խինդ* արմատով ածանցված *խընդում* բառը Ազուլիսի բարբառում ունի «Վարդավառի զարդածառ, տոնածառ» իմաստը:

Հաղորդվելու, սուրբ հաղորդություն ընդունելու ծեսը բարբառներում արտահայտվում է գրականահունչ *մասնըվիլ* // *մասնրել* (Վան), *մասնավորվիլ* // *մասվիլ* (Երևան), *մասնավորիլ* (Արծկեի Հառեն, Արջրա) բայաձևերով: «*Էթանք ժամ, մասնավորինք*»:

**Բ-3)** Բարբառներում հանդիպում են մի շարք բառեր, որոնց արմատները հնարավոր չէ բացատրել պարսկերենով, թուրքերենով կամ արաբերենով, և չի բացառվում, որ ավանդված լինեն ուրարտերենից կամ հնագույն այլ լեզուներից: Օրինակ՝ *սարակ* «գյուղատնտեսական աշխատանքներում օրավարձով աշխատող բանվոր», *սատակ* «անկրունկ կոշիկ» արմատները, ըստ Հ. Աճառյանի, ասորապարսկական փոխառություններ են և բնորոշ են Գավաշի, Մոկսի, Շատախի, Մալմաստի, Վանի տարածքներին<sup>16</sup>:

Վանի բարբառին բնորոշ մի շարք բառարմատներ բառարաններում ներառված չեն. չի բացառվում դրանց նախագրաբարյան լինելը. այսպես՝ *սըմսար*

<sup>16</sup> Տե՛ս Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 184:

«միջնորդ», *սենտ* «առույգ»: Սրանց կարգին կարելի է դասել *սեն* («զուտ, անխառն, պարզ, մաքուր») չստուգաբանված արմատով կազմված *սենիկ* գոյականը՝ «մաճնի, յուղի երկարուկ աման» իմաստով:

Երրորդ՝ **քերականական տարբեր միջոցներով կերտված բառախումբը** բավականին հարուստ և հետաքրքիր է: Տարբեր հոլովներով դրված բառերով, ինչպես նաև գրաբարի բայի դիմավոր և անդեմ ձևերով արտահայտվում են նոր բառիմաստներ: Գրաբարի նախդիրները մի շարք ձևաիմաստային միավորների հետ կազմում են համաձույլ բառեր, որոնց իմաստի և կազմության առանձնահատկությունները ճանաչելը դուրս է բարբառակիրների լեզվական գիտելիքներից: Այդ բառաշերտի քննությանը կանդրադառնանք առանձին հոդվածով:

Այսպիսով, ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հայերենի բարբառները, ժառանգելով նախագրային, ապա և գրաբարի լեզվական հարստությունը, պատմական զարգացման ընթացքում յուրովի համալրվել ու հարստացել են հնչյունական, բառապաշարային և քերականական տարբեր միջոցներով: Գրական լեզվի բառային կազմից դուրս մնացած, սակայն բարբառներում պահպանված բառաձևերը՝ հին և նոր իմաստներով, օգնում են լեզվական որոշ հարցեր բացահայտելուն, ինչպես նաև ստուգաբանական ճշգրտումներ կատարելուն:

**АЙКАНУШ МЕСРОПЯН – Фонетические и лексические явления армянских диалектов связанные с грабаром.** – В статье представлены истоки языкового богатства армянских диалектов, фонетические, лексические и грамматические связи с древнеармянским языком-грабаром. Древний литературный армянский язык сыграл значительную роль в образовании и развитии среднеармянского и новых литературных языков, пополнении диалектной лексики. Ставятся и раскрываются несколько ключевых вопросов: 1) различные фонетические проявления с древнеармянской-грабарской основой, 2) случаи сохранения коренной формы слова, 3) особенности фонетических и лексических параллелизмов, 4) слова и словосочетания, не вошедшие в словарный запас литературного языка, но сохранившиеся в диалектах, 5) особенности употреблений исконно армянских корневых слов и т.п.

Путем исследования выяснили, что в ходе исторического развития диалекты армянского языка дополнялись и обогащались различными фонетическими, лексическими и грамматическими средствами на основе грабара. Слова, не входящие в словарь литературного языка, но сохранившиеся в диалектах, с прежними и новыми значениями, помогают выявить некоторые лингвистические вопросы, а также внести этимологические исправления.


**Ключевые слова:** *грабар-древнеармянский язык, региональный вариант армянского языка, диалект, фонетическая система, лексика, изоглоссы*

**HAYKANUSH MESROPYAN – Phonetic and Lexical Phenomena of Armenian Dialects Related to Grabar.** – The article presents the origins of the linguistic richness of the Armenian dialects, phonetic, lexical and grammatical connections with the ancient Armenian Grabar language. The ancient literary Armenian language played a significant role in the formation and development of Central Armenian and new literary languages, replenishing the dialect vocabulary. Several key questions are posed and addressed: 1) various phonetic manifestations with an ancient

Armenian-Grabar basis, 2) cases of preserving the root form of a word, 3) features of phonetic and lexical parallelisms, 4) words and phrases that are not included in the vocabulary of the literary language, but are preserved in dialects, 5) features of the use of native Armenian root words, etc. Through research, we found out that in the course of historical development, the dialects of the Armenian language were supplemented and enriched with various phonetic, lexical and grammatical means based on grabar. Words that are not included in the dictionary of a literary language, but preserved in dialects, with old and new meanings, help to identify some linguistic issues, as well as make etymological corrections.

**Key words:** *grabar-ancient Armenian language, regional variant of the Armenian language, dialect, phonetic system, vocabulary, isoglosses*

«ՄԱՐԴԿՈՒԹՅՈՒՆ» ՀԱՄԿԱՑՈՒՅԹԻ ԲՆԻԿ ԲԱՌԱՅԻՆ  
ՄԻԱՎՈՐՆԵՐԸ ՈՒՆՏԱՆԵՍ ԵՊԻՄԿՈՂՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ  
ՀԱՅՈՑ» ԳՐՔՈՒՄ

ՆԱՐԻՆԵ ԴԻԼԲԱՐՅԱՆ \*   
*Երևանի պետական համալսարան*

Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմություն Հայոց» գրքում վկայված են մարդկություն հասկացության հին հայերենի գրեթե բոլոր հիմնաբառերը, որոնց ստուգաբանական և իմաստաբանական հետազոտությունն ապացուցում է, որ մարդկություն հասկացությունը նշանակող բոլոր առաջնային միավորները հայերենում գերազանցապես բնիկ են եղել: Դրանց տարածամանակյա քննությունն ապացուցում է, որ դրանք համագործածական են գրական հայերենի բոլոր փուլերում, բարբառներում և խոսվածքներում, գալիս են նախալեզվից և ունեն հազարամյակների պատմություն: Հին հայերը, առանձնանալով հնդեվրոպական միասնությունից, արդեն ունեցել են բարձր զարգացած հասարակական կյանք՝ իր հստակ աստիճանակարգությամբ, խորքային հարաբերություններով, ազգակցական, բարեկամական և մասնագիտական բազմազան ենթահամակարգերով, որոնց անվանումները հնդեվրոպական են, փոխառություններն այստեղ սակավաթիվ են, հիմնականում դիպվածաբար: Մարդկություն/մարդ հասկացության բառերը հայերենի պատմության ընթացքում սակավ փոփոխություններ են կրել, դրանք կայուն միավորներ են: Վկայված փոփոխությունները վերաբերում են որոշ բառերի հիմնական բառաֆոնոլոգիայի դուրս մղվելուն, այսինքն՝ հնաբանություններ դառնալուն: Միաժամանակ ունենք նաև իմաստի ընդլայնման դեպքեր, երբ մարդ հասկացության շատ բառեր, իրենց հիմնական նշանակությանը զուգահեռ, ձեռք են բերել հարգական կամ մտերմական դիմելիքների կիրառություն: Որոշ միավորներ ձեռք են բերել ակնհայտ եզրույթային իմաստ՝ հարստացնելով արդի հայերենի բառապաշարը:

\* Նարինե Դիլբարյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի դոցենտ

Нарине Дилбарян – кандидат филологических наук, доцент кафедры истории армянского языка и общего языкознания, ЕГУ

Narine Dilbaryan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of the Armenian Language History and General Linguistics

Էլ. փոստ՝ [narine.dilbaryan@ysu.am](mailto:narine.dilbaryan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0000-0003-1212-0029>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 19.05.2024

Գրախոսվել է՝ 17.06.2024

Հաստատվել է՝ 17.06.2024

© The Author(s) 2024

**Բանալի բառեր** - Ուխտանես Եպիսկոպոս, «Պատմութիւն Հայոց», հին հայերեն, մարդկություն հասկացույթ, բնիկ բառեր, փոխառություններ, տարածամանակյա քննություն, հնաբանություններ, եզրույթներ

Եկեղեցական հայր, մատենագիր Ուխտանես Եպիսկոպոս Մեբաստացու «Պատմութիւն Հայոց» երկը Ժ դարի մատենագրության յուրահատուկ գործերից է, որն առանձնանում է ինչպես յուրօրինակ լեզվական որակով, այնպես էլ բովանդակային հարստությամբ, այստեղ պատմական դեպքերը միահյուսվում են դավանաբանական խնդիրներին, ազգագրությանը, բանահյուսությանը: Ուխտանեսը հոգևոր կրթություն ստացել է Նարեկավանքում՝ Անանիա Նարեկացու վարդապետությամբ, որին համարում էր «տէր և հոգևոր հայր», իսկ իրեն՝ «որդի», «յետին և տրուպ աշակերտս»<sup>1</sup>: Ուխտանեսը հոգևոր-դավանաբանական գործունեություն ծավալել է Մեբաստիայում 970-985 թթ., որտեղ եղել է թեմի առաջնորդ, ապա գլխավորել է Եղեսիայի թեմը: Հակաքաղկեդոնական պայքարում հայտնի է դարձել իր վճռական դիրքորոշմամբ՝ իբրև հայոց եկեղեցու ինքնիշխանության ջերմեռանդ պաշտպան՝ ի հակադրություն Բյուզանդիայի եկեղեցու ճնշումների:

«Պատմութիւն Հայոց»-ը գրել է 980 թվականին պաշտելի ուսուցչի՝ Անանիա Նարեկացու պատվերով և օրհնությամբ: Գեղեցիկ մի ավանդության համաձայն՝ հոգևոր հայրն ու իր սանը 980 թ. հուլիսի 4-ին «յեզր գետոյն որ կոչի Ախուրեան» հանդիպել և զրուցել են «բերան ի բերան... յաղագս պատմութեան՝ այսինքն՝ քննարկել են ապագա մատյանի և կառուցվածքը, և բովանդակությունը: Ուխտանեսի պատմության տարբեր դրվագներ հիշատակվում են ԺԳ դարի չորս նշանավոր մատենագիրների՝ Կիրակոս Գանձակեցու, Վարդան Արևելցու, Մխիթար Այրիվանեցու և Ստեփանոս Օրբելյանի երկերում: Մատյանի բնագիրը մեզ հասել է 1663 թ. ընդօրինակությամբ (ՄԱՄ, ձեռ. № 1774), մնացյալ չորս ձեռագրերը գրչագրված են այս մատյանից և պահվում են Երևանի, Վենետիկի, Փարիզի ու Ս. Պետերբուրգի ձեռագրատներում<sup>2</sup>:

Մեր հետազոտած երկասիրության ճշգրիտ և ամբողջական վերնագիրը չի պահպանվել. «Պատմութիւն Հայոց» անվանումը պայմանական է. հրատարակության համար հիմք դարձած ձեռագիրը (Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. № 1774) ունի հետևյալ ծավալուն նախաբան-խորագիրը. «Ձպատմութիւն յերիս Հատուածս, զոր ասացեալ է տեառն Ուխտանիսի Սե[բաստիոյ] Եպիսկոպոսի, ի խնդրոյ հարն Անանիայի՝ Նարեկավանաց առաջնորդի եւ նախաշար վարդապետի. Հատուածն առաջին. Յաղագս թագաւորաց և հայրապետաց մերոց, եւ երկրորդն. Վասն բաժանման Վրաց, եւ երրորդն. Յաղագս մկրտութեան ազգին այնմիկ Ծաղն կոչեցեալ»: Այսինքն՝ երկն ունի նախեր-

<sup>1</sup> Մատենագիրք Հայոց, ԺԵ. հատոր, Ժ. դար, գիրք Բ., էջ 441-445:

<sup>2</sup> Տե՛ս նույն տեղը:

զանք և բաժանված է երեք մասերի, որոնք հեղինակն անվանում է հատվածներ

ա. Պատմություն հայրապետաց և թագավորաց Հայոց,

բ. Պատմություն բաժանման Վրաց ի Հայոց,

գ. Յաղագս մկրտությանն ազգին այնմիկ Օաղն կոչեցեալ:

Նախերգանքը Վաղարշապատի հրատարակիչները անվանել են Գլուխ Ա և չեն գրել իսկական վերնագիրը: Նախերգանքը պատմական բովանդակությամբ սուղ է, սակայն ունի բարոյաքարոզական հստակ ուղղվածություն: Երկասիրության առաջին և երկրորդ հատվածները մեզ հասել են թերի, 3-րդ հատվածը կորուսյալ է:

Առաջին հատվածը Հայոց ամփոփ պատմությունն է՝ Աղամից մինչև Տրդատ Գ Մեծ: Բաղկացած է 76 գլուխներից, որոնցից առաջինը ընծայական է Անանիա Նարեկացուն: Այս հատվածի պատմական արժեքը մեծ չէ, քանի որ Ուխտանեսը գրեթե կրկնել է Ագաթանգեղոսի, Զենոբ Գլակի, Եվսեբիոս Կեսարացու և հատկապես Մովսես Խորենացու արդեն հայտնի տեղեկությունները: Որպես սկզբնաղբյուր օգտագործել է նաև Անանիա Շիրակացուն վերագրված «Ժամանակագրութիւնը», եկեղեցական հայրերի ճառերը, վկայաբանությունները: Բայց նշենք, որ Ուխտանեսն ինքնուրույն կազմել է Հայոց թագավորների և կաթողիկոսների, հռոմեական կայսրերի ու քահանայապետերի ցանկեր, շարադրել I–IV դդ. Հայաստանի քաղաքական, կրոնական պատմությունը:

Պատմության երկրորդ հատվածում, որը բաղկացած 70 գլխից, Ուխտանեսը մանրամասն անդրադառնում է VI դ. վերջին և VII դ. սկզբին Հայ, Վրաց և Աղվանից եկեղեցիների փոխհարաբերություններին ու հատկապես Հայ եկեղեցուց Վրաց եկեղեցու բաժանման պատմությանը: Վեր է հանել երկու եկեղեցիների միջև նախապես եղած կատարյալ միությունն ու համաձայնությունը: Ուխտանեսի համոզմամբ, Հայ եկեղեցու հակաքաղկեդոնական դիրքորոշումը հայ և վրաց ժողովուրդներին զերծ է պահել օտար ազդեցություններից ու ենթակայության վտանգից՝ ունենալով կրոնաքաղաքական մեծ նշանակություն: Սակայն Մովսես Բ Եղիվարդեցի կաթողիկոսի օրոք սկսվել են եկեղեցական բաժանման խմորումներ, և Վրաց եկեղեցին VII դ. սկզբին վերջնականապես անջատվել է Հայ եկեղեցուց: Դատապարտելով Վրաց կաթողիկոս Կյուրիոնի անջատողականությունը՝ Ուխտանեսը հանգել է այն եզրակացության, որ պառակտումն իրականացվել է բյուզանդական եկեղեցու ու կայսրության դրդմամբ, և եկեղեցու անջատումը թուլացրել է մեր դիմադրողականությունը: Այս հատվածի շարադրման համար Ուխտանեսը օգտագործել է «Գիրք թղթոցը», VII դ. պատմիչ Մովսես Կաղանկատվացու «Պատմություն Աղուանից աշխարհի» երկը, թուղթ-շրջաբերականներ, դիվանական վավերագրեր, վրացական փաստաթղթերի թարգմանություններ ևն:

Պատմության երրորդ հատվածն ունեցել է ընդգծված դավանաբանական, ազգագրական բնույթ: Այն բացահայտել է քաղկեդոնիկ հայերի (ծաթերի)



կրկնամկրտության երևույթը, հայ եկեղեցու հետ հարաբերությունները: Պատմական և ազգագրական մեծ արժեք ունեցող հետազոտություն է եղել ծաթերի, նրանց բնակության տարածքի պատմաաշխարհագրական նկարագրի մասին: Երրորդ հատվածի բովանդակության մասին հակիրճ ակնարկ կա երկի նախերգանքում: Ցավոք, այս հատվածը կորուսյալ է, բայց նրա մասին տարբեր վկայակոչումներ կան հատկապես XIII դ. պատմիչ Մխիթար Այրիվանեցու աշխատանքում:

**«Մարդկություն» հասկացույթին** վերաբերող բառերի քննությունը Ուխտանես Եպիսկոպոսի «Պատմութիւն Հայոց» երկում ցույց է տալիս, որ իմաստային այս խումբը գրաբարում հարուստ էր տարբեր միավորներով, որոնք հոմանշային հարուստ շարքեր էին կազմում: Բառերը գերազանցապես բնիկ հնդեվրոպական են և համագործածական հայերենի զարգացման բոլոր փուլերում, ինչպես նաև բարբառներում՝ հնչյունական որոշակի փոփոխություններով: Մեր լեզվի զարգացման ողջ ընթացքում այս բառերը մեծամասամբ գրեթե ամբողջությամբ պահպանել են իր առաջնային իմաստները:

Ուխտանեսի երկում հանդիպած հնդեվրոպական ծագման *մարդ* նշանակող բառերն են՝ *ազգ, ազգական, ազգակից, ազգատոհմ, ականատես, ամուսին, այլազգ, անձն, անձնասեր, առաջնորդ, արարիչ, արբենակից, գող, գործակից, դիակ, եղբայրասեր, երգիչ, երկրաւոր, զարմ, ընկեր, թելադիր, թոռն, լիրբ, լծակից, ծանալթ, ծառայ, ծնող, հակառակորդ, հայալեզու, հիւանդ, հովիւ, հաւրաքոյր, մարդ, մեծամեծք, մեռեալ, միջնորդ, որբ, որսորդ, ուսումնասէր, ուսուցիչ, չարչարակից, սուրբ, սպասաւոր, վերակացու, տէր, տէրուրաց, տիկին, քեռորդի, օգնական, օրինադիր*: Ընդհանուր ունենք 50 միավոր:

Մեծ նշանակող բառերն են՝ *աղջիկ, այր, դուստր, եղբայր, կին, հայր, մայր, որդի, որձ, ուստր, տիկին, քույր, օրհորդ*՝ 13 միավոր:

**Մարդ** բառն այս հասկացույթի կենտրոնական բառերից է: Այն վաղնջական ծագում ունի: Բնիկ հնդեվրոպական է, հ. -ե \**mer* «մեռնել» առմատի \**merto* ենթակայական դերբայի ձևից, որը նշանակում է մեռնող<sup>3</sup>: Այսինքն՝ *մարդ* նախնական մտածողությամբ նշանակում է *մահկանացու*: Առաջնային է նաև մարդու հողածին լինելու գաղափարը, որն ամրագրված է Սուրբ Գրքում: Տարբեր լեզուների ընձեռած փաստերը վկայում են, որ բանական էակի անվանադրման համար առանձնացվել են բազմաբնույթ հատկանիշներ: Հնդեվրոպական լեզվամտածողությամբ, ըստ Հ. Աճառյանի, մարդը երկու հիմնական սահմանում ունի. 1. մահկանացու՝ անմահ աստվածներից տարբերվող, 2. երկրածին, երկրային, որ ծագում է հ. -ե \**g' hmon-* սկզբնաձևից, հիշենք լատիներեն *homo* «մարդ» և *humus* «հող» բառերը, նաև գոթերենում *guma* «մարդ», այս պարագա-

<sup>3</sup> Տե՛ս Լ. Շ. Հովհաննիսյան, Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն (I մաս), Եր., 2008, էջ 7:

յում մարդը երկնային արարածների հակոտնյան է: ՆՀԲ-ում «հողածին» բառ-հողվածում նշված է. «Ի հողոյ ծնեալ, ծնունդ երկրի, երկրածին, մարդ, աղամ»<sup>4</sup>, որից հետո միայն բերվում են մնացյալ իմաստները՝ «ամենայն կենդանի, մանաւանդ ցամաքային»: Իսկ «հողեղէն» անվան բացատրության մեջ նշված է. «...առաջին մարդն յերկրէ հողեղէն, որպէս հողեղէնն, նոյնպէս եւ հողեղէնքս»<sup>5</sup>: Հայերենում երկրորդ ընկալման նախաձևը չի պահպանվել: Այս բառի քննությանն անդրադառնալով՝ Լ. Հովհաննիսյանը բացահայտում է հայերի նախնական մտածողության կապը հնդիրանական ժողովուրդների հետ, որոնց ընկալմամբ ևս մարդու առաջնային հատկանիշը հենց մահկանացու լինելն է, օրինակ՝ հին հնդկերենում *marta* «մարդ», *martya* «մահկանացու», պարսկերենում *mard* «մարդ», *morden* «մեռնել»<sup>6</sup>: **Մարդ** արմատը հանդես է գալիս նաև մի շարք բաղադրություններում, որից երկուսը՝ *նախամարդ* և *մարդասպան*, վկայված է Ուխտանեսի պատմության մեջ:

**Տէր** հնագույն բառի քննությունը ցույց է տալիս, որ ծագում է \**տի-այր* ձևից, սկզբնաձևն է *տէայր*-ը (հմմտ. միայն>մէն), որ կազմուած է *տէ-* և *այր*՝ «մարդ» բառերից. առաջինը, որ նշանակում է «մեծ», գտնում ենք նաև *տիկին* (\*<տէ-կին «մեծ կին») և *տիեզերք* (\*<տէ-եզերք «մեծ եզերք») բառերի մեջ. ծագումը՝ անծանոթ<sup>7</sup>: **Տէր** բառը իմաստային մեծ բեռնվածություն ունի: ՆՀԲ-ում բառը բացատրվում է որպես «իշխան՝ ի վերայ ծառայից և հպատակաց, և սեպհական ընչից, պէտ և գլուխ ազգի և երկրի՝ մարմնաւոր կամ հոգևոր»<sup>8</sup>: Ըստ այդմ՝ **տէրը** լայն իմաստով՝ ամեն ինչի գլխավորն է: Այս բառը հանդես է գալիս նաև որպես հարգական մակդիր: Հաճախ նաև օգտագործվում է *Քրիստոս* և *Հայր Աստված* բառերի փոխարեն: Այս բառը «Արդի հայերենի բացատրական բառարանում» միայն մարդկություն, սեռ, տարիք ֆիզիկական դաշտին պատկանող 30 իմաստ ունի<sup>9</sup>: Զուգահեռ ընկալմամբ՝ *տէր*-ը նաև սեփականություն ունեցող անձն է: Ուխտանեսի «Պատմութիւն Հայոց» գրքում առավել հաճախ բառը հանդիպում է հատուկ անվան հետ զուգադրված՝ «Տէր Մովսէս», նման կապակցություններում այն հոգևոր դասի ցուցիչ է: Վկայված են **տէր** արմատով կազմված երկու բառ՝ **տիրասպան** և **տէրուրաց**:

**Տիրասպան** բառի երկրորդ՝ **սպան** արմատի ծագումն անհայտ է, իսկ **տէրուրաց** բառի **ուրաց** բայահիմքը ծագել է բնիկ հնդեվրոպական \**or-* «խոսել, կանչել» արմատից (ծիսական բառ է). հմմտ. հուն. "ρά «աղոթք, նզովք», լատ.

<sup>4</sup> Հայր Գաբրիել Աւետիքեան, Հայր Խաչատուր Միրմելեան, Հայր Մկրտիչ Աւգերեան, Նոր բառգիրք հայկազեան լեզուի, Վենետիկ, 1836, հ. 1, էջ 3:

<sup>5</sup> Նույն տեղում, հ. 2, էջ 117:

<sup>6</sup> Տե՛ս Լ. Ծ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 7-8:

<sup>7</sup> Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Հայերէն արմատական բառարան, Եր., 1926, հ.4, էջ 402:

<sup>8</sup> ՆՀԲ, հ.2, էջ 1437:

<sup>9</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976, էջ 1437:

örö «աղոթել», ռուս. *орать* «գոչել»: Ենթադրաբար առնչվում է հ.-ե. \*ar- «հրա- ժարվել, ժխտել» արմատի հետ<sup>10</sup>: Գ. Ջահուկյանը հաստատում է Աճառյանի այս ստուգաբանությունը:

**Տեր** բառի բոլոր իմաստները պահպանվել և ընդլայնվել են հայոց լեզվի բո- լոր փուլերում:

**Հայր**-ը բնիկ հնդեվրոպական բառ է, որը ծագել է հ.-ե. \*pəte´r, \*pətro´s ձևից<sup>11</sup>, Գ. Ջահուկյանը համաձայն է Հր. Աճառյանի կատարած վերականգնմանը: ՆՀԲ-ում **հայր**-ը նշանակում է «այր կամ արու ծնող զուակի, իրական կամ նմանական, առնչակից որդու»<sup>12</sup>, լայն իմաստով՝ «նախահայր»: **Հայրը** նաև հոգևոր ծառայություններ իրականացնող մարդն է՝ կուսակրոն հոգևորականը: Ջուզահեռաբար բառն ունի հարգական կիրառություն: Հաճախ *Աստված* բառի փոխարեն է գործածվում՝ Սուրբ երրորդության գլխավոր դեմքը՝ Հայր Աստ- ված: Ուխտանեսի գրքում վկայված են բառի նշված բոլոր իմաստները :

**Հայր** բառը պահպանել է իր իմաստները լեզվի զարգացման բոլոր փուլե- րում և բարբառներում: Գործածվում է նաև *-իկ* մասնիկով, որը հիմնականում տարիքով մարդկանց դիմելիք է:

**Ընկեր** միավորը կազմված է **ընդ** նախդիր-նախածանցից և **կեր** արմատից՝ «*միասին ուտող*» իմաստով: **Ընդ**-ը ծագումով բնիկ հնդեվրոպական է \*anti- («փոխարեն», «միասին» իմաստներով), զուգադրվում է նաև \*ndhos նախաձևի հետ («տակ» իմաստով): **Կեր** արմատը ծագում է բնիկ հնդեվրոպական \*guer – «կլանել, ուտել» արմատից: ՆՀԲ-ում բառն ունի հետևյալ իմաստները՝ «ընգեր, զուգական, հաւասարակից, գործակից, մերձավոր, սրտակից, բարեկամ, կցորդ, բաժանորդ, համախոհ»<sup>13</sup>: Ի տարբերություն ՆՀԲ-ի՝ Ստ. Մալխասյանցի բառարանում բառն առաջին իմաստով նշանակում է *սեղանակից, հացակից*<sup>14</sup>: Տարածված է նաև *այր, ամուսին* նշանակությունը:

**Անձն** բառը «Պատմություն Հայոց» գրքում լայն կիրառություն ունի: **Անձն** արմատը Հր. Աճառյանը, ինչպես նաև Գ. Ջահուկյանը բխեցնում են հ.-ե. \*ang'hen ձևից «փչել, շնչել» իմաստից. «Հների մեջ հոգին, ըմբռնվելով իբրև շունչ կամ քամի, ծագում է նույն արմատից»<sup>15</sup>: ՆՀԲ-ում **անձ**-ը հետևյալ նշանակությունն ունի՝ «ինքնություն իմացական և բանաւոր էակի դիմաւ որոշելոյ, անհատն բնութնակից դիմաւորաց, որ և ասի Դէմ կամ Անձնաւորութիւն, ևս և Հոգի»<sup>16</sup>: **Անձը** նախ և առաջ բացատրվում է որպես մարդ՝ իբրև անհատ: Մեր քննած բնագրում վկայված է *անձնասէր* կազմությունը, որը երկբաղադրիչ է

<sup>10</sup> Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, նշվ. աշխ., հ. 3, էջ 614:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 31:

<sup>12</sup> ՆՀԲ, հ. 2, էջ 32:

<sup>13</sup> ՆՀԲ, հ. 1, ցուցակ 1, էջ 779:

<sup>14</sup> Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերէն բացատրական բառարան, Եր., 1944, հ. 2, ցուցակ 1, էջ 63:

<sup>15</sup> **Հրաչեայ Աճառեան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 208:

<sup>16</sup> ՆՀԲ, հ. 1, էջ 192:

*անձն+ա+սէր*, երկրորդ արմատը նույնպես բնիկ հնդեվրոպական է՝ \*k'er- «աճել, աճեցնել, սնել» արմատից<sup>17</sup>:

**Մայր**-ը բնիկ հնդեվրոպական է, հ.-ե \*māte' r նախաձևից՝ նույն նշանակությամբ: Հր. Աճառյանը բերում է այլբաներենի օրինակը, որտեղ *motre* արմատը նշանակում էր նաև «երեց քույր», որն իր կրտսեր հարազատների համար մոր դերն էր կատարում<sup>18</sup>: **Մայր** արմատը ևս ունի կրոնական բովանդակություն, այսպես են դիմում միանձնուհի կույսերի առաջնորդներին:

**Կին**՝ դարձյալ բնիկ հայկական ծագում ունի իր երկու հիմքերով էլ՝ **կին-կան**, երկրորդ ձևից ունենք հոգնակի թվի կազմությունները՝ *կանայք, կանանց* և այլն: Նախաձևն է հ.-ե \*g<sup>w</sup>en կամ \*g<sup>w</sup>ēn-ը՝ հենց *կին* իմաստով, Հր. Աճառյանը իբրև առնչակից ձև հիշատակում է *աստվածուհի* իմաստով գործածվող սանսկրիտի *gna* արմատը<sup>19</sup>:

**Տիկին** բառը կազմված է երկու արմատից՝ տի + կին: **Տի** արմատին արդեն անդրադարձել ենք **տէր** բառի ծագումնաբանական քննությանն անդրադառնալիս:

Հնդեվրոպական ծագման մյուս միավորը՝ **այր**-ը, ըստ Գ. Ջահուկյանի՝ տարահիմք, անգամ տարարմատ կազմություն է, ենթադրաբար այր >\*anrio-՝ \*ario- «տեր» իմաստով հիմքի ազդեցությանը ենթարկված<sup>20</sup>: Հայերենի բառարաններում տրված է իր երկու հիմնային իմաստներով՝ 1. *արու մարդ, չափահաս, արբունքի հասած, մահկանացու* և 2. *ամուսին*, բնիկ հնդեվրոպական բառ է, բայց, ինչպես Հր. Աճառյանը և Գ. Ջահուկյանն են նշում, նախաձևը դժվար վերականգնելի է:

Ստ. Մալխասյանցի բառարանում ունենք **երիկ** և **երիկմարդ** բառերը<sup>21</sup>, որոնք գրաբարյան **այր** սկզբնաձևի հնչյունափոխական տարբերակից է կազմվել՝ *այ>է+իկ→այրիկ>երիկ*:

Այս բառը սահմանափակ գործածություն ունի արդի հայերենում, նրան փոխարինում է հիմնականում «տղամարդ» բառը:

**Որդի** սեռ ցույց տվող բառի ծագումը Հր. Աճառյանը բխեցնում է հ.-ե \*portioyo նախաձևից, որի հիմքում \*per/\*por արմատն է «ձագ ծնել կամ բերել, երկնել» իմաստով<sup>22</sup>: Գ. Ջահուկյանը առանձնացնում է \*portuo-՝ \*per- հնդեվրոպական վերականգնված արմատները նույն իմաստային զարգացմամբ<sup>23</sup>: Ուխտանեսի գրքում հավասարապես գործածվում են և՛ **որդի**, և՛ **ուստր** բառերը:

**Ուստր** բառը ծագում է հ.-ե \*sukte' r նախաձևից՝ «որդի» իմաստով<sup>24</sup>: Աճառյանն այս արմատի ծագումը բխեցնում է կա՛մ \*seug- / \*suq- «կաթ ծծել» իմաստով

<sup>17</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 676:

<sup>18</sup> Տե՛ս Հրաչեայ Աճառեան, նշվ. աշխ., հ.3, էջ 246:

<sup>19</sup> Տե՛ս Հրաչեայ Աճառեան, նշվ. աշխ., հ. 2, էջ 588-590:

<sup>20</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, էջ 49:

<sup>21</sup> Տե՛ս Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Եր., 2009, էջ 216:

<sup>22</sup> Տե՛ս Հրաչեայ Աճառեան, նշվ. աշխ., հ. 3, էջ 576:

<sup>23</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 752 :

<sup>24</sup> Տե՛ս Հրաչեայ Աճառեան, նշվ. աշխ., հ. 3, էջ 611:

բառից, կա՛մ \*seu- / \*su- «ծնվել» նշանակող ձևից: Գ. Ջահուկյանը միանշանակ կապում է հ.-ե \*suk-te՛r «ծնել» արմատի հետ<sup>25</sup>:

**Ուստր** հնագույն կազմությունը գրեթե դուրս է մղվել գործածությունից. արդի բառարաններում տրված է *հին, բանաստեղծական* նշումով:

**Ղուստր**-ը հնդեվրոպական այն արմատների շարքն է համարում, որոնք նշանակում էին արյունակից, մոտ ազգականներ *-ter* ածանցով, հ.-ե \*dhukte՛r նախաձևից<sup>26</sup>: Գ. Ջահուկյանն ընդգծում է ավելի նախնական \*dhughbte՛r արմատը<sup>27</sup>: ՆՀԲ-ում բառը բացատրված է որպես «Էզ գալակ, աղջիկ գալակ»: Աճառյանը իր բառարանում բերում է նաև նախնական արմատի *աղիջ* ձևը և նշում է փաղաքշական ձևը՝ *աղջիկ*, որը հնում սակավ գործածություն է ունեցել: *Աղիջ* արմատի բովանդակությունը ընդգրկում է՝ *կույս, օրհորդ, մանկամարդ կին, նաժիշտ*, նաև *ղիցուհի*, ստուգաբանությունը հնդեվրոպական է, բայց գուցադրվում է տարբեր արմատների հետ, Հր. Աճառյանը այն կապում է \*parq<sup>w</sup>he նախաձևի հետ, իմաստային բացատրությունները ևս տարբեր են՝ «կույս», «պաշտպանել», «սնուցել» նշանակություններով: Գ. Ջահուկյանը սկզբնաձև համարում է \*pəliiā կամ \*pōu «փոքր» ձևերը՝ «մտրուկ, քուռակ, աղջիկ» իմաստներով: ՆՀԲ-ում վկայված է միայն ճ-ով տարբերակը՝ **աղիճ**, որպես հին բառ<sup>28</sup>:

Միջին հայերենում **աղջիկ** կազմությունը դառնում է համագործածական՝ սահմանափակելով **ղուստր** բառի կիրառությունը, որն այժմ բանաստեղծական, բարձր ոճի բառ է և սակավ գործածական է:

Բզական սեռ բնութագրող մյուս բառը, որ հանդիպում է ուսումնասիրվող գրքում, **օրհորդն** է: Կրկին բնիկ հնդեվրոպական բառ է: Ըստ Հր. Աճառյանի արմատական բառարանի՝ այս բառը ծագում է պահլավերեն \*afri<sup>n</sup>am «օրհնեմ, գովեմ» ձևից, որը կազմված է a նախամասնիկով fri- «սիրել, յարգել, գովաբանել» արմատից<sup>29</sup>: Ջահուկյանը նշում է, որ բաղադրված է *աւր* հնդեվրոպական (\*rou- «փոքր գավակ, ձագ» արմատից) և *-որդ* (=որդի) բաղադրիչներով: Այս բառը գործածվում է հարգական իմաստ արտահայտելու համար: Ուխտանեսի գրքում բառի գործածության մի քանի դեպք է հանդիպում:

Այս կազմությունն իր հիմնական իմաստը պահպանել է հայերենի զարգացման ողջ ընթացքում, ավելին՝ իմաստն ընդլայնվել է, այժմ **օրհորդ**-ը նաև հարգական դիմելաձև է:

<sup>25</sup> Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 606:

<sup>26</sup> Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 686:

<sup>27</sup> Հմմտ. Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 204:

<sup>28</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 40:

<sup>29</sup> Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., հ.4, էջ 620:

**Եղբայր** բառը նույնպես ծագումով բնիկ հնդեվրոպական է՝ \*bhrater «եղբայր» արմատից<sup>30</sup>: ՆՀԲ-ում ունի «հարագատ արու, համահայր կամ համամայր զուակ» իմաստները<sup>31</sup>: Բառն ունի նաև կրոնական իմաստ՝ վանքի միաբանության անդամներից յուրաքանչյուրը մյուսների նկատմամբ: Երբեմն օգտագործվում է որպես հարգական դիմելաձև անձանոթ մարդկանց դիմելու համար: Ուխտանեսի պատմության մեջ հանդիպում ենք **եղբայրասեր** բնիկ հնդեվրոպական բաղադրությանը, երկրորդ արմատը նույնպես բնիկ հնդեվրոպական է՝ \*k'er- «աճել, աճեցնել, սնել» արմատից<sup>32</sup>: Բառը համագործածական է հայերենի զարգացման բոլոր շրջաններում՝ թե՛ գրական, թե՛ խոսակցական, թե՛ բարբառային:

**Եղբորը** առնչակից մյուս համագործածական բառը **քույրն** է, որը ծագել է բնիկ հնդեվրոպական \*suésör- «քույր» արմատից. հմմտ. հ. հնդկ. svásar-, ավ. xvanhar-, լատ. soror «քույր» արմատներից<sup>33</sup>: Բուն իմաստով՝ «դուստր ծնողաց և քույր կոչեցեալ եղբարց»<sup>34</sup>: Մակայն ունի նաև այլ նշանակություն՝ 1. բժշկական անձնակազմին պատկանող կին (աղջիկ)՝ բժշկական հիմնարկներում: 2. Կուսանանց վանքերում՝ ամեն մի կույս մյուս կույսերի վերաբերմամբ: Ուխտանեսի գրքում բառը հաճախադեպ է ընդհանուր՝ *կին* իմաստով: Մինչ այժմ բառը մնում է համագործածական:

«Պատմության» մեջ ունենք նաև **հաւրաքոյր** կազմությունը, և **քեռորդի բառը**, վերջինս կազմված է *քեռ* (քույր բառի սեռական)+*որդի* արմատներից՝ բնիկ հնդեվրոպական ծագման:

Ընտանեկան հարաբերություն ցույց տվող մյուս բառը **ծնող**-ն է, որը ծագում է հնդեվրոպական \*gen- «ծնել» արմատից<sup>35</sup> և *-ող* դերբայական ածանցից, որի առաջ տարբերակը ծագում է հ. -ե. -tel- ածանցի թեմատիկ -tlo- ձևից՝ նախորդող *-a-*ով կամ *-ով*. հմմտ. \*-genatlo-> ծնաղ -ող տարբերակը կամ *-աղ-*ի վաղ մենաբարբառացած ձևն է<sup>36</sup>:

**Ազգ** տարածված գոյականը մեր ուսումնասիրած գրքում *տոհմ, գերդաստան, զարմ* բառերի հոմանիշն է, իմաստային դաշտն ավելի լայն է, գրաբարում այն նշանակում էր ընդհանրապես *սեռ, տեսակ, կարգ, դաս*, ապա նաև՝ *տուն, ժողովուրդ, ամբոխ, ազգատոհմ*<sup>37</sup>:

**Ազգ** բառից կազմված են հետևյալ բառերը՝ **ազգական, ազգակից, ազգատոհմ,**

<sup>30</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 213:

<sup>31</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 652:

<sup>32</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 676:

<sup>33</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 785:

<sup>34</sup> ՆՀԲ, հ. 1, էջ 1011:

<sup>35</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 785:

<sup>36</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 801:

<sup>37</sup> Տե՛ս ՆՀԲ, հ. 1, էջ 6:

**այլազգ:** Այլազգ բառում այլ-ը բնիկ հնդեվրոպական է՝ \*alio-՝ \*al-«այլ, ուրիշ» արմատից<sup>38</sup>: Ազգակից բառի կից արմատը ևս բնիկ է՝ geit-so- կամ geit-sk-<sup>39</sup>:

Ազգակացական կապ ցույց տվող մեր մյուս միավորը **թռռն** է: Այս բառը ծագումով բնիկ է՝ \*tor արմատից<sup>40</sup>: Ջահուկյանը նույնպես նշում է, որ կազմված է \*tor-no-՝ \*ter- «թույլ, քնքուշ» արմատից<sup>41</sup>: ՆՀԲ-ում «զուսակ զավակի, զարմ, սերունդ» իմաստային բացատրություններն ունի<sup>42</sup>: Ուխտանեսի գրքում բառը գործածվել է մի քանի անգամ՝ արդեն նշված իմաստներով: Հայերենի զարգացման ընթացքում այս բառը իմաստային փոփոխություններ չի կրել:

**Առաջնորդ** բառը կազմված է առ «մոտ, դեպի, կողքին, համար, փոխարեն, (հունարեն՝ προ΄σ)» բնիկ հնդեվրոպական նախդիրից, աջ՝ բնիկ հնդեվրոպական՝ \*sadhio-՝ \*se(i)dh- «ուղիղ դեպի նպատակը գնալ, նպատակաուղղվել, դիմել» արմատից և -որդ՝ հավանաբար բնիկ հնդեվրոպական վերջածանցից: ՆՀԲ-ում առաջին իմաստով նշանակում է «առաջին, առաջի, պիրինճի»<sup>43</sup>: Բառը ՆՀԲ-ում և Մալխասյանցի բառարանում նաև հանդիպում է «կնքահայր» իմաստով, որը այժմ կորուսյալ նշանակություն է: Առաջնորդը նաև հոգևոր ծառայություններ իրականացնող մարդն է: Այժմ նկատվում է բառիմաստի նեղացում: Առավել շատ գործածվում է *դեկավար, պարագլուխ* իմաստներով:

**Գլխավոր** բառը կազմված է բնիկ հնդեվրոպական \*ghölu-kho- «գլուխ» արմատից. հմմտ. լիտվ. galvá, հ. u. glava «գլուխ»<sup>44</sup> և -ավոր վերջածանցից, որը ծագում է հ.-ե. \*-bher- «կրել, բերել» ձայնդարձային \*-bhor- ձևից<sup>45</sup>:

**Արարիչ** բառը կազմված է արար արմատից և -իչ ածանցից: Բնիկ հնդեվրոպական՝ \*arətrom-՝ \*arə-«վարել» արմատից՝ \*-trom գործիքանիշ ածանցով<sup>46</sup>: Շատ հաճախ այս բառով նկատի են ունենում Աստծուն՝ իբրև արարիչ ամեն ինչի:

**Սուրբ** բառը բնիկ հնդեվրոպական \*k'ubro արմատից է ծագում: Սուրբ արմատի բովանդակությունն ընդգրկուն է: ՆՀԲ-ում այս բառը նշանակում է «Մաքուր, անարատ, յստակ և նուիրական, ածային, սրբազան, ածարեալ, վեհ, վսեմ, արգոյ, ընտրեալ, ողջախոհ, պարկեշտ, նազելի, արդար, անմեղ, երանեալ»<sup>47</sup>: Ստ. Մալխասյանցի բառարանում նշվում է *անձ*, որ ճանաչված է եկեղեցու կողմից: Իսկ «Արդի հայերենի բացատրական բառարանում» առաջնային իմաստով նշանակում է «Աստվածային շնորհով՝ հատկությամբ օժտված, աստվածային Ս. Հոգի»<sup>48</sup>:

<sup>38</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 48:

<sup>39</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 407:

<sup>40</sup> Տե՛ս **Հր. Աճառեան**, նշվ. աշխ., հ.2, էջ 198:

<sup>41</sup> Հմմտ. **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 272:

<sup>42</sup> Տե՛ս ՆՀԲ, հ.1, էջ 819:

<sup>43</sup> Նույն տեղում, հ.1, էջ 290:

<sup>44</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 163:

<sup>45</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 802:

<sup>46</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 85:

<sup>47</sup> ՆՀԲ, հ.2, էջ 733:

<sup>48</sup> **Էդ. Աղայան**, նշվ. աշխ., հ.2, էջ 1348:

Բառի իմաստային շարքում մեծ դեր ունի կրոնական իմաստը: Այն պահպանել է բոլոր իմաստները և արդի արևելահայերենում գործածվում է ընդլայնված նշանակությամբ: Գրքում հանդիպում ենք ինչպես գոյականական նշանակությամբ, այնպես էլ ածականական: Հաճախակի է գործածությունը հատուկ անունների՝ սրբացված անձանց հետ: «Արդի հայերենի բացատրական բառարանում» տրված է հենց այս իմաստը՝ «Իր գործունեությամբ՝ կրոնի համար նահատակվելով՝ հերոսական գործերով և սուրբ հայրերի շարքը դասված մարդ»<sup>49</sup>:

**Աղբատ** բառը ծագում է բնիկ հնդեվրոպական \*(o)lika- նախաձևից \*leig/k- «պակասավոր, խեղճ» արմատից<sup>50</sup>: Ջահուկյանի համոզմամբ՝ ավելի հավանական է \*ln- «քաղցած, վատ» արմատից, որտեղից՝ աղց «կարիք»: նախ՝ հնդեվրոպական \*leig/k-ը ամենայն հավանականությամբ կապված է \*el-k-, \*el-g- (>հայ. աղկաղկ) արմատի հետ<sup>51</sup>: Բառը գործածվում է ինչպես ածական, այնպես էլ գոյական: ՆՀԲ-ում ունի հետևյալ բացատրությունը՝ «Չքաւոր յաղիսից կամ յաղցից, անինչ, տնանկ, ցականեալ, կարօտեալ, տառապեալ, մուրող, ախտոտ, մուրացկան»<sup>52</sup>: Համագործածական բառ է: Իմաստի փոփոխության գրեթե չի ենթարկվել:

**Ձարմ** տարածված գոյականը մեր ուսումնասիրած գրքում *տոհմ, ազգ* բառերի հոմանիշն է: Կազմված է գ մասնիկով **արմ** արմատից<sup>53</sup>, որը ծագումով բնիկ հնդեվրոպական է: Գ. Ջահուկյանը նույնպես արմատ է համարում արմը՝ \*or-mo-, \*ormen-, \*ormenos՝ \*er- «շարժել, հուզել, բարձրացնել» արմատից<sup>54</sup>: ՆՀԲ-ում՝ «Ի միոյ արմատոյ սերունդ, շառաւիղ միոյ ազգատոհմի, առանձին ազգ տան միոյ, ցեղ. տոհմ, ծնունդք, յաջորդութիւն ազգի, գաւակ, մացորդ»<sup>55</sup>: Միջին դարերում բառը մեծ գործածություն է ունեցել, իսկ այժմ գործածությունից դուրս է մղվել, հանդիպում ենք գրքային բառապաշարում:

*Մարդ* հասկացություն են վերաբերում նաև հետևյալ միավորները՝ **արբենակից, բազկակից, գաւառակից, գործակից, լծակից, չարչարակից**, որոնք ունեն ընդհանուր **կից** արմատը՝ հ. է. \*geit-so- կամ \*geit-sk: Անդրադառնանք այս բառերի մյուս արմատների ստուգաբանությանը. **արբ**՝ \*srbh-՝ \*srebh-, \*srobh- «ծծել, կլանել»: Առավել հետաքրքիր և կարևոր են **չար** հիմնաբառի կառուցվածքը և բացատրությունը. **չար**-ը հնագույն կազմություն է. Հր. Աճառյանը բերում է մի շարք ստուգաբանական վարկածներ, որոնցից համոզիչ և փաստարկված է բառի նախածանցավոր տարբերակը. **չ**-ն ժխտական է, որն ավելացել է «ար» *բարի* նշանակության արմատին, վերջինս առկա է նաև հունարենում «լավագույն» իմաստով: Սա Կ. Պոկոռնու վերականգնումն է, ընդ որում՝ **ար** արմատը համադրվում

<sup>49</sup> Նույն տեղում:

<sup>50</sup> Տե՛ս **Հր., Աճառեան**, նշվ. աշխ., հ. 1, էջ 137:

<sup>51</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 40:

<sup>52</sup> ՆՀԲ, հ. 1, էջ 45:

<sup>53</sup> Տե՛ս **Հր. Աճառեան**, նշվ. աշխ., հ. 4, էջ 620:

<sup>54</sup> Տե՛ս **Գ. Ջահուկյան**, նշվ. աշխ., էջ 93:

<sup>55</sup> ՆՀԲ, հ. 1, էջ 720:



է հ.ե. \*ar -յար/յառնել, ար/առնել արմատների հետ: Մենք լեզվաբանորեն և պատմականորեն առավել համոզիչ ենք համարում այս ստուգաբանությունը՝ ելնելով **ար** արմատի տարածված և ինչ-որ առումով սրբազան լինելու իմաստից. հայկական դիցարանը և քանահյուսական աղբյուրները ապացուցում են **ար** արմատի տարածվածությունը՝ իբրև բարու և արարման հիմնական արտահայտիչ, որն արտացոլված է նաև մեր **արմեն** > **ար+** **մեն** ժողովրդանվան մեջ: **Չար**-ի հականիշ **բարի** արմատում **ար**-ը ևս վկայված է:

Հր. Աճառյանը բերում է չար բառի նաև պահլավական գուգաձևությունը, որտեղ չ-ն արդեն արմատական բաղադրիչ է čaryā «գէշ, վատ» իմաստով<sup>56</sup>:

**Լոյծ/լուծ** արմատը նույնպես բնիկ է \*iugo, \*ieu- «կապել» արմատից է: **Գաւառ** բառը բնիկ ծագում ունի\*ghāu «տարածք» արմատից<sup>57</sup>, իսկ **գործ**-ը \*uorgo «գործել» արմատից<sup>58</sup>:

Ուխտանեսի գրքում մարդու զբաղմունք, մասնագիտություն ցույց տվող բնիկ հնդեվրոպական բառերն են **որսորդ**՝ բնիկ հնդեվրոպական \*porǵ os «ձկան որս» արմատից և **-որդ** ածանցից, **երգիչ**՝ բնիկ հնդեվրոպական \*erkuo՝ \*erku- «ճառագայթել, շողալ, հնչել, երգել, գովերգել» արմատից և **-իչ** ածանցից:

Մեր բերած ստուգաբանական և իմաստաբանական հետազոտությունն ապացուցում է, որ *մարդկություն/մարդ* հասկացույթ նշանակող բոլոր հիմնային միավորները հայերենում գերազանցապես բնիկ են, համագործածական՝ գրական հայերենի բոլոր փուլերում, բարբառներում և խոսվածքներում, գալիս են նախալեզվից և ունեն հազարամյակների պատմություն: Հին հայերն ունեցել են բարձր զարգացած հասարակական կյանք՝ իր հստակ աստիճանակարգությամբ, բազմազան հարաբերություններով, ազգակցական, բարեկամական և մասնագիտական տարբեր ենթահամակարգերով, որոնց անվանումները հնդեվրոպական են, փոխառություններն այստեղ սակավաթիվ են, դիպվածային:

*Մարդկություն/մարդ* հասկացույթի բառերը հայերենի պատմության ընթացքում գրեթե փոփոխություններ չեն կրել, դրանք կայուն միավորներ են. վկայված փոփոխությունները վերաբերում են որոշ բառերի հիմնական բառաֆոնդից դուրս մոլվելուն, այսինքն՝ հնաբանություններ դառնալուն, այդպիսիք են՝ *գարմ, ուստր, դուստր, այր*: Միաժամանակ ունենք նաև իմաստի ընդլայնման դեպքեր, երբ *մարդ* հասկացույթի շատ բառեր, իրենց հիմնական նշանակությանը զուգահեռ, ձեռք են բերել հարգական կամ մտերմական դիմելաձևերի կիրառություն, ինչպես օրինակ՝ *ընկեր, հայրիկ, մայրիկ, քույր, եղբայր, որդի, աղջիկ, օրիորդ, տիկին*: Որոշ միավորներ ձեռք են բերել ակնհայտ եզրույթային իմաստ, ինչպես՝ *առաջնորդ, գործակից, լծակից, ազգասոռիմ*՝ հարստացնելով արդի հայերենի բառապաշարը:

<sup>56</sup> Տե՛ս **Հր. Աճառյան**, նշվ. աշխ., հ. 3, էջ 624:

<sup>57</sup> Տե՛ս **Գ. Զահուկյան**, նշվ. աշխ., էջ 153:

<sup>58</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 170:


**НАРИНЕ ДИЛБАРЯН – Исконные единицы концепта «человечество» в книге Епископа Ухтанеса «История Армении».** - В книге епископа Ухтанеса «История Армении» засвидетельствованы почти все ключевые слова древнеармянского языка концепта *человечество*, этимологические и семантические исследования которых доказывают, что все первичные единицы, обозначающие концепт *человечество*, были индоевропейского происхождения. Их диахронический анализ доказывает, что они используются на всех стадиях литературного армянского языка, а также в диалектах. Они унаследованы из праязыка и имеют тысячелетнюю историю. Древние армяне, выделившиеся из индоевропейского единства, уже имели высокоразвитую общественную жизнь с ее четкой иерархией, разнообразными взаимоотношениями, родственными, дружескими и профессиональными подсистемами, названия которых индоевропейские, заимствования здесь являются немногочисленными и окказиональными. Слова концепта *человечество* претерпели мало изменений, они представляют собой устойчивые единицы, некоторые из них стали архаизмами. В то же время мы имеем и случаи расширения значения, многие слова данного концепта стали формами обращения. Некоторые единицы приобрели очевидное терминологическое значение, обогатив словарный запас современного армянского языка.

**Ключевые слова:** *епископ Ухтанес, «История Армении», древнеармянский язык, концепт человечество, исконные слова, заимствования, диахронический анализ, архаизмы, термины*

**NARINE DILBARYAN – The Native Units of the Concept of “Humanity” in the Book of Bishop Ukhtanes “History of Armenia”.** – In the book of Bishop Ukhtanes “History of Armenia” almost all the key words of the ancient Armenian language of the concept of humanity are attested, etymological and semantic studies of which prove that all the primary units denoting the concept of humanity were of Indo-European origin. Their diachronic analysis proves that they are used at all stages of the literary Armenian language, as well as in dialects. They are inherited from the proto-language and have a thousand-year history. The Ancient Armenians, who emerged from the Indo-European unity, already had a highly developed social life with its clear hierarchy, various relationships, family, friendly and professional subsystems, the names of which are Indo-European, borrowings here are few and occasional. The words of the concept of humanity have undergone few changes, they represent stable units, some of them have become archaisms. At the same time, we also have cases of expansion of meaning; many words of a given concept have become forms of address. Some units acquired obvious terminological meaning, enriching the vocabulary of the Modern Armenian language.

**Key words:** *Bishop Ukhtanes, “History of Armenia”, Ancient Armenian language, concept of humanity, native words, borrowings, diachronic analysis, archaisms, terms*

## ԾԻՍԱԿԱՆ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԻՆՀԱՅԵՐԵՆՑԱՆ ԱՆՎԱՆՈՒՄՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ

ՄԻՐԱՐՓԻ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ \*   
*Երևանի պետական համալսարան*

Հայ եկեղեցական մշակույթը մեծ նշանակություն ունի հայ ժողովրդի հոգևոր կյանքի գրեթե բոլոր բնագավառների համար և շոշափում է հասարակական գիտակցության բոլոր ձևերը՝ բարոյագիտություն, փիլիսոփայություն, գրականություն, պատմագրություն և այլն: Հին և Նոր Կտակարանների թարգմանությունները, որոնք տվեցին այդ բազմապիսի բնագավառների հայալեզու եզրույթներն ու հայերեն ճկուն արտահայտչաձևերը, իրենց հերթին նպաստեցին ինքնուրույն և թարգմանական գրականության հետագա զարգացմանը:

Սույն հոդվածում անդրադարձ է արվում ծիսական առարկաների հինհայերենյան անվանումներին, դրանց կադապարների զարգացմանը հայերենում: Ծիսական իմաստ արտահայտող բառերի քննությունը հետաքրքիր է ոչ միայն լեզվաբանական տեսակետից, այլև պատմական, ազգագրական և մշակութային առումներով: Քննության առնված ծիսական բոլոր եզրույթները կազմությամբ բաղադրյալ բառեր են՝ բարդ և ածանցավոր:

Հայտնի է, որ հայերենն աչքի է ընկնում բառակազմական ճկունությամբ և լայն հնարավորություններով, իսկ ծիսական բովանդակության բառերը հիմնականում բառակազմական տեսանկյունից արդյունավետ են. ունեն կապակցելիական մեծ հնարավորություններ: Ծիսական առարկաները եղել են մարդկային մշակույթի և հոգևոր կյանքի անբաժանելի մասը հազարամյակների ընթացքում: Դրանք ծառայում են ոչ միայն որպես ծիսական արարողությունների գործիքներ, այլև խորհրդանիշներ, որոնք կրում են խորը իմաստներ և կապում անհատներին իրենց համոզմունքներին ու ավանդույթներին: Շատերի համար ծիսական առարկաները ներկայացնում են անձնական կապեր հավատքի և ինքնության հետ: Երանք ծառայում են իբրև հիշեցումներ մարդու արմատների և արժեքների մասին՝ կարիքի մեջ տրամադրելով

\* Միրարփի Կարապետյան – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ միջմշակութային հաղորդակցության անգլերենի ամբիոնի դոցենտ

Сирарпи Карапетян – кандидат филологических наук, доцент кафедры межкультурной коммуникации английского языка ЕГУ

Sirarpi Karapetyan – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of English for Cross-Cultural Communication

Էլ. փոստ՝ [sirapikarapetyan@ysu.am](mailto:sirapikarapetyan@ysu.am). ORCID: <https://orcid.org/0000-0002-5565-7339>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 25.05.2024

Գրախոսվել է՝ 11.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

մխիթարություն և առաջնորդություն: Դրանք կարող են փոխանցվել նաև սերնդեսերունդ՝ պահպանելով և ամրապնդելով ընտանեկան ավանդույթներն ու հավատալիքները:

**Բանալի բառեր** - եզրույթ, ծիսական իմաստ, քրիստոնեություն, գոյական, ածական, բարդ, ածանցավոր, իմաստային, բառային կազմ, հնչյունափոխություն

Յուրաքանչյուր բնագավառի եզրահամակարգի կերտումը և գործածումը հայերենում դեռևս հինգերորդ դարից զարգացել են իբրև թարգմանական արվեստ, իսկ հայերեն գիտաբառերն ստեղծվել են արդեն եղած բառերի իմաստի մասնավորմամբ կամ բառակազմական տարբեր եղանակների գործածությամբ, երբ լեզուն իր ունեցած նյութով և բառակազմական եղանակներով կազմում է զանազան նոր բառեր: Հայ ժողովրդի քաղաքական ու մշակութային կյանքի պատմությունը մեծապես կապված է քրիստոնեության հետ, որի մուտքը զարգացման լայն հնարավորություններ բացեց մեր լեզվի, տեսական մտքի և ընդհանրապես հոգևոր մշակույթի առջև: 301 թ. պետականորեն հաստատված քրիստոնեության շնորհիվ հարստացավ կրոնական բառերի իմաստային դաշտը: Բազում դարեր հայ ժողովուրդը չթուլացող ավյունով կերտում ու պահում էր իր հոգևոր մշակույթը, որն իր արտացոլումը գտավ նաև հայերենի բառային կազմի մեջ: Հայերենի տարբեր փուլերում ստեղծվեցին կրոնական բովանդակություն ունեցող բազմաթիվ բառեր ու բառակապակցություններ, որոնք հատկանշվում են իմաստային և գործառական, ստուգաբանական, բառակազմական առանձնահատկություններով:

Ըստ Ն. Աճառյանի՝ կրոնական բառերի վերաբերմամբ շատ աղքատ են նախահայերը. նրանց բոլոր աստվածները իրանական կամ ասորական ծագում ունեն, նույնիսկ «Աստուած» բառը փոյուզիական ծագում ունի: Պակասում են նույնպես կրոնական դասակարգ, ծեսեր ու արարողություններ նշանակող բառերը<sup>1</sup>:

Անդրադառնալով հին հայերենի կրոնական բառապաշարին՝ Գ. Ջահուկյանը նույնպես նշում է, որ նախաքրիստոնեական հայ կրոնի հետ կապված շատ բառեր *իրանական* ծագում ունեն: Հայ հեթանոսական դիցարանը ձևավորվել է *իրանական* ազդեցությամբ և հելլենիստական շրջանում կրել հունական ազդեցությունը<sup>2</sup>: Սակայն նախահայերենի համեմատությամբ հայերենի բարբառները բավականին հարուստ են կրոնական իմաստային խմբին պատկանող բառաշերտով<sup>3</sup>:

Ծիսագիտությունը եկեղեցական արարողություններ կատարելու սահմանված կանոնների գիտությունն է, ծիսական առարկաները պաշտամունքի ներ-

<sup>1</sup> Տե՛ս Ն. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940, էջ 123:

<sup>2</sup> Տե՛ս Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 274:

<sup>3</sup> Տե՛ս Ն. Մեսրոպյան, Կրոնականեկեղեցական բառապաշարը հայերենի բարբառներում, Եր., 2016, էջ 262:

դաշնակության բաղկացուցիչ մասն են. դրանք եկեղեցական արարողության արտաքին կողմն են: Ըստ Ղևոնդ արքեպիսկոպոս Չեպեյեանի՝ «Հայ Եկեղեցույ ծեսը կարգադրուած է մեր սրբազան Հայրապետներուն կողմէ, Աւետարանի ոգիին համաձայն. Հայ Եկեղեցույ նախնական ծիսական ձեւը հետզհետէ զարգացած, ճոխացած, հարստացած է եւ գնահատուած է օտարներու կողմէ»<sup>4</sup>: Եկեղեցական-հոգևոր կյանքին վերաբերող հարյուրավոր բառեր ու եզրույթներ արտահայտող իմաստային դաշտը խիստ ծավալուն է և բազմաճյուղ. այն կարելի է ուսումնասիրել տարբեր տեսանկյուններից և ընդգրկման տարբեր տարողություններով, սակայն մենք սահմանափակվելու ենք միայն եկեղեցական բառապաշարում յուրահատուկ ենթադաշտ *հանդիսացող ծիսական* առարկաների, ծեսի իրականացմանն անհրաժեշտ իրերի հինհայերենյան անվանումների բառակազմական քննությամբ, դրանց կառուցվածքային և գործառական առանձնահատկությունների վերհանմամբ: Մեր ընտրանքում ծիսական բոլոր բաղադրյալ բառերի ընդգրկման հիմքը գրաբարի բառարանների կրոնական բառամթերքն է<sup>5</sup>:

Ծիսական բազմաթիվ առարկաների նշանակությունների բացատրության համար ուղեցույց է եղել նաև Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեանի «Ծիսական բառարանը»<sup>6</sup>: Սույն հետազոտության համար նյութ են ծառայել բացատրական և մասնագիտական հայտնի այլ բառարաններ, կրոնագիտական, եկեղեցական եզրահամակարգին նվիրված ուսումնասիրություններ, մատենագրական տարբեր աղբյուրներ<sup>7</sup>:

Նպատակահարմար ենք գտել ծիսական առարկաներ արտահայտող առանձին բառեր մեկնաբանել իմաստային տեսակետից, ինչը հիմք է դարձել մի կողմից՝ եկեղեցական այդ եզրույթների առանձնացման, մյուս կողմից՝ նրանց իբրև այդպիսին, և՛ համաժամանակյա, և՛ տարժամանակյա տեսանկյուններից գնահատելու համար՝ այդպիսի արժևորելով գրաբարի ունեցած հսկայական

<sup>4</sup> Ղևոնդ արքեպ. Չեպեյեան, Ծիսական գիտելիքներ, Անթիլիաս-Լիբանան, 1986, էջ 18:

<sup>5</sup> Տե՛ս Գ. Աւետիքեան, Հ. Միւրմելեան, Մ. Աւգերեան, Նոր հայկազեան բառարան (ՆՀԲ), հ. 1, Եր., 1979, հ. 2, Եր., 1981: Ռ. Ղազարեան, Գրաբարի բառարան (ԳԲ), Եր., 2000: Առձեռն բառարան հայկազնեան լեզուի(ԱԲ), Վենետիկ, 1865: Ռ. Ղազարեան, Հ. Աւետիսեան, Նորայայտ բառեր գրաբարում, Եր., 2007: Ռ. Ղազարեան, Գրաբարի դարձուածաբանական բառարան, Եր., 2012: Ռ. Ղազարեան, Գրաբարի հոմանիշների բառարան, Եր., 2006: Լ. Հովհաննիսյան, Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր, Եր., 2010: Լ. Խաչատրյան, Գրաբարի բացատրական բառարան. Ձևաբանորեն տարաբժեք բառեր, Եր., 2003:

<sup>6</sup> Տե՛ս Մաղաքիա արքեպ. Օրմանեան, Ծիսական բառարան (ՕԲ), Անթիլիաս-Լիբանան, 1979:

<sup>7</sup> Տե՛ս Հ. Աճառեան, Հայերեն արմատական բառարան (ՀԱԲ), Եր., 1926: Մտ. Մայիստեանց, Հայերեն բացատրական բառարան (ՀԲԲ), Եր., 1944: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010: Հ. Բարսեղյան, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական- եզրաբանական բառարան, Եր., 1973: Համաբարբառ գրաբար Աստուածաշնչի (ՀԳԱ), Եր., 2012: Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Նախագրային ժամանակաշրջան (ՀԼՊ), Եր., 1987: Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, մաս 1, Եր., 1940: Ղևոնդ արքեպ. Չեպեյեան, նշվ. աշխ.: Հ. Մեսրոպյան, Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի երկերի բառարան, Մոնրեալ, 2000: Մ. Պապիկյան, Հայերենի կրոնաեկեղեցական բառապաշարը և նրա պատմական զարգացումը, Եր., 2011: Դավիթ Գյուրջինյան, Կրոնաեկեղեցական լեզվական միավորների քննություն, Ս. Էջմիածին, 2002:

դերն արդի արևելահայերենի բառապաշարի հարստացման և եզրույթային համակարգի համալրման հարցում:

Ներկայացնենք, թե բառակազմական և իմաստային ինչպիսի առանձնահատկություններ ունեն ծիսական առարկաների հինհայերենյան անվանումները: Ծիսական արմատական բառերն ըստ ծագման և իմաստային առանձնահատկությունների ուսումնասիրել ենք մեր նախորդ հոդվածում<sup>8</sup> առանձնացնելով իմաստային հետևյալ խմբերը. ա) կահկարասի և հարակից զանազան պարագաներ նշանակող բառեր՝ *այթոռ*<sup>9</sup>, *աշտանակ*<sup>10</sup>, *աւազան*, *կանթէղ*, *կերոն*, *մոմ*, *նշխար*, *շուշիայ*, *ջահ*, *սեղան* և այլն, բ) անոթներ, սպասքներ նշանակող բառեր՝ *բաժակ*, *զանձանակ*, *մաղզմայ*, *պնակ*, *սկիհ*, *սպաս* և այլն, գ) զարդեր, խաչեր նշանակող բառեր՝ *խաչ*, *պնակէ*, *զաւազան*, դ) անուշահոտություն արտահայտող բառեր՝ *խւղ*<sup>11</sup>, *խունկ*, *հալուէ*, *միւռոն*:

Ինչպես նշեցինք, ծիսական բովանդակության բառերը հիմնականում բառակազմական տեսանկյունից արդյունավետ են. օրինակ՝ «խաչ» բառով գրաբարում բաղադրվել են *խաչաձէ*, *խաչամահ*, *խաչամասն*, *խաչանկար* և բազմաթիվ այլ բառեր, «ջահ» բառով՝ *ջահաբարձ*, *ջահաբորբորք*, *ջահագարդ*, *ջահագզեաց* և այլն: Ծիսական առարկաներ նշանակող բառերի մեջ կան նաև բառակազմորեն մեկուսի կամ «ամուլ»<sup>12</sup> բառեր, որոնք գրեթե չունեն բառակազմական արժեք, ինչպես՝ *գորկուրայ*<sup>13</sup>, *շուշիայ*<sup>14</sup>, *կերոն*, *մաղզմայ*<sup>15</sup> և այլն:

<sup>8</sup> Տե՛ս **Ս. Կարապետեան**, Ծիսական առարկաների հինհայերենյան անուանումները՝ որպէս հայերէնի բառային կազմի հարստացման աղբիւր, «Էջմիածին» 2023, հատոր Ե, էջ 133-145:

<sup>9</sup> «...սովորական խօսքի մէջ այթոռ կանուանենք նոյն ինքն իշխանութիւնը, գոր օրինակ Կաթողիկոսական Աթոռ»: Իշխանական այթոռն ի հնումն աւելի պարզ ձեւ ուներ, բարձր նստարան մըն էր, որ երկու կողմերը թեւերը դնելու տեղեր ուներ, եւ ետեւ չունէր, եւ պարզ բազկայթոռ էր: Յետոյ սկսան գործածուիլ այթոռներ, որ թեւերէ զատ ետեւնին ալ բարձրացած կոթնելու տեղ ունէին եւ եղան *թիկնայթոռ*» (ՕԲ, էջ 73):

<sup>10</sup> Մ. Օրմանյանը նշում է աշտանակի մի քանի տեսակներ՝ «*աշտանակ բազմաստեղնեան*՝ մէկ բունի վրայ 2, 3, 4 կամ աւելի թեւեր ունեցող, *աշտանակ բեմի*, *աշտանակ գրակայի*» (ՕԲ, էջ 77-78):

<sup>11</sup> Մ. Օրմանյանը նշում է, որ յուղերից գլխավորը սրբալույս մյուռոնն է, որ մեր եկեղեցու մեջ միակն է: Երբեմն մեր գրքերի մեջ հիշվում են *խւղ երախայից*՝ մկրտությունից առաջ երեխաներին օծելու, և *խւղ հիւանդաց*՝ ծանր հիվանդներին օծելու համար: Մեր մեջ կա նաև *խւղ ոտնուայի*՝ պարզ կարագ, որով ոտնվան կատարողը «լուացեալներուն վրայ խաչաձէ նշան մը կ'ընէ լուալէն ետքը» (ՕԲ, էջ 126):

<sup>12</sup> Տե՛ս **Ղ. Գյուրջիւնյան**, Հայերենի բառակազմորեն «ամուլ» բուսանունների մասին, «Բանբեր Երևանի համալսարանի», Եր., 2000, էջ 105-109:

<sup>13</sup> Քառակուսի ձերմակ կտաւ, որ լատին եկեղեցու մեջ պատարագիչը փոում է սեղանի վրայ և նրա վրա էլ դնում է սկիհը և սրբագործեալ նշխարը՝ առանց մաղզմայի, լատ. corporalis. բուն, մարմնական (տե՛ս **Ս. Մայխասեանց**, ՀԲԲ, հ. 1, էջ 466):

<sup>14</sup> Սկիհը մաքրելու կամ ծածկելու կտաւ: Արձանագրված են բարբառային հետևյալ կազմությունները՝ *շուշիացու*՝ սկիհի համար շուշիա պատրաստելու մետաքսյա նուրբ կտոր, *շուշիայել*՝ մասունքը կամ Ավետարանը շուշիայի մեջ փաթաթել, *շուշիայական*՝ շուշիային հատուկ (տե՛ս **Ս. Մայխասեանց**, ՀԲԲ, հ. 3, էջ 536): Ասոր. suseppa «զլիսի ծածկոց, ծածկոյթ, քոլ» (**Հ. Աճառեան**, ՀԱԲ, էջ 537):

<sup>15</sup> Փոքրիկ սկավառակ, որի վրա դնում են հաղորդության նշխարը և որով ծածկում են սկիհը: Սկիհն ու մաղզման արծաթից են շինում (տե՛ս **Ս. Մայխասեանց**, ՀԲԲ, հ. 3, էջ 244):

Այսպես, դիտարկենք բառաբարդամբ կազմված ծիսական եզրույթները: Ինչպես գիտենք, լեզվում առկա բառապաշարային նյութի հիման վրա նոր բառեր կազմելու հնարավորություն են տալիս բարդությունները: Բառաբարդամբ հայերենի բառակազմական համակարգի ձևավորման գործուն և արդյունավետ եղանակներից մեկն է: Ծիսական բարդ եզրույթների ստեղծման անհրաժեշտությունը երկու կամ ավելի հասկացությունները կամ գաղափարները մեկ բառով արտահայտելու համար է: Այս եզրույթների քննությունը մենք կատարել ենք ըստ բառերի բաղադրիչների քանակի և դրանց միավորման եղանակի, ձևաբանական կառուցվածքի, խոսքիմասային արտահայտության, եզրութային և ոչ եզրութային բովանդակության:

Ծիսական առարկաների անուն-եզրույթները և ծիսական բովանդակության բառերը նպատակահարմար ենք գտել բաժանել *հողակապով և անհողակապ* տեսակների, որոնցից քանակապես ակնհայտորեն գերակշռում է առաջինը՝ *աւանդատուն*<sup>16</sup>, *խաչափայտ*<sup>17</sup>, *խաչափայլ*, *մոմակալ*, *ջահապայծառ* և այլն:

Անհողակապ բարդություններ են *աթորնկալ*, *ամպհովանի*, *աւազանօրհներք*, *բուրուառ*<sup>18</sup>, *գանձտետր*<sup>19</sup>, *թիկնաթոռ*, *իւղընձիւղ*, *խաչաշտանակ*, *խաչարմատ*, *խաչաւարտ*, *խաչգիւտ*, *խաչընդուս*, *խաչկրօն*, *խաչվերաց*, *խաչունակ*, *խաչփոխ*, *խաչօրհներք*, *խնկեփեաց*, *խնկաման*, *խնկաղաց*, *ջահընկալ* և այլն:

Ըստ բարդ բառերի բաղադրիչների խոսքիմասային պատկանելության՝ բառաբարդամբ կազմված հայերեն եզրույթները ներկայացնում են խոսքիմասային զանազան հարաբերությամբ հյուսված հետևյալ կաղապարները.

*Ա) Գոյական+գոյական՝ աթորածառանգ, բաժակաման//բաժկաման*<sup>20</sup>, *գաւազանաձեւ*, *ժամագիրք*, *իւղագլուխ*, *իւղաթուրմ*, *խաչագիւտ*, *խաչագլուխ*, *խաչաղբօշ*, *խաչաղբոշմ*, *խաչագգեստ*, *խաչաթեւ*, *խաչակառք*, *խաչակարգ*, *խաչակերպ*, *խաչակնիք*, *խաչամասն*, *խաչանշան*, *խաչատեսակ*, *խաչատեսիլ*,

<sup>16</sup> «Եկեղեցւոյ ձախակողմի պահարանն է, որ աւանդատուն ալ կը կոչուի, որովհետեւ հոն կը պահուին եկեղեցւոյ սպասներն ու զարդերը» (ՕԲ, էջ 83):

<sup>17</sup> «Քրիստոսի վրան խաչուած բուն խաչին փայտէն մանր կտոր մը կամ փշուր մը, որ յատուկ զարդարուն ու ճաճանչաւոր անօթի մէջ զետեղուած է» (ՕԲ, էջ 132):

<sup>18</sup> Հ. Աճառյանը *բուրվատ* բառի առաջին բաղադրիչ է դիտում *բոյր* փոխառյալ բառը, որ հին մատենագրությամբ ավանդված չէ, և այն բացատրում է «*խունկ ծխելու աման*» իմաստով, Ա. Մեյեն «բուրվատ» կազմությունը բացատրում է ժողովրդական ստուգաբանությամբ և կարծում է, որ բառն ամբողջությամբ իրանական փոխառություն է՝ *բուրւար* ձևով. իրանյան բառի բուն պրմատն է *bheudh*, որ նշանակում է *արթուն մնալով հսկել* (տե՛ս **Հ. Աճառյան**, ՀԱԲ, հ. 1, էջ 471): Ծիսական բառարանում Մ. Օրմանյանն ունի «*բուրվատանոց*» բառը, որը նշանակել է «ձախակողմի պահարանի դրան մօտ՝ պատին մէջ գործուած խորշ մը, ուր սովորութիւն էր դնել բուրվատը: Այս բուրման կրակարանները, երբ տեղ մը հաստատուն կը դրուին՝ սովորաբար *խնկանոց* կը կոչուին, եւ կը տարբերին բուն բուրվատէն՝ որ շարժման մէջ կը գործածուի» (ՕԲ, էջ 94):

<sup>19</sup> Տետր, որում գրված են եկեղեցական գանձերը՝ երգերը (տե՛ս **Լ. Յովհաննիսեան**, Գրաբարի բառարան: Նոր հայկազգեան բառարանում չվկայուած բառեր, Եր., 2010, էջ 80):

<sup>20</sup> «*Բաժակաման = բաժկաման = ժամանոց* ալ կը կոչուի Պատարագի խորհրդոյն մատուցած զինուոյն ամանը, որ յատուկ ձեւով ու վայելուչ շիշ մըն է, ապակեայ խցանով զոցուած» (**Մ. Օրմանեան**, ՕԲ, էջ 90):

խաչատրիպ, խաչափառ//խեչափառ, խունկեղեզն, խնկազգեստ, խնկահոտ, խորհրդատեստր, մեղրամոմ, մոմաձեւ, մոմատեսակ, նշխարակուժ, նշխարատուն, ջահաբուն, ջահազգեստ, ջահափայլ, սեղանակտաւ, սկահաձեւ, սպասատուն, տօնացուցակ:

Գ) Գոյական+ածական՝ աթոռակից, իւղալի, խաչակից, խաչանման, խնկալի/խնկալի, խնկախառն, խնկապատար (Տ. Խնկաւէտ), կնդրկախառն, ջահակից, ջահանման, սեղանազերծ:

Գ) Գոյական+բայարմատ (կամ բայահիմք)՝ աթոռակալ, աթոռապահ, աթոռաւեր, աշտանակազարդ, աշտանակակիր, աւագանազարդ, աւագանածին, աւագանապաճոյճ, աւագանատունկ (մկրտութեամբ եղած), բազմակալ, գաւազանահար, գաւազանահերձ, գաւազանասաստ, գրակալ<sup>21</sup>, ժամահար<sup>22</sup>, իւղաբեր, իւղաբուղի, իւղագործ, իւղեփեաց, խաչաբարձ, խաչաբեր, խաչազարդ, խաչազգեսց, խաչալուայ (խաչ լուայը, ջուրը օրհնելը՝ մեջը), խաչակալ<sup>23</sup>, խաչակերտ, խաչակիր, խաչահան, խաչամած, խաչամահ, խաչայարդար, խաչանիշ, խաչաչարչար, խաչապահ, խաչապայծառ, խաչապաշտ, խաչապսակ, խաչատարած, խաչատեաց, խաչատուր, խնկաբեր, խնկազգեսց, խնկալից, խնկակալ, խնկամատոյց, խնկանուէր (իբրև խունկ նվիրված), կանթեղաբորբոք, կանթեղալոյց, կանթեղակիր, մեռունակիր, մոմազօծ, մոմակերտ, մոմեղինակալ, պատարագամատոյց, ջահալից, ջահակալ, ջահակիր, ջահավառ, ջահատու, ջահրնկալ, սեղանակազմ, սեղանակապուտ, սեղանայարդար, տապանակակիր, տօնացոյց: Մի քանի բառերում երկրորդ բաղադրիչ է դառնում անցյալ կատարյալի հիմքը՝ հանդես գալով ենթակայական և հարակատար դերբայների նշանակությամբ՝ իւղեփեաց, խաչազգեսց, խաչատեաց, խնկազգեսց, խնկամատոյց, կանթեղալոյց, ջահալից:

Դ) Ածական + գոյական՝ դեղնախունկ:

Բերված օրինակներից երևում է, որ գրաբարի ծիսական բարդ եզրույթների մեջ տարածված և կենսունակ են գոյական + գոյական և գոյական + բայ կադապարները:

### Շարահյուսական տարբեր հարաբերություններ

Բարդ բառի բաղադրիչների միջև առկա են շարահյուսական տարբեր հարաբերություններ: Բարդության հիմնական իմաստակիր միավորը երկրորդ բաղադրիչն է, որի հետ լրացական հարաբերության մեջ է լինում առաջինը: Մեծաթիվ են այն բառերը, որոնցում առաջին բաղադրիչն ուղիղ խնդիր է՝ ա-

<sup>21</sup> «...բացուող-գոցուող ձեւով իրարու ագուցուած չորս բարձր ոտքեր, որ վերի կողմէն կաշիով միացած են, եւ այդ կաշիին վրայ կը հանգչեցուի գիրքը:... Կողմնակի բացուողը դասու ատեանին կը գործածուի եւ վրան աւետարան կամ ճաշոց կը կարդացուի...» (ՕԲ, էջ 107):

<sup>22</sup> Ժամ կանչելու կոչնակ, զանգակ (տե՛ս ԱԲ, էջ 32):

<sup>23</sup> «Բազմոց, յորոյ վերայ դնի սուրբ նշան խաչի» (ՆՃԲ, հ. 1, էջ 923): «Խաչը կեցնելու տեղ...Այժմ խաչակալ ըսելով՝ կ'իմանանք սեղանին ճակատը բարձրացող փայտակերտը» (ՕԲ, էջ 133-134):



*թոռասեր, խաչատեաց, խնկաբեր:* Բարդության բաղադրիչների միջև հանդիպում են նաև խնդրային այլ հարաբերություններ՝ *աւազանազարդ, խաչազարդ, խաչաչարչար, կանթեղաբորբոք:*

Գոյական+ածական կաղապարով կազմված բարդ բառերում ունենք ածականի խնդրառության յուրահատուկ երևույթ, երբ ածականով արտահայտված բաղադրիչն իր իմաստին համապատասխան ստանում է որևէ խնդիր՝ *խաչակից, խնկալի, խնկախառն, սեղանազերծ:* Որոշ բառերում առկա են՝ ա) հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություններ՝ *խաչաթել, խաչանշան, նշխարատուն, բ) որոշիչ-որոշյալի հարաբերություններ՝ դեղնախունկ:*

Բարդ եզրույթների եզրութաբանական կաղապարները մեր ընտրանքում երեք տիպի են՝ ա) *եզրույթ+եզրույթ՝ խաչակրօն//խաչկրօն, խաչաշտանակ, հալուախունկ, բ) եզրույթ + ոչ եզրույթ՝ աշտանակակիր, խնկազարդ, կնդրկաբեր, մեռնակիր, մումազօծ* և այլն, գ) *ոչ եզրույթ + եզրույթ՝ դեղախունկ, դեղնախունկ, եղեգնախունկ*<sup>24</sup>: Քանակապես անառարկելիորեն գերազանցում է *եզրույթ + ոչ եզրույթ* կաղապարը:

Գրաբարի ծիսական եզրաբանության համակարգում բավականաչափ գործածական են նաև ածանցները: Նախաձանցավոր են *անաթոռ //անաթոռք*<sup>25</sup> կաղապարները. վերջինը միաժամանակ նախաձանցով և վերջաձանցով է կազմված:

#### Վերջաձանցավոր կաղապարներ

Ածանցման միջոցով կազմված ծիսական առարկաներ նշանակող բառերում մեծ է վերջաձանցների կիրառությունը, որը նույնպես հայերենի բառակերտման կարևոր առանձնահատկություններից է: Վերջաձանցով կազմված ածանցյալ բառը կամ եզրույթը կարող է փոխել իր խոսքիմասային պատկանելությունը: Ըստ բաղադրիչների՝ եզրույթների և ոչ եզրույթների պատկանելության՝ ածանցավոր ծիսական եզրույթները կազմվում են ծիսական եզրույթներից և ընդհանուր գործածական բառերից: Ստորև բերում ենք վերջաձանցներով կազմված մի շարք կաղապարներ.

- ակ՝ *կոչնակ, -ակ՝ տապանակ,*
- ական՝ *խաչական, շարական*<sup>26</sup>,
- ային՝ *աթոռային, խնկային,*
- անոց՝ *ժամանոց, խնկանոց, սարկաւազանոց*<sup>27</sup>,

<sup>24</sup> Տե՛ս **Մ. Ասլանյան**, Ակնարկներ ժամանակակից հայոց լեզվի բառագիտության և տերմինաբանության, Եր., 1982, էջ 296:

<sup>25</sup> *Անաթոռ//անաթոռք*՝ ըստ քրիստոնեական հավատալիքի՝ նշանակում է քերովբեների՝ սերովբեների դասը:

<sup>26</sup> Երգարան, շարակնոց (տե՛ս ԱԲ, էջ 632): «Տերունի տօներու, սրբոց յիշատակներու եւ պահոց օրերու ըստ պատշաճի եկեղեցոյ մէջ կարդացուելիք երգերն ալ շարական կը կոչուին, հետեւապէս թէ՛ գիրքը եւ թէ՛ պարունակութիւնը նոյն անունը կը կրեն» (**Մ. Օրմանեան**, ՄԲ, էջ 165):

<sup>27</sup> Այս բառն ունի հետևյալ երկու իմաստները՝ 1. Եկեղեցու այն բաժանմունքը, որտեղ հավաքվում են սարկավազները, 2. Եկեղեցու պահարան, ավանդատուն: Բնականաբար, մենք նկատի ունենք

-անք՝ ինկանք,  
 -/ա/պան՝ խաչապան,  
 -/ա/պէս՝ խաչապէս, ինկապէս,  
 -արան՝ աւետարան, գանձարան<sup>28</sup>, զոհարան, իղարան, ինկարան, սաղմոսարան, տաղարան,  
 -աւոր՝ գաւազանաւոր, ինկաւոր, կանթեղաւոր, ջահաւոր,  
 -աւէտ՝ ինկաւէտ,  
 -եայ՝ ինկեայ, -եայ՝ կնդրկեայ, մումեայ,  
 -ելի՝ ինկելի, -եղէն՝ մումեղէն,  
 -ենի՝ իղենի,  
 -իկ՝ իղիկ, ինկիկ, սաղմոսիկ<sup>29</sup>,  
 -իչ՝ խաչիչ, ինկիչ,  
 -ող՝ խաչող// խաչեցող,  
 -ոց՝ բազմոց, քշոց,  
 -ք՝ նշխարք,  
 -օրէն՝ սեղանայօրէն:

### Կրկնակի վերջածանցներով բաղադրություններ

Հանդիպում են նաև կրկնակի վերջածանցներով բաղադրություններ, ինչպէս՝ *իղարարութիւն, իղաւորական, խաչենեան, ինկաւորեայ, ինկաւորութիւն, ջահաւորական, ջահացուցիչ, ջահաւորութիւն, քշոցանի*:

### Բայեր

Բայերը քննել ենք ածանցավոր կազմությունների մեջ՝ անկախ վերջավորությանը նախորդող մասի կազմությունից (*պարզ, բարդ, ածանցավոր*), քանի որ բայական բառայթը միշտ բաղադրյալ է՝ կազմված առնվազն երկու ձևայթից<sup>30</sup>: Մեր ընտրանքում բայական բառայթներ են ստեղծվում *-ել, -ալ, -(ան) ալ* քերականական և բառաստեղծական մասնիկների միջոցով:

Հաճախ այս կամ այն հասկացությունը բայական նշանակությամբ արտահայտելու անհրաժեշտությունից ելնելով և լեզվի մեջ այլևս նոր արմատներ չառաջանալու պատճառով լեզուն դիմում է իր ներքին հնարավորություններին՝ բայեր կազմելով բայակերտ մասնիկների միջոցով<sup>31</sup>: Բայերի կերտումը այլ խոսքի մասերից տեղի է ունենում կա մ բայական վերջավորության միջոցով, կա մ *-անալ* բաղադրյալ բայակերտ ածանցով, որը գործառական տեսակետից որոշ

երկրորդ իմաստը (տե՛ս ԳԲ, հ. 2, էջ 448, ԱԲ, էջ 724):

<sup>28</sup> «Գանձարանը գիրք մըն է, որ կը պարունակէ զանազան տօներու համար յատուկ զանձեր: Իսկ զանձ կը կոչուին մեծ քարոզներ, որ հանդիսատրապէս կ'երգուին առտուներն ու երեկոնները մեսեղիներէն ետքը եւ «Գոհանամք զբէն» եւ «Լուր ձայնից» աղօթքներէն առաջ» (ՕԲ, էջ 97):

<sup>29</sup> Սաղմոսների փոքր գիրք:

<sup>30</sup> Տե՛ս Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմությունը, Եր., 1987, էջ 299:

<sup>31</sup> Տե՛ս Զ. Օհանյան, Ժամանակակից հայոց լեզվի բառապաշարը և նրա հարստացման միջոցները, Եր., 1982, էջ 114:

սահմանափակություն ունի. դրանով կազմվում են միայն չեզոք սեռի բայեր<sup>32</sup>: Բայական անվանումները ստեղծվում են բառերի բայացման միջոցով՝

-ել՝ *գաւազանել, իւղազլիել, իւղարկել, իւղել, խաչակնքել, խաչակցել, խաչասփռել, խաչացուցանել*<sup>33</sup>, *խաչել, խնկարկել, խնկել, մեռոնել, մեռոնուոր-վել, մոմել/մոմնել, նշխարել, ջահել, ջահագարդել, ջահակալել, ջահակերպել, ջահավառել, ջահացուցանել/ջահեցուցանել, ջահափայլել, ջահաւորել, ջահրնկալել,*

-անալ՝ *աթոռանալ*<sup>34</sup>, *խաչանալ, ջահանալ, սեղանանալ*:

### **Բարդաձանցավոր բառեր**

Բարդ և աձանցավոր եզրույթներին սերտորեն առնչվում են նաև բարդաձանցավոր բառերը<sup>35</sup>: Այս բաղադրությունները նույնպես խմբավորվում են ըստ եզրային աձանցի.

-ական՝ *սեղանակապտական, իւղեփեցական,*

-ութիւն՝ *աթոռակալութիւն, աթոռապահութիւն, աթոռասիրութիւն, աթոռակցութիւն, գաւազանահմայութիւն, իւղազլիութիւն, իւղագործութիւն, իւղեփեցութիւն, խաչահանութիւն, խաչամարտութիւն, խաչանմանութիւն, խաչելութիւն*<sup>36</sup>, *խնկարկութիւն, ջահագործութիւն*<sup>37</sup>, *ջահալուսութիւն/ջահալուցութիւն, ջահավառութիւն, ջահափայլութիւն, ջահրնկալութիւն, սեղանակողոպտութիւն,*

-եալ՝ *իւղագործեալ, խաչադրօշեալ, խաչազգեստեալ, խաչակերպեալ, խաչանմանեալ, խաչելեալ, ջահազգեստեալ, ջահատրեալ, ջահափայլեալ,*

-իկ՝ *խաչազգեցիկ,*

-ու՝ *խաչահանու/խաչհանու, խնկարկու, խնկածու, -արար՝ խաչատեսակարար, խաչարգարար:*

Օրսական եզրույթ պարունակող բառերն ըստ ձևաբանական նշանակության լինում են՝

Ա) գոյականներ՝ *խաչադրօշ, խաչակառք, խաչօրհնէք, մոմեղինակալ, նշխարակուծ, նշխարատուն* և այլն:

Բ) Ածականներ, որոնք կազմվում են բառերի մեծ մասը՝ *խաչանման, խնկալի, կնդրկաբեր, մոմագօծ, մոմակերտ, ջահատու* և այլն:

Գ) Մակբայներ՝ *խաչապէս, խնկապէս, խաչատեսակարար, խաչարգարար, սեղանայօրէն*:

<sup>32</sup> Տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 300-301:

<sup>33</sup> Պատճառական աձանցները՝ որպէս զուտ ձևակազմական մասնիկներ, կաղապարներում չենք առանձնացնում, մանավանդ որ հաճախ դրանք կցվում են սոսկաձանցներին:

<sup>34</sup> *Աթոռանալ՝ աթոռ բարձրանալ, գահակալել* (տե՛ս ԳԲ, հ. 1, էջ 17):

<sup>35</sup> Մրանք այն վերջաձանցավոր բառերն են, որոնց սերող հիմքը բարդ բառ է (տե՛ս **Լ. Հովսեփյան**, նշվ. աշխ., էջ 255):

<sup>36</sup> Խաչը ելնելը, «խաչուելը» (ԳԲ, հ. 1, էջ 557: ԱԲ, էջ 370: ՆՀԲ, հ. 1, էջ 924):

<sup>37</sup> ԳԲ-ում բառի բացատրությունն է՝ «ջահեր վառել, ջահերով լուսավորել», ԱԲ-ում՝ «պայծառութիւն» (ԳԲ, հ. 2, էջ 426, ԱԲ, էջ 710):

Գ) Բայեր՝ *աւետարանագրել, իւղագլխել, ջահագարդել* և այլն: Կան նաև անցյալ դերբայի ձևեր՝ *խաչագգեստեալ, խաչակերպեալ, խաչանմանեալ, խաչելեալ, ջահագգեստեալ, ջահափայլեալ* և այլն:

### Շեշտափոխական հնչյունափոխություն

Բարդ, ածանցավոր և բարդածանցավոր եզրույթներում կատարվում է շեշտափոխական նույն հնչյունափոխությունը, ինչ ընդհանուր գործածության բառերում.

ա) *ի>ը՝ աւետարանագրել, աւետարանագրութիւն, աթոռակցութիւն, գրաւիլ, խաչակցել, խաչանշան*

բ) *ի>զրո՝ աւետարան(ի)չական, դեղնախունկ, խաչակնքել*

գ) *է>ի՝ աթոռասիրութիւն, մովեղինակալ*

դ) *ու>ը՝ խնկանք, խնկանուէր, խնկապատար, խնկապէս, խնկաւոր, խնկաւորեալ, խնկաւորութիւն, խնկաւէտ, խնկարան, խնկարկել, խնկարկու, խնկել, խնկելի, խնկեփեաց, խնկիկ, խնկիչ, ջահատրեալ*

ե) *ու > զրո՝ բազմակալ, կնդրկարբեր, կնդրկախառն, կնդրկեայ, իւղագլխել, իւղագլխութիւն, սեղանակողոպտութիւն*

զ) *եա > է՝ իւղեփեցութիւն, խաչագգեցիկ*

է) *ոյ> ու՝ խաչացուցանել, ջահալուսութիւն//ջահալուցութիւն, ջահացուցանել, ջահացուցիչ*

Գրաբարում կան նաև բազմաթիվ դարձվածքներ և կայուն կապակցություններ, որոնց մեջ բաղադրիչներից մեկը ծիսական առարկայի անուն է՝ *խաչալուսայ առնել, խաչակից լինել, խաչանշան առնել, ի խաչ ելանել, ի խաչ հանել/հանել ի խաչ, խունկ արկանել* և այլն:

**СИРАПИ КАРАПЕТЯН – Словообразовательные модели древнеармянских названий ритуальных предметов.** – Роль Армянской церковной культуры значительная в различных аспектах духовной жизни армян и влияет на все сферы общественного сознания, включая этику, философию, литературу, историографию и др. Переводы Ветхого и Нового Заветов, которые включают армяноязычные термины и гибкие армянские выражения для этих различных областей, способствовали дальнейшему развитию независимой и переводной литературы. Данная статья посвящена древнеармянским названиям ритуальных предметов и развитию их лексических моделей в армянском языке. Изучение слов, выражающих ритуальные понятия, представляет интерес не только с лингвистической, но и с исторических, этнографических и культурологических точек зрения. Рассмотренные ритуальные термины являются сложными и производными словами. Армянский язык характеризуется лексической гибкостью и широкими возможностями, и слова ритуального содержания в целом имеют большую продуктивность и лексическую связность. Ритуальные предметы на протяжении тысячелетий являются существенной частью человеческой культуры и духовной жизни. Они служат не только инструментами для проведения ритуальных церемоний, но и символами, имеющими глубокий смысл и утверждающими связь человека с его верой и традициями. Для многих людей ритуальные предметы олицетворяют личную связь с верой и идентичностью, напоминая о корнях и ценностях и предоставляя утешение и руководство в трудные моменты. Их также передают из поколения в поколение, сохраняя и укрепляя семейные традиции и верования.

**Ключевые слова:** *термин, ритуальный смысл, христианство, существительное, прилагательное, сложное слово, словообразование, семантика, структура слова, фонетическое (звуковое изменение)*

**SIRARPI KARAPETYAN – *Word-Formation Patterns of Ancient Armenian Names of Ritual Objects.*** – Armenian ecclesiastical culture significantly influences various aspects of Armenian spiritual life, touching upon ethical, philosophical, literary, and historiographical domains. The translations of the Old and New Testaments, which provided the Armenian language with terms and flexible Armenian expressions of those various fields, in turn, contributed to the further development of independent and translated literature. The present article explores Ancient Armenian names of ritual objects and the development of their word-formation patterns in Armenian.

The examination of words expressing ritual meaning is interesting not only from the linguistic point of view but also from historical, ethnographic, and cultural points of view. The ritual terms we have examined are compound and derivative.

Armenian, known for its lexical versatility and expansive semantic range, demonstrates remarkable productivity in ritual terminology, showcasing substantial interconnectedness within its lexical framework. Ritual objects have long been integral to human cultural and spiritual practices, serving not only as implements for ceremonial rituals but also as potent symbols imbued with profound significance. For many individuals, these artifacts symbolize personal connections to faith and cultural identity, serving as tangible expressions of one's heritage and values. Passed down through generations, they play a pivotal role in preserving and reinforcing familial traditions and religious beliefs.

**Key words:** *term, ritual meaning, Christianity, noun, adjective, compound, derivational, semantic, word structure, sound interchange*

## ԳՐԱԲԱՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՐԵՎԵԼԱՀԱՅԵՐԵՆԻ ԵԶՐՈՒԹԱՅԻՆ ԲԱՌԱՇԵՐՏԻ ԱՂԲՅՈՒՐ

ԿԱՐԻՆԵ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ \* 

*Երևանի պետական համալսարան*

Սույն հոդվածում քննվել են գրաբարից ժամանակակից հայերենի գիտական բառաշերտ անցած եզրույթների իմաստային դաշտերի փոփոխություններին առնչվող իրողությունները: Հետազոտության նպատակն է վեր հանել գրաբարից ժամանակակից արևելահայերենին անցած բառերի եզրութացման գործընթացի առանձնահատկությունները, կատարել գրաբարյան եզրութային բառաշերտի իմաստային դաշտերի համառոտ վերլուծությունը, դիտարկել ժամանակակից հայերենում գրաբարյան եզրույթների նոր բաղադրություններն ու գործածությունները, ինչպես նաև խմբավորել գրաբարից ժամանակակից հայերեն անցած եզրույթների կաղապարները՝ ըստ գրաբարի, ժամանակակից հայերենի և մասնագիտական եզրութաբանական բառարանների:

Հետազոտության արդյունքում հանգել ենք այն եզրահանգման, որ լեզվի ներքին զարգացման միջոցներով եզրութային համակարգի կատարելագործումն ունի որոշակի առավելություններ. հայերեն համարժեքներով եզրութահամակարգը նպաստում է գիտական լեզվամշակույթի և ազգային ինքնության պահպանմանը, դրանք հասանելի և հանրամատչելի են հասարակության լայն խավերի համար, ինչը հեշտացնում է նաև գիտելիքի տարածումն ու կրթական գործընթացը: Բացի այդ, մայրենի լեզվով եզրութաբանության զարգացումն ավելի է համապատասխանում ազգային գիտական լեզվամշակութային առանձնահատկություններին, ինչը կարևոր է գիտության գրեթե բոլոր ոլորտներում, օրինակ՝ բժշկություն, քաղաքագիտություն, տնտեսագիտություն, իրավագիտություն, տեխնոլոգիական են: Թեև մայրենի լեզվով եզրութաբանությունն ունի սահմանափակ կիրառելիություն, մասնավորապես միջազգային մակարդակում, որտեղ անգլերենը կամ այլ լեզուներ գերիշխում են, այնուամենայնիվ ազգային լեզվով եզրութաբանության զարգացումը խթանում է նաև լեզվական ինքնավարությունը և անկախությունը, նվազեցնում է օտար լեզուներից

\* **Վարինե Միքայելյան** – բանասիրական գիտությունների թեկնածու, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի դոցենտ

**Карине Микаелян** – кандидат филологических наук, доцент кафедры армянского языка ЕГУ

**Karina Mikayelyan** – Candidate of Philological Sciences, Associate Professor at YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ [miqayelyankarine@ysu.am](mailto:miqayelyankarine@ysu.am). ORCID: <https://orcid.org/0000-0001-7445-4003>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 07.06.2024

Գրախոսվել է՝ 12.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024

կախվածությունը: Բացի այդ, պետք է ընդունել, որ նորարարական կամ տեխնոլոգիական շատ եզրույթներ գրեթե բոլոր լեզուներում էլ հաճախ փոխառվում են, որովհետև դժվար է կամ երբեմն անհնար ազգային լեզուներով դրանց համարժեքների ստեղծումը:

**Բանալի բառեր** - գրաբարյան եզրույթներ, եզրութային ներքին փոխառություններ, իմաստային դաշտի ընդլայնում, բառերի եզրութացում, եզրութահամակարգ, համանուն եզրույթներ, մայրենի լեզվով եզրութային համակարգի զարգացում և ռազմավարություն

Ժամանակակից արևելահայերենի եզրութային բառաշերտի միջուկը գրաբարյան բառապաշարն է: Հասկանալի է, որ գրաբարն էլ իր հերթին եզրութային բառաշերտի մի մասը ժառանգել է հնդեվրոպական մայր լեզվից՝ վաղնջահայերենում, հնագույն և հին հայերենի շրջափուլերում բառակազմական միջոցներով, հնագույն փոխառություններով հարստացնելով այն: Ակադ. Գ. Ջահուկյանը փաստում է. «... հնագույն շրջանին են պատկանում այն բառերը, որոնք պիտի հանդես գային այդ շրջանում հայ ժողովրդի համար բնորոշ բնական պայմանների, արտադրական հարաբերությունների, քաղաքական, իրավական և գաղափարական հարաբերությունների ու հաստատությունների հետ կապված: Մասնավորապես պետք է նշել **դասակարգային հասարակության** ու **պետության** առաջացման ու զարգացող **առևտրի** ձևավորման, **քաղաքական** ու **իրավական** նոր գաղափարների, **կրոնական** նոր պատկերացումների և հատկապես շրջանի վերջին **քրիստոնեության** մուտքի հետ կապված բառերն ու **տերմինները**»<sup>1</sup> (ընդգծումները մերն է՝ Վ. Մ.): Նախագրաբարյան բառապաշարի, դրա եզրութային բառաշերտի հանգամանակից քննությունը կատարել է ակադ. Գ. Ջահուկյանն իր վերոնշյալ աշխատության մեջ: Գրաբարյան ճարտասանական, լեզվաբանական, մաթեմատիկական եզրույթների ծագման, իմաստաբանական, կառուցվածքային քննության խնդիրներին անդրադարձել է պրոֆ. Վ. Համբարձումյանը<sup>2</sup>: Մեքենագիտական-մեքենաշինական եզրույթների իմաստաբանական, գործառական, կառուցվածքային հատկանիշների, ներքին փոխառության ուղիների և աղբյուրների քննությունը կատարել է Հ. Ց. Պետրոսյանը<sup>3</sup>:

Ժամանակակից արևելահայերենի եզրութային բառապաշարի քննությամբ

<sup>1</sup> Գ. Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1987, էջ 384:

<sup>2</sup> Տե՛ս Վ. Համբարձումյան, XVII-XIX դդ. գրաբար ճարտասանական երկերի տերմինաբանությունը, «Հայոց լեզվի պատմության հարցեր», պր. 2, Եր., 1985, էջ 257-317: **Նույնի՝** XVIII դ. գրաբարի մաթեմատիկական տերմինաբանությունը, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1986, № 3, էջ 70-78: **Նույնի՝** Հայոց լեզվի կետադրական տերմինների ծագումը և կառուցվածքը, «Պատմաբանասիրական հանդես», № 1, 2001, էջ 102-119:

<sup>3</sup> Հ. Ց. Պետրոսյան, Տերմինագիտության հիմունքներ. դասագիրք, Եր., 2010: **Նույնի՝** Գիտական գրավոր խոսք, Եր., 2014, էջ 115-152:

պարզվել է, որ ա) հետգրաբարյան ժամանակաշրջանում եզրութակերտման գործընթացում ներքին փոխառության ճանապարհով եզրութային իմաստ է ձեռք բերել գրաբարյան համագործածական բառապաշարի մի մասը, այսինքն՝ գրաբարում դրանք եզրութային իմաստ չեն ունեցել, դրանց եզրութացումը տեղի է ունեցել հետգրաբարյան փուլերում բառիմաստի ընդլայնման հետևանքով: Գրաբարյան պատրաստի բառաձևերը ժամանակակից հայերենի եզրութահամակարգերում կիրառվել են նոր իմաստներով. այսպես՝ *բազումք* գրաբարում նշանակել է «շատ մարդ, շատերը»<sup>4</sup>, ժամանակակից հայերենի աստղագիտական եզրութային համակարգում. «(աստղգ.) համաստեղություն հյուսիսային երկրագնդում՝ բաղկացված յոթ տեսանելի աստղերից»<sup>5</sup>: *Կոտոր, կոտորակ* գրաբարում ունեցել է միայն «կոտոր, պատառ»<sup>6</sup> նշանակությունը: Ժամանակակից հայերենում՝ «կոտորակ - 1. Ամբողջի մաս: 2 (մաթ.) Թիվ, որը ցույց է տալիս, թե ամբողջը քանի հավասար մասի է բաժանված և դրանցից քանիսն է վերցված»<sup>7</sup>: Այս եզրութահամակարգը ժամանակակից հայերենում համալրվել է նաև նոր ածանցումներով և բարդություններով՝ կոտորակագիր, կոտորակային, կոտորակավոր, կոտորակել, կոտորակիչ, կոտորակում, կոտորակային թվական (լեզվբ.): Այսպիսով՝ գրանցվում է գրաբարում **բառ** → ժամանակակից հայերենում **եզրութ** իմաստային անցման կաղապարը: Բնաստային նորաբանության եղանակով եզրութային բառապաշարի հարստացման ուղին է սա<sup>8</sup>, ինչը նպաստում է լեզվի խնայողությանը: Այս երևույթի նկարագրությունն առկա է նաև Ռ. Կլապենբախի «Ժամանակակից գերմաներենի բառարան»<sup>9</sup>-ում իբրև նախկինում հայտնի բառային միավորների նոր իմաստներ կամ նոր բառաիմաստային տարբերակներ:

Բ) Բազմիմաստ բառերը, որոնք դեռևս գրաբարում ունեցել են նաև եզրութային նշանակություն, ևս օրինաչափ են: Բառի եզրութացումը դեռևս գրաբարում պայմանավորված է եղել իմաստային փոփոխության դրսևորումներով: Ժամանակակից հայերենում եզրութային իմաստային փոփոխության չի ենթարկվել: Այսպես՝ «այլակերպություն - 1. Այլակերպ լինելը՝ դառնալը, կերպարանափոխություն: 2. Փոփոխություն, այլալյություն: 3. Տարբերություն, պէսպիսություն,

<sup>4</sup> Ռ. Ս. Ղազարեան, Գրաբարի բառարան (այսուհետև՝ ԳԲ), հ. 1, Եր., 2000, էջ 249:

<sup>5</sup> Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Եր., 1969, էջ 268:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 670:

<sup>7</sup> Նույն տեղում, էջ 193:

<sup>8</sup> Տե՛ս **Ю. М. Шемчук**, Переименование как особое лингвистическое явление неологии, Рема, 2010. **В. А. Серов**, Новое слово как результат действия номинативного механизма (на материале номинаций пунктов общественного питания в русском, английском и французском языках), МГЛУ, Конференция «Ломоносов-2023», **Е. С Traugott**, Semantic Change, Oxford Research Encyclopedias, 2017:

<sup>9</sup> Տե՛ս **R. Klappenbach**, Wörterbuch der deutschen Gegenwartssprache, Akademie-Verlag, 1977:



զանազանությին: 4. (եկեղ.) Պայծառակերպություն (Քրիստոսի), նաև՝ այլակերպումն (եկեղց.) -Քրիստոսի այլակերպություն»<sup>10</sup>: Եզրութային իմաստը նույն կերպ մեկնում է նաև ՆԲՀԼ-ն. «այլակերպություն-որ և ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԻԻՆ. ուստի և տօնն Վարդավառի»<sup>11</sup>: Ժամանակակից հայերենում պահպանել են և՛ բառային, և՛ եզրութային իմաստները: Այսպիսով՝ գրաբարյան եզրութն առանց իմաստային փոփոխության ներքին փոխառության ճանապարհով անցել է ժամանակակից հայերենի եզրութային համակարգ, ուստի եզրութաբանական բառարանն արձանագրում է. «Հայ Եկեղեցույ հինգ գլխաւոր տօներէն մին, որ կը կոչուի նաև Պայծառակերպութիւն՝ Քրիստոսի պայծառ ու լուսաւոր կերպարանքով երեւալը իր առաքեալներէն երեքին՝ Պետրոսի եւ Յովհաննէսի եւ Յակոբոսի ներկայութեան Գալիլիոյ սուրբ լերան վրայ, որ ըստ հաստատուն աւանդութեան Թաբօր կոչուած լեռն եղած է... Տօնը կը կատարուի Զատկի ԺԴ. Կիրակին, այսինքն Զատկէն 98 օր ետքը, հետեւաբար 30 օրուան շարժականութիւն կրնայ ունենալ Յունիս 28-էն Օգոստոս 1: Տօնախմբութիւնը երեք օր է. Կիրակի՝ բուն տօնը»<sup>12</sup>: Այս պարագայում առկա է գրաբարյան **բառ և եզրութ** - ժամանակակից հայերենում նույնիմաստ **բառ և եզրութ** կադապարը:

Գ) Գրաբարյան եզրութային բառաշերտի մի մասը բնիկ հայերեն, հնագույն փոխառյալ մենիմաստ կամ մասնավորված իմաստային տարբերակ ունեցող բառաշերտն է: Այսպէս՝ «աբբայ (ատր., յուն.) - վանահայր. վանքի կրօնաւոր. վանական»<sup>13</sup>, նույն կերպ մեկնում է նաև ՆԲՀԼ-ը՝ «աբբայ հայր կամ աբբահայր. վանական, միանձն, կրօնաւոր»: Ածանցված կիրառությունը ևս արձանագրել են գրաբարի բառարանները՝ աբբասուհի-կաթոլիկ կուսանոցի մայրապետ<sup>14</sup>, «գլուխ կրօնաւորեալ կուսից կամ հաւատաւորեաց. մայր վանից. մայրապետներու գլուխ»<sup>15</sup>: Ժամանակակից արևելահայերենը, ժառանգելով և պահպանելով գրաբարյան իմաստով եզրութը, տվյալ համակարգում իմաստային դաշտի ընդլայնման հետևանքով ածանցման եղանակով նորակազմություններն են լրացրել եզրութահամակարգի շարքը՝ «աբբա (եկեղ.)-նույնն է Աբբահայր: Աբբահայր (եկեղ.)-կաթոլիկ վանքի վանահայր: Աբբայ *ական* (եկեղ.)-աբբային հատուկ՝ վերաբերող, աբբայի: Աբբայ *արան* (եկեղ.)-աբբայի կացարան: Աբբայ *յություն* (եկեղ.)-1. Կաթոլիկ վանք (իր ունեցվածքով): 2. Կաթոլիկական վանքի վանահոր կոչումը և պաշտոնը: 3. Աբբայի պաշտոնավարության ժամանակաշրջանը: Աբբասուհի (եկեղ.)-կաթոլիկական կուսանոցի մայրապետ»<sup>16</sup>:

<sup>10</sup> ԳԲ, հ. 1, էջ 55:

<sup>11</sup> **Գ. Աւետիքեան** և այլք, Նոր բառգիրք հայկազեան լեզուի (այսուհետև՝ ՆԲՀԼ), հ.1, գ. 1, Վենետիկ, 1836, էջ 86:

<sup>12</sup> **Մ. Օրմանեան**, Ծիսական բառարան (այսուհետև՝ ԾԲ), գ.1, Անթիլիաս, 1979, էջ 11:

<sup>13</sup> ԳԲ, հ. 1, էջ 11:

<sup>14</sup> Տե՛ս ԾԲ, էջ 11:

<sup>15</sup> ՆԲՀԼ հ.1, գ. 1, էջ 1:

<sup>16</sup> ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 1:

Ակնհայտ է, որ թեև գրաբարում էլ որոշ ածանցներ (-ական, -արան, -ութիւն) բառակերտման, եզրութակերտման գործունեություն ունեցել են, սակայն լեզվի զարգացման հետագա փուլերում դրանց եզրութաստեղծ կիրառությունը ընդլայնվել է՝ պայմանավորված եզրութների իմաստային դաշտերի ընդլայնմամբ: Հետագայում նորակազմություններով համալրվել է տվյալ եզրութահամակարգի բառաշերտը:

Դ) Գրաբարում մենիմաստ **եզրութ** → ժամանակակից հայերենում բազմիմաստ **եզրութ** կադապարներն էլ հաճախադեպ են: Ընդ որում, մենիմաստ եզրութը ժամանակակից հայերենում բազմիմաստ է՝ դառնալով ընդհանրական, գիտության մի բնագավառից անցնելով մյուսին, կիրառվելով տարբեր տերմինահամակարգերում: Թեև հաճախ եզրութային նշումը բացակայում է գրաբարում, բայց իմաստային դաշտը պահպանված է ժամանակակից հայերենում: Օրինակ՝ «Տոկոս (յուն.) - Դրամի շահ՝ պարտատերից գանձուող, վաշի. բարդություններում՝ տոկոսահաւաք, տոկոսել, տոկոսիք»<sup>17</sup>, ժամանակակից արևելահայերենում՝ «1. Ամբողջական թվի մեկ հարյուրերորդական մաս (նշանակվում է % նշանով) 2. Որևէ բանի քանակ, որ չափվում է որպես միավոր ընդունված որևէ բանի հարյուրերորդական մասով: 3. Մի տարվա ընթացքում դրամագլխի յուրաքանչյուր հարյուր ռուբլու դիմաց ստացվող շահ: 4. Այն վարձը, որ ստանում է վարկատուն՝ պարտատերը, պարտք տված դրամի դիմաց: 5. Այն վարձատրությունը, որ հաշվվում է՝ նկատի ունենալով շրջանառությունը՝ եկամուտը»<sup>18</sup>: Բարդություններում՝ տոկոսադրամ, տոկոսակալել (հզվդ.), տոկոսային, տոկոսայնություն, տոկոսանոց, տոկոսառու, տոկոսառություն, տոկոսավորել, տոկոսավորում, տոկոսատու, տոկոսացույց, տոկոսիք (հնց.), բառակապակցություններում՝ բարդ/պարզ/վաշխառուական/օրինական տոկոս. հարյուր տոկոսով. տոկոսաբեր թղթեր/արժեթղթեր են: Ըստ եզրութաբանական բառարանի՝ տոկոս- կազմակերպության, վարկատուի (փոխառուի) կողմից դրամական միջոցների կամ հասանելիք գումարների օգտագործման դիմաց վճար է, որը հանդես է գալիս ստացվելիք տոկոսային եկամտի (տրամադրված վարկի, ներդրված ավանդի կամ դեպոզիտի) և վճարվելիք տոկոսային ծախսի (ստացված վարկի, ավանդի կամ դեպոզիտի) տեսքով: Բարդություններում և բառակապակցություններում՝ տոկոսադրութ լողացող/հաշվարկային/միջբանկային/շուկայական/վարկային են: Եզրութային իմաստի ընդլայնման շնորհիվ իմաստային դաշտը շահեկան փոփոխությունների է ենթարկվել: Յուրացված փոխառյալ եզրութը ժամանակակից հայերենում լայնացրել է իմաստային դաշտը, եզրութային կայուն կապակցություններ կազմելու գործուն մաս է դարձել:

Ե) Գրաբարյան եզրութը ժամանակակից հայերենի բարդված տարբերակ-

<sup>17</sup> ԳԲ, հ. 2, էջ 566:

<sup>18</sup> ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 520:

ներում նաև նոր եզրութահամակարգերի միավոր է դառնում: Օրինակ՝ «աբեղայ (ասոր.) 1. Մենակեաց կրօնաւոր: 2. Վանական կրօնաւոր»<sup>19</sup>. «...հայր եղեալ կրօնաւորութեամբ...հրաժարեալ յաշխարհէ ուխտիւք և զգեստուք միանձն. վանական»<sup>20</sup>: Ածանցված և բարդված՝ «աբեղայութիւն, աբեղութիւն, աբեղեան, աբեղէնք. աբեղաթաղ, աբեղայական, աբեղայակերպ»<sup>21</sup>: Հմմտ. ժամանակակից արևելահայերենում՝ «աբեղա 1. (եկեղ.) Կուսակրոն քահանա: 2. Կուսակրոն վանական (մանավանդ կրտսերը): Աբեղաթող (հնց.) 1. Վանական խիստ կյանքի կանոններից աբեղաներին ժամանակավորապես ազատելը: 2. Բարեկենդանի շաբաթը, որի ընթացքում աբեղաներին թույլատրվում էր մասնակցելու աշխարհիկ զվարճություններին: Աբեղացու 1. Աբեղա դառնալու պատրաստվող թեկնածու: 2. (արհմրհ.) Վախկոտ, կովից փախչող: Աբեղախոտ-Շրթնածաղիկների ընտանիքին պատկանող շատ տարածված, հոտավետ ծաղիկներով բույս, եզնախոտ (գործ է ածվում բժշկության մեջ եթերային յուղ ստանալու համար, իսկ որոշ տեսակներն էլ՝ իբր դեղաբույս պարտեզագործության մեջ) (*Stachys annua*)»<sup>22</sup>: Տեսնում ենք, որ բուսանուն է, թեև նշում չկա վերոնշյալ բառարանում: Վկայված է նաև Ռ. Ղազարյանի՝ բուսանունների բառարանում. «Աբեղախոտ, եզնախոտ (Խուլեղինջազգիներ// Շրթնածաղկավորներ)»<sup>23</sup>: «Աբեղաճագ, աբեղուկ-Ռաշտային երգեցիկ փոքր թռչուն, արտույտների ընտանիքից, որ գլխին ունի աբեղայի կնգուղի նման կատար, կատարավոր արտույտ»<sup>24</sup>: Այս դեպքում էլ կենդանանուն է: «Աբեղաճաշ -Օեծած ընկույզից կամ կաղինից սխտորով ու քացախով պատրաստված պասուց հեղուկ կերակուր»<sup>25</sup>: Եզրութային բառարանում վկայված է. «1. Օեծած ընկույզով, սխտորով և քացախով պատրաստված պասուց ջրիկ ճաշ: 2. Օեծած ընկույզով (կամ կաղինով), սխտորով, ջրով ու քացախով պատրաստված ուտելիք, որի մեջ հաց են բրդում և ուտում որպես աղցան»<sup>26</sup>: Այս պարագայում մշակութային ոլորտի եզրութ է՝ հայկական ճաշանուն է:

Չ) Գրաբարյան ընդհանրական եզրութների մի մասը ժամանակակից հայերենի համակարգերից մեկում, կորցնելով իմաստային կիրառությունը, տեղը զիջում է բառային նոր տարբերակի: Այսպես՝ գրաբարում «թող 1. (կզմխս.) Շնչառութեան օրգան, որ գտնուում է կրծքի վանդակում (Pulmo): 2. (կենդբ.) Ծո-

<sup>19</sup> ԳԲ, հ. 1, էջ 11:

<sup>20</sup> ՆԲՀԼ, հ.1, ց. 1, էջ 2:

<sup>21</sup> ԳԲ, հ. 1, էջ 11:

<sup>22</sup> ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 1:

<sup>23</sup> Ռ. Ս. Ղազարյան, Բուսանունների հայերեն – լատիներեն - ռուսերեն – անգլերեն – ֆրանսերեն – գերմաներեն բառարան, Եր., 1981, էջ 5:

<sup>24</sup> ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 1:

<sup>25</sup> Նույն տեղում:

<sup>26</sup> Վ. Աղամյան, Ժ. Բաբայան, Հայկական խոհանոցի բառարան, Եր., 2015, էջ 6:

վամայր (մեղուգա): Կամ թոքառաջք (կզմխս.) Շնչափողի ճիւղաւորումները, ուրոնք օդը հասցնում են թոքերին. ցնցուղներ (բրոնխներ)»<sup>27</sup>: Ժամանակակից հայերենում թոքն իբրև կենդանաբանական եզրույթ փոխարինվել է ծովամայր կամ օտար մեղուգա եզրույթով, իսկ բժշկագիտության ոլորտում թոքառաջքը բրոնխներով, և կամ թանչը դիզենտերիադով:

Է) Գրաբարյան համանուն եզրույթների մի մասը պահպանել է համանունությունը նաև ժամանակակից հայերենում: Օրինակ՝ գրաբարում «փոկ-1. Կաշուի բարակ ու երկար շերտ: 2. Փոկից պատրաստած խարազան՝ ձաղկիչ: 3. Փոկից գօտի: 4. Կաշուէ»<sup>28</sup>: Ըստ Գ. Ջահուկյանի՝ ծագումն անհայտ է:

«Փոկ (յուն.) (կենդր.) Թիառտանիների կարգին պատկանող ծովային կաթնասուն կենդանի, Օովաշուն (Phoca vitulina)»<sup>29</sup>: Ժամանակակից հայերենում պահպանվել են և՛ համանունությունը, և՛ իմաստները:

Կամ՝ «փող, փողք 1. Պարանոց, վիզ: 2. Կոկորդ, շնչափող: 3. Որկոր, կերակրափող: 4. Միջանցք (շինութեան մէջ)»<sup>30</sup>: Ծագումն անհայտ է՝ ըստ Գ. Ջահուկյանի:

«Փող-1. Եղջերափող (նուագելու գործիք), շեփոր.... 3. Որոշ առարկաների խողովակաձև մասը, խողովակ: 4. Եղէգ»<sup>31</sup>:

Ժամանակակից հայերենում համանունների շարքում ավելացել է երրորդը՝ «Փող-1. Մետաղյա կամ թղթյա դրամանիշ, որ ծառայում է իբրև արժեչափ առքի և վաճառքի ժամանակ...»<sup>32</sup>: Հասկանալի է, որ տնտեսագիտական եզրույթ է, թեև նշումը բացակայում է բառարանում: Ընդ որում, բազմիմաստ է: Ըստ Հր. Աճառյանի և Գ. Ջահուկյանի՝ իրանական փոխառություն է<sup>33</sup>:

Ը) Գրաբարյան շրջանում որոշ գիտակարգերի դեպքում արդեն իսկ առկա է ոչ միայն եզրույթը, այլև եզրութահամակարգը՝ ախտ-ախտաբար-ախտաբեկ-ախտաբեր-ախտաբորբոք-ախտագործ-ախտաժետ կամ ախտաժետ-ախտաժետել-ախտաժետություն կամ ախտաժետություն-ախտալից-ախտաճք-ախտական կամ ախտային-ախտակիր-ախտակից-ախտակրական-ախտակրել-ախտակրություն-ախտակցաբար-ախտակցագոյն-ախտակցել-ախտակություն-ախտահալած-ախտահաւաք-ախտամարտ-ախտամոլի-ախտամոլութիւն-ախտանալ-ախտանկեալ-ախտասէր-ախտասիրել-ախտասիրութիւն-ախտասպան-ախտարծարծ-ախտամոլ-ախտացուցանել-ախտաւոր-ախտաւորաբար-ախտաւորագոյն-ախտաւորութիւն»<sup>34</sup>:

<sup>27</sup> ԳԲ, հ. 1, էջ 496:

<sup>28</sup> ԳԲ, հ. 2, էջ 604:

<sup>29</sup> Նույն տեղում:

<sup>30</sup> Նույն տեղում:

<sup>31</sup> Նույն տեղում:

<sup>32</sup> ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 667:

<sup>33</sup> Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4, Եր., 1926, էջ 512: Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, ց.1, Եր., 2010, էջ 766:

<sup>34</sup> ԳԲ, հ. 1, էջ 19-20:

Ժամանակակից հայերենում այս եզրութահամակարգից որոշ ձևեր դուրս են մղվել: Եզրութահամակարգը համալրվել է նորակազմություններով: Սակայն անհերքելի է գրաբարյան բառաշերտի միջուկային հենքը: Այսպես՝ գայլախտ, գեղձախտ(ավոր), դալկախտ, դեղնախտ, թոքախտ (-աբույժ, -ահար, -ային, -ավոր, -ություն), թոքախտաբուժություն, թաքախտահարություն, թոքախտավորություն, ժանտախտ, թոքերի ժանտախտ, լնդախտ (-ային, -ավոր), իլնախտ, խոզախտ, ծաղկախտ, կաթնասնկախտ, կանաչախտ, կարծրախտ (-ային), կարկամախտ, կարմրախտ, հյուծախտ՝ ծյուրախտ (-ավոր), շաքարախտ, ոսկրախտ, պալարախտ, պրկախտ, ջերմախտ, սիբիրախտ, սնկախտ, փտախտ (-ային), ախտաբան (-ական, -ություն), բջջային ախտաբանություն, ախտադարձություն, ախտահանիչ (միջոց), ախտորոշաբանական, ախտորոշել, ախտորոշում ևն<sup>35</sup>:

Գիտության զարգացման սրընթաց առաջընթացով պայմանավորված՝ ժամանակակից արևելահայերենում նոր և նորագույն գիտաճյուղերի բազմաթիվ եզրութներ փոխառյալ են մնում: Հասկանալի է, որ գրաբարյան շրջանում այդ բնագավառների եզրութային բառաշերտը բացակայում է, սակայն ճիշտ լեզվաքաղաքականություն վարելու դեպքում օտարաբանությունների փոխարեն հայերենում մեծ մասամբ գրաբարյան և հետգրաբարյան, նաև արևմտահայերեն\* բառապաշարի շնորհիվ կարող ենք ունենալ եզրութների հայեցի տարբերակները: Վիճելի է մնում այն խնդիրը, թե գրաբարում էլ հնագույն փոխառությունները հարստացրել են մեր եզրութային բառաշերտը: Այդ դեպքում ինչո՞ւ արդի շրջանում դրանք չեն կարող ազատորեն ներթափանցել մայրենի լեզու: Մեր կարծիքով, այն պարզ հիմնավորմամբ, որ հայերեն լեզվակիրների քանակը խիստ պակասել է, ուստի գիտական լեզվի, մասնավորապես եզրութաբանական բառաշերտի կանոնարկման, զարգացման նպատակով պետք է հնարավորության դեպքում նախապատվությունը տալ հայերեն կազմություններին, իսկ գրաբարը հարուստ շտեմարան է այս առումով: Պետք է հետեվողական ու նախանձախնդիր լինել, աշխատանքները կազմակերպելիս միավորել հայագետների և գիտության բոլոր ճյուղերի լավագույն ու հայրենանվեր մասնագետների ուժերը:

Այսպիսով՝ գրաբարից ժամանակակից արևելահայերենի գիտական բառաշերտ անցած եզրութների իմաստային դաշտերի փոփոխությունների քննության արդյունքում սույն հոդվածում կատարել ենք հետևյալ եզրահանգումները. նախ՝ հայերենի բառապաշարի եզրութացման գործընթացը կատարվել է ոչ

<sup>35</sup> Մ. Թենքեջյան, Անգլերեն - հայերեն, հայերեն - անգլերեն բժշկագիտական տերմինների բացատրական բառարան, Եր., 2007:

\* Ի դեպ, արևմտահայերենից ներքին փոխառության ճանապարհով եզրութային բազմաթիվ հաջողված և յուրացված ձևեր ունենք ժամանակակից արևելահայերենում՝ եզրութ, համութ, կայքեջ ևն:

միայն նախագրաբարյան, այլև հետգրաբարյան շրջափուլերում: Ապա՝ եզրութացումը կատարվել է գրաբարում **բառ** → ժամանակակից հայերենում **եզրույթ**, կամ գրաբարում **եզրույթ** → ժամանակակից հայերենում **եզրույթ**, գրաբարում, նաև ժամանակակից հայերենում **և՛ բառ, և՛ եզրույթ** իմաստային անցման, վերաիմաստավորման ճանապարհով: Ժամանակակից արևելահայերենում եզրութային նորակազմությունները համարել են ոչ միայն նույն, այլ նաև նոր և համանուն եզրութային արտահամակարգերի շարքերը:

Ազգային լեզվով եզրութաբանության զարգացման գործընթացը պահանջում է պետական հոգածություն՝ ճիշտ լեզվաքաղաքականություն, մասնագետների գործունե մասնակցություն, ինչը բարդ է և ժամանակատար: Մայրենիով եզրութաբանությունը կարող է առաջացնել տարբերություններ գիտական և կիրառական լեզուների միջև, ինչը կարող է դժվարացնել միջազգային համագործակցությունը և հաղորդակցությունը: Ուստի, ազգային լեզվով եզրութաբանական համակարգի զարգացումը կարևոր է տվյալ լեզվի և մշակութային պահպանման, գիտելիքի տարածման և լեզվական ինքնավարության ապահովման համար, բայց ունի որոշակի մարտահրավերներ, որոնք պահանջում են հավասարակշռված և ռազմավարական մոտեցում:

**КАРИНЕ МИКАЕЛЯН – Грабар как источник терминального пласта слов современного восточноармянского языка.** – В результате исследования изменений в семантических полях терминов, перешедших из грабара в научный лексикон современного восточноармянского языка, в данной статье мы пришли к следующим выводам. Во-первых, процесс терминации лексикона армянского языка проходил не только в дограбарской, но и в послеграбарской эпохах. Далее, терминация происходила путем смыслового перехода, переосмысления **слова** в грабаре → **термина** в современном армянском, или **термина** в грабаре → **термина** в современном армянском, а также **и слова, и термина** как в грабаре, так и в современном армянском. Терминальные неологизмы в современном восточноармянском пополнили ряды не только одинаковых, но и новых и омонимичных внешних терминальных систем.

Процесс развития терминологии на родном языке требует вклада со стороны государства, а именно — правильной языковой политики, действенного участия специалистов, что сложно и требует много времени. Терминология на родном языке может создавать различия между научным и прикладным языками, что может затруднять международное сотрудничество и коммуникацию. Следовательно, развитие терминологической системы на родном языке важно для сохранения данного языка и культуры, распространения знаний и обеспечения лингвистической автономии, однако оно подразумевает определенные вызовы, которые требуют уравновешенного и стратегического подхода.

**Ключевые слова:** *грабарские термины, внутренние терминальные заимствования, расширение семантического поля, терминация слов, система терминов, термины-омонимы, развитие и стратегия терминальной системы на родном языке*

**KARINE MIKAYELYAN – Old Armenian (Grabar) as a Source of Developing Terms in Modern Eastern Armenian Vocabulary.** – In the result of the research carried out on the changes in the semantic fields of terms which have passed from Grabar to Eastern Armenian vocabulary, in the present article the following conclusions have been drawn: firstly, the process of creating

terms in Armenian could be observed not only in the pre-Grabar, but also in the post-Grabar periods. Secondly, in Grabar creating of terms was carried out through semantic transition or reinterpretation such as **word** in Grabar- into **term** in modern Armenian, **term** in Grabar into **term** in modern Armenian or **word** and **term**, both in Grabar and in modern Armenian. In modern Eastern Armenian, new created terms were added not only to the same, but also to the new and homonymous terminological exterior systems.

The process of developing terminology in the national language needs great care, such as correct language policy, active participation of professionals, which is complicated and time consuming. Terminology in the mother tongue may produce differences between the scientific and applied languages creating difficulties in international cooperation and communication. Therefore, the development of the terminological system in the native language is of great importance for preserving culture, spreading knowledge and providing language autonomy, but there are still several challenges that call for balanced and strategic approach.

**Key words:** *Grabar terms, internal terminal borrowings, expansion of semantic field, termination of words, term system, homonymous terms, development and strategy of terminological system in the mother tongue*

## ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԴԱՇՏԻ ԲԱՌԵՐԸ ԸՍՏ «ԿԱՆՈՆՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ»

ՎԱՐԴՈՒՅԻ ԲԱՐՍԵՂՅԱՆ\*

V դարի եկեղեցական գործիչ Հովհան Մանդակունին մեզ է թողել ստեղծագործությունների հարուստ ժառանգություն: Բացի հոգևոր երգերից, ճառերից, խրատներից ու շարականներից, նրա անունով մեզ հայտնի են առանձին հոդվածների բաժանված եկեղեցաբանական և կրոնաբանական ինը կանոններ, որոնք զետեղված են «Կանոնագիրք Հայոց»-ի էջերում: Դրանք թույլ են տալիս հասկանալ ժամանակի եկեղեցական կյանքի սովորույթները, տարածված օրենքներն ու դրանց խախտումների համար սահմանված պատիժները, ինչպես նաև նկատել գրաբար բնագրի առանձնահատկությունները՝ լեզվաբանական տեսանկյունից:

Սույն հոդվածում քննվել են «Կանոնք Յովհաննու Մանդակունույ Հայոց Կաթողիկոսի» երկում տեղ գտած իրավունքի իմաստային դաշտին պատկանող բառերը: Քննությունը ցույց է տվել, որ իրավունքին վերաբերող բառապաշարը հիմնականում ներառում է իրանական փոխառություններ, ինչպես նաև բնիկ հնդեվրոպական արմատներից սերվող բառեր, որոնք շարունակում են արդի մնալ նաև արևելահայերենում: Հիբրիդային կազմավորումները կանոններում սակավ են, իսկ դարձվածային միավորները հիմնականում բայական են: Չնայած բնագրային տեքստի հակիրճությանը, քննության արդյունքում բացահայտվել և տրվել են իրավունքի ոլորտին առնչվող 32 բառ և դարձվածային միավորներ: Ուսումնասիրված բառերի իմաստաբանական և ստուգաբանական առանձնահատկությունները բացահայտում են գրաբարի այս շրջանի լեզվաբանական դրսևորումները և կարգայնացումները:

**Բանալի բառեր** - *Հովհան Մանդակունի, կանոններ, իրավունքի իմաստայի դաշտի բառեր, իմաստաբանություն*

\* **Վարդուհի Բարսեղյան** – ԵՊՀ հայոց լեզվի պատմության և ընդհանուր լեզվաբանության ամբիոնի ապիրանտ

**Вардuhi Барсегян** – Аспирант кафедры истории армянского языка и общего языкознания ЕГУ

**Varduhi Barseghyan** – PhD student at YSU Chair of the Armenian Language History and General Linguistics

Էլ. փոստ՝ [varduhy.barseghyan@gmail.com](mailto:varduhy.barseghyan@gmail.com).



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Մտացվել է՝ 22.05.2024

Գրախոսվել է՝ 11.06.2024

Հաստատվել է՝ 14.06.2024

© The Author(s) 2024



Ոսկեդարի հոգևոր հայր, հայ ականավոր եկեղեցական գործիչ Հովհան Մանդակունին 478-490-ական թվականներին եղել է Ամենայն Հայոց կաթողիկոսը<sup>1</sup> իր գիտելիքներն ու հայրապետական ուժը ծառայեցնելով հայրենիքի բարօրությանը: Հայոց եկեղեցին առաջնորդել այնպիսի բարդ ժամանակաշրջանում, ինչպիսին Մասանյան Պարսկաստանի բռնապետության դեմ տարվող Վահանանց պատերազմն էր, կարող էր միայն հմտավոր և ներկուռ հովվապետը: Այն իրավիճակում, երբ երկիրը գտնվում էր ոչ միայն արտաքին ուժերի հալածանքների և ճնշումների, այլև ներքին դավադրական հարձակումների և խարդավանքների մեջ, Հայոց կաթողիկոսը, քաջ գիտակցելով ստեղծված դժվարին կացությունը, փորձում է հաշտեցնել ներքին ընդվզումը՝ երկու կողմերին էլ կոչ անելով համաժողովրդական միասնության և համերաշխության: Մանդակունու ոգեպնդող խոսքը՝ ուղղված հայ մարտիկներին, տեղ է գտել Ղազար Փարպեցու «Պատմության» էջերում: Նրա ջանքերով վերակառուցվել են Վաղարշապատի և Դվինի տաճարները, հաստատվել են Հայոց եկեղեցու արարողական նշանավոր գրքերի՝ Ժամագրքի, Մաշտոցի, Պատարագամատուցի կարգերը, ստեղծվել մատենագրական հարուստ ժառանգություն: Վերջինիս թվում են Մանդակունու գրած հոգևոր երգերը, քարոզները, ճաները, շարականներն ու աղոթքները: Հատկանշական են թարգմանիչներին նվիրված շարականները:

«Կանոնագիրք Հայոց»-ը եկեղեցաբանության, հոգևորականների վարքագծի, պաշտամունքի, հայ ավատատիրական հասարակության համակեցության ձևերի, հասարակության անդամների փոխհարաբերությունների, ամուսնության, ընտանիքի, ժառանգության և այլ հարաբերությունների կարգավորման նորմերի ժողովածու է, որի Ա հատորում տեղ են գտել նաև Հովհան Մանդակունու անունով մեզ հասած ինը կանոնները՝ բաժանված առանձին հոդվածների: Կա նաև մի առանձին, ընդարձակ տասներորդ կանոն, որը նույնպես վերագրվում է նրա գրչին, և որն արգելում էր անուսների և անարժանների ձեռնադրությունը<sup>2</sup>: Վկայված ինը կանոններն ունեն ծիսական, եկեղեցական, դավանաբանական արժեք: Սովորաբար կանոնները ստեղծվում էին որևէ եկեղեցական ժողովի արդյունքում՝ հաստատելու այն, ինչ քննարկվել կամ ընդունվել էր ժողովի ժամանակ: Ստեփանոս Օրբելյանը հիշատակել է Շահապիվանում Հովհաննես Մանդակունու մասնակցությամբ կայացած մի ժողով, որը, ըստ հեղինակի, կայացել է պարսից Հազկերտ թագավորի ժամանակներում: Սա չի կարող նույնանալ Վասակ Սյունու մարզպանության ժամանակ հրավիրված Շահապիվանի ժողովին և ոչ էլ Հազկերտի ժամանակաշրջանին, ուստի աստվածաբան, հայագետ, պատմաբան և բանասեր Մադաթիա Օրմանյանի այն եզրակացությունը, թե Ստեփանոս Օրբելյանի հիշատակած Շահապի-

<sup>1</sup> «Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա», հ.1, Եր., 2007, էջ 843:

<sup>2</sup> «Կանոնագիրք Հայոց», հատոր Ա, Եր., 1964, էջ 641:

վանի ժողովը հավանաբար հրավիրվել է պարսից Վաղարշ թագավորի գահակալության տարիներին, ամեննին չի բացառվում: Մանդակունու ինը կանոնների համաձայն՝ շաբաթն ու կիրակին հռչակվում էին պահքից ազատ օրեր, զինին, ձեռն ու ձուկը դասվում էին թույլատրելի ուտելիքների շարքին, մարտիրոսների տոները չորեքշաբթի և ուրբաթ օրերին նշելը համարվում էր մեղք, Քրիստոսի Հայտնությունն ու Ծնունդը նշվում էին միասին և այլն: Մանդակունին այս ինը կանոններում համակարգում է այդ շրջանում քրիստոնեական եկեղեցու արարողակարգերում տարածված կարևորագույն արգելքներն ու սահմանափակումները:

Վազգեն Հակոբյանի աշխատասիրությամբ կազմված «Կանոնագիրք հայոց»-ի քննական բնագրում տեղ գտած այս կանոնների հիմքը Մատենադարանում պահվող № 659 և № 948 ձեռագրերն են: Վերջին ձեռագրում տարբեր վերնագրերով պահպանվել են Հովհան Մանդակունու կանոնախմբի երկու ընդարձակ հատվածներ, որոնք բաժանված չեն առանձին հոդվածների: Դրանք տարբեր ժամանակներում գրված, բուն կանոններից առանձին գոյություն ունեցած և անկախ գործածված բնագրեր են: Կանոնախմբի Դ, Է, Ը, Թ հոդվածները որոշ շեղումներով հանդիպում են նաև «Գիրք թղթոց»-ում: № 659 ձեռագրում պահպանված է այլ վերնագիր՝ «Յոհաննու Մանդակունոյ ի խրատս եկեղեցոյ համառատ բան» (263 ք): Այս վերնագիրը կարող է վկայել, որ շարադրված նյութերը եկեղեցական հարցերին վերաբերող համառոտ խրատներ են: Ենթադրելի է, որ ձեռագրի գրիչ Մաղաքիան այն վերցրել է ոչ թե անմիջապես Կանոնագրքի համապատասխան բնագրից, այլ Կանոնագրքից անկախ գոյություն ունեցող մեկ այլ բնագրից<sup>3</sup>:

Թեև կանոնները սակավ են, համառոտ և կտրուկ, այնուամենայնիվ բառապաշարի ուսումնասիրության տեսանկյունից ունեն հետաքրքրական կառուցվածք: Անդրադառնալով կանոնախմբում տեղ գտած իրավունքի իմաստային դաշտին պատկանող բառերին՝ պետք է նշենք, որ այդ բառերը մեծամասամբ օգտագործվում են կրոնական, եկեղեցական համատեքստում, որը բխում է կանոնախմբի բուն բովանդակությունից: Նմանօրինակ բառերը կանոնախմբում այնքան էլ շատ չեն: Դուրս ենք գրել **32** բառեր և դարձվածային միավորներ, որոնց կանոնադաշտնաք հաջորդիվ: Նշենք, որ սույն աշխատանքում ուսումնասիրված բառերի իմաստային դաշտերը համեմատել ենք հայր Մկրտիչ Ավգերյանի «Առձեռն բառարան հայկազենան լեզուի» (Վենետիկ, 1846) և հայր Մկրտիչ Ավգերյանի, հայր Գաբրիել Ավետիքյանի, հայր Խաչատուր Սուրմելյանի աշխատասիրությամբ կազմված «Նոր բառգիրք հայկազենան լեզուի» (Վենետիկ, 1836-1837) բառարաններով, իսկ դարձվածային միավորներինը՝ Ռուբեն Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարան»-ով (Եր., 2012):

<sup>3</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 643:

Ուսումնասիրությունը սկսենք **կանոն** բառից, որը բառարաններում բացատրվում է «կարգ, օրենք, օրինակ, կրոնական պատիժ, կրոնական կամ եկեղեցական օրենք»։ Ըստ Հր. Աճառյանի՝ այն ծագել է հունարեն **κανόνας** բառից, որը նշանակում է «եղեգի ցողուն», և հետզհետև նույն նախնական իմաստից բխելով ստացել նաև «ձև, օրենք (առավելապես՝ եկեղեցական), կանոն, ցուցակ» իմաստները<sup>4</sup>։

Ուսումնասիրության արժանի հաջորդ բառը **քարոզել** բայն է։ «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի» բառարանում այս բառը, բացի մեզ հայտնի իմաստներից, ունի նաև «հրատարակել» իմաստը։ Իսկ ՆՀԲ-ում այն ունի նաև «քարոզ լինել պատգամաց թագավորի» իմաստը։ Բառի արմատը՝ **քարոզ**-ը, ըստ Հր. Աճառյանի, ասորերեն փոխառություն է՝ առաջացած **\*karoza** բառից, որ նշանակել է «հրավիրակ, քարոզ», իսկ **\*keraz** բառից՝ «քարոզել, հրապարակաւ ծանուցել»<sup>5</sup>։ ՆՀԲ-ում «քարոզ» բառն ունի «պատժիչ, պատգամամաց և հրամանաց թագավորի, զօրավարի, քաղաքապետի», Առձեռն բառարանում՝ «ծանուցում», ինչպես նաև «ճառ, խրատ» իմաստները։

**Սպաշխարել** բառը բառարաններում բացատրվում է «մեղքը լալ, զոջալ ի վերայ գործեալ սխալանաց»։ Ըստ Գ. Ջահուկյանի՝ բառը փոխառված է իրանական աղբյուրներից<sup>6</sup>։

**Ճանաչել** բառը կարող է նշանակել նաև «ծանուցել»։ Բայի բնիկ հնդեվրոպական, ինքնուրույն գործածությունն չունեցող «ծան»՝ **\*g'en-** արմատը նշանակել է «ճանաչել, իմանալ»<sup>7</sup>։

**Հրաման** բառը, որ իրանական փոխառություն է, նշանակում է «պատվեր, վճիռ»<sup>8</sup>։

**Աւրինադրել** բայն Առձեռն բառարանում հանդես է գալիս «օրենք դնել, կարգ, կանոն սահմանել» իմաստներով։ Կանոններում հանդիպում է նաև «**աւրենք**» բառը, որ նույն բառարանում նշանակում է «կարգ, կանոն՝ աստվածային կամ մարդկային, իրաւունք»։ Ինչպես տեսնում ենք, **օրենքի** իմաստային դաշտերը շատ հաճախ հասվում էին կրոնի իմաստային դաշտերին, կամ դրանց իմաստներում պարտադիր երևում են կրոնական առանձնահատկությունները։ Դրա պատճառն, այն էր, որ միջնադարում դրանք միաձույլ էին։ Սովորաբար «աւրենք» ասելով հենց առաջին հերթին հասկացվում էր Աստծո խոսքն ու պատգամը, որոնց չկատարումն էլ հանգեցնում էր համապատասխան պատժի։ Մեղսագործությունը հիմնականում առնչվում էր եկեղեցական այս կամ

<sup>4</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. Ա, Եր., 1926, էջ 515։

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 563։

<sup>6</sup> Գ. Ջահուկյան, Հայերեն ստուգաբանական բառարան, Եր., 2010, էջ 67։

<sup>7</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 359։

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 470։

այն կանոնի խախտմանը: «Աւրէն» արմատը փոխառված է միջին պարսկերենից՝ **awδēn**<sup>9</sup>: Երկուս վերոնշյալ երկու բառերը հանդես են գալիս «*աւրինադրել հրաման*» արտահայտության մեջ, որ նշանակում է «վճիռ սահմանել»:

**Կնքել** բառը նույնպես մեզ հայտնի «դրոշմել, մկրտել» իմաստից գատ, Առձեռն բառարանում հանդես է գալիս նաև «վճռել, հաստատել» իմաստներով, իսկ դրա «**կնիք**» արմատը ակկադական փոխառություն է<sup>10</sup>:

Բնիկ հնդեվրոպական **\*oneid-s-**, **\*(o)neid** «նախատել, հանդիմանել» արմատից ծագած<sup>11</sup> **անէծք** բառը սաստկագույն պատիժներից էր, ուստի նշանակում էր «չարաբանություն առ ի վնաս և ի պատիժ»:

**Կարգել** բառի վերաբերյալ Գ. Ջահուկյանն ասում է, որ ծագումն անհայտ է, կարող է նշանակել «սահմանել, օրինադրել, որոշել»: Մանդակունու կանոններում գտնում ենք «նգովս կարգեցին և կնքեցին» արտահայտությունը, որը վերոնշյալ բառերի իմաստային դաշտի շրջանակներում կարող է նշանակել «անէծքներ վճռելով և սահմանելով պատժել»: Կանոններում գտնում ենք նաև **կարգաւորել**՝ «ի կարգի դնել» բայը, **անկարգութիւն** բառը՝ «խառնակութիւն», նույն «կարգ» արմատից:

**Անհեղեղ** բառը, որ նույն «անհեթեթ»-ն է, նշանակում է «անկարգաբար»:

**Վկայել** բայը Առձեռն բառարանում բացատրվում է որպես «վկայ ըլլալ», իսկ ՆՀԲ-ում՝ նաև «վկայութիւն տալ, հաստատել զճշմարտութիւն»: Գ. Ջահուկյանը այս բառի «վկայ» արմատը համարում է իրանական աղբյուրից փոխառություն<sup>12</sup>: Կանոններում հանդիպում է նաև **վկայութիւն** բառը, որ նշանակում է «ուխտ և խոստումն Աստուծոյ, օրէնքը՝ իրաւունքը»:

**Քննել** բառը, որի «քնին» արմատի ծագումն անհայտ է, նշանակում է «զննել, խուզարկել, դատել, իրերի հանգամանքներն ու պատճառները կրկնել»:

Կանոններից դուրս գրված՝ իրավունքի իմաստային դաշտին պատկանող բառերից հետաքրքրական է **զեղխիլ** բայը: Առձեռն բառարանում բայի համար տրված են «չափն անցնելով սխալիլ», իսկ ՆՀԲ-ում՝ «յանցանել, սխալել» իմաստները: Բայի «զեղխ» արմատը, որ նշանակում է «անառակ, ցոփ», ըստ Գ. Ջահուկյանի, կարող է գ-հեղիս կազմությամբ կապ ունենալ հնդեվրոպական **\*pel-**՝ «թափահարել, դողալ» արմատի հետ<sup>13</sup>:

**Կամք** բառն ունի «բանական հոժարություն, անձնիշխան և ազատ ընտրության կարողություն» իմաստները: Իրանական փոխառություն է:

Իրավունքի բառապաշարի կենտրոնական և բազմակի գործածություն ունեցող բառերից մեկը՝ **մեղք**-ը, ևս հանդիպում է Մանդակունու կանոններում:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 104:

<sup>10</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 412:

<sup>11</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 56:

<sup>12</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 712:

<sup>13</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 236:

Բառարաններում այն բացատրվում է «յանցանք, անիրաւութիւն, ապիրատութիւն» իմաստներով: Բառի արմատը ծագել է բնիկ հնդեվրոպական *\*mel-* «սխալվել, խաբել» արմատից: Կանոններում առկա է նաև **անմեղ** բառը, որ նշանակում է «առանց մեղքերի, արդար»:

**Աւագակ** բառը Առձեռն բառարանում բացատրվում է որպես «յայտնի գող, թալլող, մարդ զարնող ճամբու վրայ»: Իրանական փոխառություն է:

**Պատիժ** բառը ևս իրանական փոխառություն է: Նշանակում է «փոխարեն հատուցում կամ տուգանք յանցանաց, տանջանք»:

**Դիւահար** բառն իր կազմությամբ խառնանդամ է (բառը կազմող բաղադրիչները տարբեր ծագում ունեն)՝ «դեւ» արմատը իրանական փոխառություն է, իսկ «հար»-ը՝ բնիկ հնդեվրոպական: Բառարաններում բառին տրված է «այսակիր, դիւալլուկ, սատանայ ունեցող» իմաստները:

Ինչպես վերը նշեցինք, Հովհանն Մանդակունու ինը կանոնների բնագրից առանձնացրել ենք նաև իրավունքի իմաստային դաշտին պատկանող **8** դարձվածային միավորներ: Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձուածաբանական բառարանի» համեմատությամբ քննել ենք դրանց իմաստային առանձնահատկությունները:

*Ծունր դնել*՝ ծնրադրել, ծնկի գալ: Բնագրում առկա է նաև ծունր կրկնել դարձվածային միավորները, որը նույնն է, ինչ նախորդը՝ «...ծունր կրկնել ոչ հրամայեցին, այլ յաղաթս կալ» (էջ 493): Ինչպես բերված օրինակից երևում է, ծնրադրելը ևս համարվել է պատժի միջոց:

Վերոնշյալ բնագրային օրինակում դարձվածային միավոր է նաև *յաղաթս կալ*-ը՝ աղոթելը, որը մեղքերի համար հաճախադեպ կիրառվող պատիժներից էր:

*Ջանց առնել*՝ անուշադրության մատնել, անտեսել: Բնագրում՝ «արդ զոր սոցա կարգաւորեալ է, մարգարէից եւ առաքելոց վկայութեամբ չէ պարտ ումէք *զանց առնել*» (էջ 497):

*Յիշատակ առնել*՝ հիշատակել, արձանագրել մի դեպք կամ անուն, ինչպես նաև վկայակոչել, անունը տալ:

*Դատարկանայ ի գործոյ*՝ զբաղմունք չունենալ, անգործ լինել:

*Ի կենաց արկանել*, որ նշանակում է կյանքից զրկել, սպանել:

*Անէծս ի վերայ դնել*՝ որպես պատիժ կիրառել անեծքը: Ինչպես արդեն նշեցինք, անեծքը պատժի խստագույն տեսակներից էր:

Ամփոփելով կարող ենք արձանագրել, որ Հովհան Մանդականու այս ինը կանոններում առկա իրավունքի դաշտին պատկանող բառերը իրենց ծագմամբ հիմնականում իրանական փոխառություններ են: Մակավ չեն նաև բնիկ հնդեվրոպական արմատից կազմված բառերը: Հիբրիդային կազմությունները գրեթե բացակայում են: Դարձվածային միավորները մեծամասամբ բայական են:

**ВАРДУИ БАРСЕГЯН** – *Слова семантической области права согласно «Правилам армянского католикоса Ованнеса Мандакуни»*. – Ованнес Мандакуни занимает значительное место в армянской истории V века. Как католикос, он не только преданно служит своей родине, но и оставляет замечательное литературное наследие. Под его именем сохранены девять канонов с церковным содержанием, которые дают понимание обычаев, законов и соответствующих наказаний церковной жизни того времени. Анализ этих канонов показывает, что словарь, касающийся права, в основном состоит из иранских заимствований, наряду с заметным присутствием слов, происходящих от корней родного индоевропейского языка, которые продолжают быть актуальными в современном восточноармянском языке. Гибридные образования редки, и фразеологические единицы в основном состоят из глаголов. Несмотря на краткость исходного текста, были выделены и описаны 32 слова и фразеологические единицы, относящиеся к области права.

**Ключевые слова:** *Ованнес Мандакуни, правила, лексика в семантическом поле права, семантика, этимология*

**VARDUHI BARSEGHYAN** – *The Words of the Semantic Field of Law According to the "Rules of Armenian Catholicos Hovhannes Mandakuni"*. – Hovhannes Mandakuni holds a significant position in Armenian history during the 5th century. As a Catholicos, he not only dutifully serves his homeland but also leaves behind a remarkable literary legacy. Under his name, nine canons with ecclesiastical content are preserved, offering insights into the customs, laws, and corresponding punishments of the era's church life. Analysis of these canons reveals that the vocabulary pertaining to law primarily comprises Iranian borrowings, alongside a notable presence of words derived from native Indo-European roots, which continue to be relevant in modern Eastern Armenian. Hybrid formations are scarce, and phraseological Unit predominantly consist of verbs. Despite the concise nature of the original text, 32 words and phraseological units pertinent to the field of law have been identified and delineated.

**Key words:** *Hovhannes Mandakuni, rules, vocabulary in the semantic field of law, semantics*

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1  
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1  
Address: 1, Alex Manoogian str., Yerevan

Չայք՝ [journals.ysu.am](http://journals.ysu.am)  
Էլ. փոստ՝ [ephbanber@ysu.am](mailto:ephbanber@ysu.am)

Հեռ. 060 710 218, 060 710 219

Հրատարակչական խմբագիր՝ Издательский редактор Publishing Editor	Արմեն Հովակիմյան Армен Овакимян Armen Hovakimyan
Վերստուգող սրբագրիչ՝ Контрольный корректор Proofreader	Գայանե Գրիգորյան Гаяне Григорян Gayane Grigoryan
Թողարկման պատասխանատու՝ Ответственный выпуска Issued by	Հասմիկ Եսայան Асмик Есаян Hasmik Yesayan

Ստորագրված է տպագրության 17. 06. 2024: